ԱԶԱՏԱԳՐՈՒՄ
ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
www.azatagrum.arakskur.org ; azatagrum@netsys.am , հեռ՝ (010) 51 61 68 , (093) 36 57 81
Դ
#3(4)
ՀՈՒԼԻՍ
2006

ԵՐԿՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Որոշ քաղաքական ելույթներ լսելիս կամ մամուլն ընթերցելիս երբեմն տպավորություն է ստեղծվում, թե դրանց հեղինակները լուսնի վրա են ապրում:

Երկրով մեկ խոսվում է տարածքներ հանձնելու, նոր հանրաքվեի և խաղաղապահներ տեղակայելու անթույլատրելիության մասին, իսկ բարձրաստիճան պաշտոնյաները և նրանց սպասարկող որոշ «մտավորականներ», հիշ-ականների հետ միաձայն, փորձում են մեզ համոզել, թե բոլոր այդ կետերը պարունակող Սինսկի խմբի առաջարկությունը միանգամայն ընդունելի է: Փաստորեն, նույն քաղաքում կողք կողքի ապրում են մարդիկ, որոնք համոզված են, որ զիջելը սպառնում է մեր գոյությանը և դավաճանություն է, և այնպիսիները, որոնք ժամ առաջ ուզում են ազատվել Ղարաբաղ կոչվող «գլխացավանքից»:

Նույն բևեռացումն ենք տեսնում բազմաթիվ այլ հարցերի շուրջ: Պե՞տք է արդյոք սատարենք Ջավախքի արդարացի պահանջներին, թե՞ լուռ նայենք՝ ինչպես է այն հայաթափվում, միայն թե Վրաստանը հանկարծ չնեղանա ու ճանապարհը փակի (թեև պարզ է, որ այդ ճանապարհը կփակվի հենց այն օրը, երբ վերջին ջավախքցին հեռանա երկրամասից): Չեղյալ հայտարարե՞նք 1921թ. Կարսի պայմանագիրը, թե՞ վերջնականապես ճանաչենք Արևմտյան Հայաստանի պատկանելիությունը Թուրքիային, որպեսզի այնտեղից ներմուծվող ապրանքները մի քանի դրամ էժանանան: Այս վեճերի կողմերը մեկը մյուսին համապատասխանաբար դավաճան և ծայրահեղական են կոչում՝ հաճախ կասկածի տակ դնելով միմյանց մտավոր կարողությունները: Եվրաինտեգրման մասին երազողներն ապուշ են կտրում, երբ տեսնում են դրա դեմ բացահայտ արտահայտվող մեկին: ՆԱՏՕ մտնողները և ռուսների հետ «գործակցողներն» իրենց վեճը կիսատ են թողնում և ծիծաղում այն «միամտի» վրա, ով պնդում է, թե Հայաստանը պետք է ընդհանրապես հրաժարվի արտաքին կողմնորոշումներից:

Ներքին հարցերում նույնպես գոյություն ունեն միմյանց չհասկացող երկու աշխարհներ: Դրանցից մեկում ապրողները կուսակցություն-կուսակցություն են խաղում, խոսում են ժողովրդավարությունից և մարդու իրավունքներից, հպարտանում տնտեսական աճով կամ մերժում դրա գոյությունը, քննադատում են կոռուպցիան կամ ձևացնում, թե պայքարում են դրա դեմ:

Նրանք իրենց վերացական աշխարհից չեն էլ նկատում այն մյուս՝ իրական աշխարհը, որտեղ կա մի Հայրենիք ու մի հինավուրց ժողովուրդ, որի օրինական ժառանգը և առաքելության շարունակողն իրենք կարող էին լինել, եթե մի փոքր ջանային հասկանալ, թե որն է այդ ժողովրդի հարատևության գաղտնիքը: Սակայն նրանց անցյալը, լավագույն դեպքում, սկսվում է իրենց ծնունդով, իսկ ապագան՝ ավարտվում սեփական մահով: Այդ ժամանակավոր մարդիկ իրենց ժամանակավոր տրամաբանությամբ տեսնում են միայն այն, ինչը կարող են տեսնել ֆիզիկական աչքերով: Նրանք չեն սնվում իրենց արմատներից և մտահոգված չեն ճյուղերի ճակատագրով: Նրանց հայրենիքը հայրերի աշխարհակենտրոն երկիրը չէ, այլ սոսկ մի տարածք, որտեղ իրենք դժբախտություն են ունեցել ծնվելու, և որն իրենց հնարավորություն չի տալիս լիովին վայելել իրենց ժամանակավոր կյանքը: Հավերժության զգացում չունեցողների համար ազգային հարցերը գլխացավանք են միայն: Նրանք աշխարհին տալու ոչինչ չունեն, որովհետև նրանց փնտրածը րոպեական հաճույքն է ու բարեկեցիկ մահը:

Այս հիվանդ աշխարհը շատերին է վարակել: Փորձենք բուժել, դարձի բերել մեր, այնուամենայնիվ, հայրենակիցներին: Դավաճան չհամարենք նրանց, այլ՝ մոլորյալ: Ճանաչել տանք նրանց մեր՝ իրական աշխարհը, զինենք հայրենիքի զորությամբ, որպեսզի եթե ոչ իրենք, ապա գոնե իրենց զավակները մեզ հետ վայելեն իրական Հայաստանը:

ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Երբևէ մտածե՞լ ենք, թե որոնք են Հայաստանի պաշտոնական արտաքին քաղաքականության առաջնահերթ հարցերը: Եթե այս մասին հարցնենք Հայաստանի արտգործնախարարին, ապա, հավանաբար, կստանանք հետևյալ պատասխանը՝ Ղարաբաղյան կարգավորում, Ցեղասպանության ճանաչում, եվրաինտեգրում, անդամակցում միջազգային տարբեր կառույցներին և նրանց նախապայմանների կատարում, փոխլրացման քաղաքականություն, վարկերի և ներդրումների հայթայթում և նույնիսկ համագործակցություն Սփյուռքի հետ: Փոխարենը՝ նա, ամենայն հավանականությամբ, չի էլ հիշատակի հարևան Իրանի միջուկային ծրագրի հետ կապված խնդիրը կամ այն, որ Միացյալ Նահանգները չեն վավերացրել արտանետումների վերաբերյալ Կիոտոյի համաձայնագիրը: ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի բարեփոխումները, պաղեստինահիսրայելական կամ աբխազավրացական հարաբերությունները նույնպես չեն հիշատակվի: Այլ կերպ ասած, մեր արտաքին գերատեսչությունն ընդհանրապես չի զբաղվում համաշխարհային խնդիրներով: Հայաստանը նույնիսկ տարածաշրջանային քաղաքականություն չի իրականացնում: Եթե Վ. Օսկանյանը հանդիպում է Եվրոպայի բարձրաստիճան պաշտոնյայի հետ, ապա նրանք խոսում են Հայաստանի ստանձնած պարտավորությունների մասին, բայց չեն խոսում Եվրոպայի ժողովրդագրական կամ միգրացիոն դժվարություններից, հույս են հայտնում, որ Ղարաբաղի խնդիրը կկարգավորվի, բայց չեն հիշում ոչ բասկերին ու իռլանդացիներին, ոչ էլ Բոսնիան ու Կոսովոն, կարևորում են մեր սահմանադրական բարեփոխումները, բայց չեն քննարկում, թե ինչու տապալվեց եվրոպական սահմանադրությունը: Մի խոսքով, պաշտոնական Երևանի արտաքին քաղաքականության օրակարգում միայն ներքին նշանակության հարցեր են, հարցեր, որոնք հնարավորություն են տալիս օտարներին թելադրողի դիրքից միջամտել մեր ներքին խնդիրներին:

Համեմատության համար հիշենք, որ ԱՄՆ-ի, Եվրոպայի, Ռուսաստանի և այլ երկրների արտաքին քաղաքական հետաքրքրություններն ընդգրկում են ամբողջ աշխարհը կամ գոնե իրենց տարածաշրջանը: Գրեթե բացառված է, որ որևէ երկրի հետ ԱՄՆ-ը քննարկեն իրենց ներքին խնդիրները: Իսկ որ, օրինակ, Ռուսաստանը երբեմն ստիպված է լինում դա անել, վկայում է նրա համեմատական թուլության մասին: Բայց նա էլ դա անում է այնպես, որ թույլ չի տալիս միջամտություն իր ներքին գործերին: Նույն կերպ են վարվում նաև Ռուսաստանից շատ ավելի թույլ, բայց քիչ թե շատ ինքնուրույն բոլոր վարչակարգերը՝ Իրանի իսլամական կառավարությունը, լատինաամերիկյան անհնազանդների Չավես-Կաստրո-Մորալես եռյակը և ուրիշներ: Սակայն նույնիսկ այս բացառություններով հանդերձ՝ կարելի է հաստատել մի ընդհանուր օրինաչափություն. ուժեղների արտաքին քաղաքականության նպատակն այլոց գործերին խառնվելն է, իսկ թույլերինը, լավագույն դեպքում, դա թույլ չտալը: Հայաստանի դեպքը թերևս ամենավատն է, երբ վարչակարգը ոչ միայն չի դիմադրում երկրի գործերին միջամտելուն, այլև օժանդակում է դրան՝ ակնկալելով օտարների աջակցությունը սեփական իշխանությունը պահպանելու հարցում: Ընդդիմադիր ուժերի մեծ մասն էլ է նպաստում դրան՝ իր հերթին ծառայություններ առաջարկելով օտարներին, եթե վերջիններն օգնեն իրենց գրավել իշխանությունը: Սա քաղաքական խամաճիկներին բնորոշ վարքագիծ է:

Մենք սովոր ենք, որ արտաքին քաղաքականությունը պետությունների մենաշնորհն է: Սակայն գիտենք նաև, որ ՀՀ իշխանությունները հաճախ են դատապարտվում՝ այս կամ այն հարցում հակազգային քաղաքականություն վարելու համար: Պետք է ենթադրել, որ հայ ազգն արտաքին քաղաքականության վերաբերյալ նույնպես ունի որոշակի սկզբունքային պատկերացումներ: Եթե ոչ-պաշտոնյա, բայց քիչ թե շատ տեղեկացված մի քանի հայից հարցնենք իրենց կարծիքը միջազգային ինչ-որ խնդրի վերաբերյալ, կստանանք մոտավորապես նույն պատասխանները: Երկու տարի առաջ, օրինակ, երբ ՄԱԿ-ի պաշտոնյաները հայ դպրոցականներին առաջարկեցին սահմանել, թե ինչ է ահաբեկչությունը, մեր երիտասարդները պատասխանեցին, որ դա իրենց արդար իրավունքները պաշտպանել ձգտող թույլ ժողովուրդների պայքարի միջոց է, և այդ երևույթի ծավալման համար ավելի շատ մեղավոր են նրանք, ովքեր իրենց անարդար քաղաքականությամբ դրդում են այդ ժողովուրդներին դիմել պայքարի ծայրահեղ ձևերին: Փաստորեն, հայերն իրենց դատողություններում չեն ձգտում արտահայտվել իշխող տեսակետներին համապատասխան, ինչպես նաև չեն ղեկավարվում սեփական նեղ շահերով: Օրինակ՝ երբեք չեն ասի, թե Կոսովոյին պետք է անկախություն տալ, որովհետև դա լավ նախադեպ կլինի Ղարաբաղի համար, այլ կկարևորեն, որ դա սերբական հող է, և արդարն այն սերբերին թողնելն է:

Ամփոփենք. ի տարբերություն ազգային պատկերացումների՝ պետության ընթացիկ քաղաքականությունը հիմնված է ոչ թե արդարության սկզբունքի, այլ ինչ-ինչ շահադիտական նկատառումների վրա, ուստի՝ այն ավելի ժամանակավոր և փոփոխական երևույթ է,

որը կարող է համընկնել, չհամընկնել կամ նույնիսկ հակադրվել ավելի մնայուն, ազգային մոտեցումներին, այդ չափով էլ լինել ազգային կամ ապազգային:

Նման խնդիր չի ծագում ԱՄՆ-ում կամ, օրինակ, Ավստրալիայում: Այդ երկրների կառավարությունները երբեք չեն մեղադրվի ապազգային գործելակերպի համար, որովհետև ազգայինի որևէ չափանիշ այնտեղ գոյություն չունի: Նման պետություններում դա իրոք «կեղծ կատեգորիա» է: Նրանք ամենաշատը կարող են քննադատվել հանրային կարծիքին հակառակ գործելու համար, որը, սակայն, իրենց իսկ կողմից միանգամայն կառավարելի է: Այսպիսի երկրների արտաքին քաղաքականությունը զուտ պետական է: Այն բխում է իշխող վերնախավի շահերից, աշխարհին տիրելու և գերշահույթների հասնելու նրանց ձգտումներից, հետևաբար՝ ավելի հաշվենկատ է և անսկզբունք: Ոչ-ազգային պետությունների և մասնավորապես կայսրությունների կողմից թելադրված միջազգային փոխհարաբերությունների կանոնները մեծապես ազդում են նաև Հայաստանի նման պետությունների քաղաքական վերնախավերի վրա: Վերջիններս, հեռանալով իրենց ազգային սկզբունքներից, որդեգրում են նույն թվաբանական մտածողությունը և անբարո գործելաոճը, միայն թե այն տարբերությամբ, որ չեն մտածում համաշխարհային իշխանության մասին և բավարարվում են իրենց ներքին իշխանությանն ուղղված արտաքին սպառնալիքները մի կերպ չեզոքացնելու խնդիրներով:

Նման ձևակերպումով արտաքին քաղաքականությունը վերածվում է սոսկ անվտանգության քաղաքականության մի բաղադրիչի: Նույնիսկ հզոր ԱՄՆ-ն իրենց արտաքին քաղաքականության խնդիրները ձևակերպում են արտաքին սպառնալիքների համատեքստում: Ընդ որում, նրա համար սպառնալիք է ամեն բան, ինչը կարող է նվազեցնել իր համաշխարհային իշխանությունը և այդ միջոցով ստացվող գերշահույթը: Որքան էլ այդ երկիրը խոսի ժողովրդավարությունից, դա նրա համար ընդամենն աշխարհին տիրելու լծակ է: Երբ շատ ավելի թույլ Վրաստանը միջազգային ամբիոններից խոսում է եվրոպական արժեքներից, նա դա անում է Ռուսաստանի դեմ դաշնակիցներ գտնելու հույսով: Այսինքն՝ մեծ ու փոքր երկրների արտաքին քաղաքականության իմաստը ոչ այնքան ուրիշների վրա դրականորեն ազդելն է, որքան անցանկալի արտաքին ազդեցություններից պաշտպանվելը: Ընդ որում, «խամաճիկ» իշխանությունները հաճախ նենգափոխում են հարցերի իմաստը և որպես ազգային սպառնալիք ներկայացնում են սեփական իշխանությանն ուղղված վտանգները: Բանը հասնում է նրան, որ մի կայսրությունից անկախ մնալու պատրվակով հիմնավորվում է մյուսին տրվելու քաղաքականությունը: Հայաստանում, օրինակ, իշխանությանը հաճախ մեղադրում են, որ նա հանձնվել է ռուսներին՝ փոխանակ Վրաստանի նման դառնալու ԱՄՆ-ի «դաշնակիցը»: Նման հարցադրումը շատ կարևոր է հանուն իշխանության պայքարող ուժերի համար, որոնց մի մասը դրան ուզում է հասնել իր արևմտամետությամբ, մյուսը՝ ռուսամետությամբ, սակայն այն բոլորովին անընդունելի է հայ մարդու համար, ով ինչ-որ մեկի առջև ծնկի գալու որևէ պատճառ չունի:

Ազգային դիրքից նայելիս պետությունների կողմից վարվող արտաքին քաղաքականությունը բոլորովին անիմաստ է թվում: Այստեղ պետք է նկատենք, որ արտաքին անցանկալի ազդեցություններին ենթակա են ոչ միայն իշխող վերնախավերը, այլև բուն ազգերը: Սակայն ազգային սպառնալիքների դեմ պայքարելու համար պետք է ունենալ անվտանգության այնպիսի համակարգ, որը կկարողանա մեծացնել երկրի և ժողովրդի դիմադրողականությունը: Այդպիսի համակարգում արտաքին գործունեությանը շատ համեստ տեղ կարող է հատկացվել, այն է՝ առիթ չտալ, որ օտարները որոշումներ պարտադրեն ներազգային խնդիրների վերաբերյալ: Այսօր ճիշտ հակառակի ականատեսն ենք Հայաստանում: Այն ստորաքարշությունը, որ դրսևորում են մեր պաշտոնական ներկայացուցիչները ռուսների, եվրոպացիների, ամերիկացիների հետ հարաբերություններում, վարկերի մուրացկանությունն Արևմուտքից և նվիրատվությունները Ռուսաստանին, օրենսդրության զանգվածային արտագրությունը և ամենատարբեր զիջումների պատրաստակամությունը ոչ մի կապ չունեն անվտանգության քաղաքականության հետ, ընդհակառակը, երկրի և ժողովրդի դեմ ուղղված մեծագույն սպառնալիք են: Դրանք կապ չունեն նաև արտաքին քաղաքականության հետ, որի իրական իմաստն արտաքին աշխարհի վրա ազդելն է:

Արդկության կյանքում ազգերի դերակատարության խնդիրը մեր պետական արտաքին գերատեսչությունների համար, փաստորեն, գոյություն չունի: Հայաստանի արտգործնախարարը բոլորովին չի մտածում և անտեղյակ է այն մասին, որ հայ ժողովուրդն այս աշխարհում ինչ-որ առաքելություն ունի, կարևոր բան ունի տալու մարդկությանը, որ ինքը հատկապես հայոց պետության պաշտոնյան է և հենց ինքն է այն գլխավոր անձը, ով առաջինը պետք է հնչեցնի մարդկությանն ուղղված հայի խոսքը: Եթե իմանար, մենք կունենայինք արտաքին քաղաքականության բոլորովին այլ օրակարգ և զերծ կլինեինք դիտորդական (մոնիտորինգային) տարբեր հանձնաժողովներին հաշիվ տալու անհրաժեշտությունից: Ընդհակառակը, ինքներս կքննադատեինք ուրիշ, այսպես կոչված, զարգացած երկրների ներքին և արտաքին քաղաքականությունը, որը նրանց կործանման է տանում և ավելցնում է թշնամանքն աշխարհում: Այսինքն՝ մենք պետք է հանդես գանք ոչ թե որպես թույլ և աղքատ պետություն, որը մյուսներին ոչինչ չի կարող պարտադրել, այլ որպես հինավուրց և աշխարհաճանաչ ժողովուրդ, որն իրեն պատասխանատու է համարում մարդկության ճակատագրի համար և պատրաստ է առաջնորդել ավելի «երիտասարդներին»:

Դրա համար անհրաժեշտ է փոխել արտաքին քաղաքականության մասին մեր պատկերացումներն: Եկեք այդպես կոչենք այն, ինչն ազգերը տալիս են մարդկությանը, հարևան ժողովուրդներին՝ մասնակցելով համամարդկային և տարածաշրջանային խնդիրների լուծմանը: Ընդ որում, նկատի ունենանք միայն դրականը, ուսանելին, օգտակարը, չնայած ազդեցությունները կարող են լինել նաև բացասական: Բացասականը չդիտարկենք, որովհետև այլոց նկատմամբ վնասակար և նույնիսկ կործանարար վարքագծի ազդեցությունը որքան էլ ճակատագրական լինի, այն չի փոխում

վերջինների էությունը, քանի որ առաջացնում է նրանց դիմադրությունը: Այլ կերպ ասած՝ պատերազմով ժողովրդավարություն պարտադրելն անհնար է: Եվ ոչ էլ ցեղասպանությամբ կարելի է ազգ ոչնչացնել, եթե այն իրեն ներքուստ չի սպառել: Ընդհակառակը, այդպես կարելի է միայն սթափեցնել:

Դրական ազդեցության և մասնակցության մեթոդները որոշակիորեն տարբերվում են արտաքին քաղաքական այն մեթոդներից, որոնք այսօր կիրառում են ազդեցիկ պետությունները: Մասնավորապես՝ դրանցում տեղ չունեն ճնշումները, նախապայմանները, պատժամիջոցները: Դրական ազդեցության հիմնական ձևերն են ճշմարիտ խոսքը և սեփական օրինակը: Իսկ սա նշանակում է, որ արտաքին քաղաքականությունը միայն արտգործնախարարի գործը չէ, այլ ամբողջ երկրի, որը մարդկությանը որևէ բան առաջարկելուց առաջ պետք է սեփական օրինակով ձեռք բերի այդ իրավունքը: Իսկ համապատասխան գերատեսչության խնդիրն այդ օրինակները քարոզելն է:

Ազգերը, անկախ իրենց թվաքանակից և հարստությունից, որպես մարդկային համայնքի անդամներ, պատրաստակամորեն պետք է մասնակցեն այդ համայնքում ծագած խնդիրների, վեճերի լուծմանը, առաջարկեն համագործակցության ծրագրեր, որոնք կնպաստեն մարդկության հոգևոր և մշակութային վերելքին: Յուրաքանչյուր ժողովուրդ պատասխանատու է և պետք է շահագրգռված լինի տարածաշրջանային արդար համակեցություն կազմակերպելու գործում: Ասվածից կարելի է բխեցնել Հայաստանի ներկայիս արտաքին քաղաքականությունից բոլորովին տարբերվող օրակարգ:

Մենք անդամակցում ենք միաժամանակ երեք տարածաշրջանների՝ Եվրոպային, Մերձավոր Արևելքին և մասամբ հետխորհրդայինին, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատուկ խնդիրները:

Եվրոպական ժողովուրդները, որ դարեր շարունակ իշխել են ամբողջ աշխարհում՝ մի կողմից հարստացնելով այն գիտությամբ և մշակույթով, իսկ մյուս կողմից շահագործելով և թալանելով, այսօր կանգնած են կործանման եզրին: Նրանց ժողովրդագրական դժվարությունները հետևանք են ավելի վաղ տեղի ունեցած հոգևոր անկման: Որքանով են եվրոպացիները գիտակցում սպառնալիքը՝ պարզ չէ, որովհետև խնդիրները քննարկում են միայն տնտեսական հարթության մեջ և փորձում են դրանք լուծել աշխատուժի ներմուծման միջոցով, ինչն անհնար է և վնասակար այլոց համար: Բացի այդ, նրանք շարունակում են հավատարիմ մնալ, այսպես կոչված, «արևմտյան արժեքներին»՝ բոլորովին չընդունելով դրանց անբարո և կործանարար բնույթը: Եվրոպական ժողովուրդներին օգնելու հարցում Հայաստանն անգնահատելի հնարավորություններ ունի, քանի որ ինքն էլ, մի քիչ եվրոպացի լինելով, տեղյակ է այնտեղ իշխող արժեհամակարգին, սակայն անհամեմատ քիչ է դրանից ազդված:

Գրեթե նույնպիսի դերակատարություն կարող է ունենալ Հայաստանը Մերձավոր Արևելքում, որը, հոգևոր և բարոյական իմաստով ավելի բարվոք լինելով հանդերձ, թշնամաբար է տրամադրված Արևմուտքի դեմ, քանի որ վերջինս դարեր շարունակ իշխել է Արևելքում և այսօր էլ փորձում է վերահսկել այն և շահագործել: Շատ կարևոր է կանխել այն երևույթը, ինչը ոմանք «քաղաքակրթությունների բախում» են կոչում: Կամուրջի դերը կարող են ստանձնել հայերը, որոնք միաժամանակ քրիստոնյա են և արևելյան ժողովուրդ: Այդ առաքելությունը կպսակվի հաջողությամբ, եթե Հայաստանը հոգևորի, բարոյականի և արդարի օրինակ դառնա թե Եվրոպայի, թե մահմեդական Արևելքի համար:

Հետխորհրդային երկրներն այսօր վերածվել են անտեր տարածքների, հումքային կցորդի և էժան աշխատուժի մեծ շուկայի: Արևմտյան արժեքների հորդումն այս տարածաշրջան ուղղակի կործանարար եղավ: Միջազգային տնտեսական կառույցների կողմից հետխորհրդային երկրներն օգտագործվում էին որպես փորձադաշտ: Ի վերջո, նրանք ոչնչացրին այդ երկրների տնտեսական անկախությունը, իսկ ընդարձակ շուկան հանձնեցին օլիգարխիական խմբավորումներին: Հիմա էլ այն բաժանվել է ռուսամետ և հակառուս ճամբարների, որտեղ փորձարկվում են հեղափոխությունների արտահանման տեխնոլոգիաները: Այս ամենը մենք զգացել ենք մեր մաշկի վրա, սակայն համեմատաբար անխոցելի ենք մնացել, որովհետև հարուստ չենք եղել հումքով, քիչ ենք ենթարկվել սորոսյան նարնջագույն ազդեցություններին և մեր մեծահարուստներն էլ դեռ բավականաչափ հարուստ չեն, որ անդամակցեն աշխարհի կառավարիչների փակ ակումբին: Ուստի՝ մենք դեռ պահպանում ենք իրավիճակից լուծում գտնելու հնարավորությունը, ինչը լավ օրինակ կարող է ծառայել մյուս հետխորհրդային երկրների համար:

Այս երեքից բացի կա նաև մեր՝ հայկական փոքր տարածաշրջանը, որտեղ մենք աստիճանաբար պետք է վերականգնենք մեր վաղեմի դերակատարությունը՝ ապահովելով հարևան ժողովուրդների անվտանգ և համերաշխ փոխհարաբերությունները: Հայաստանի անբավարար ակտիվությունն է պատճառը, որ Հարավային Կովկաս կոչվող շրջանն այսօր վերածվել է արտաքին ուժերի մրցակցության թատերաբեմի: Դրան են նպաստում նաև Ադրբեջանի և Վրաստանի՝ դրսից սնուցվող կայսերական հավակնությունները: Մեծ Կովկասից մինչև Միջերկրականի ափերը, Կասպիից մինչև Բոսֆոր ընկած շրջանում չկան այնպիսի հարցեր, որոնք չվերաբերեն հայերին: Այս տարածաշրջանում ծագող բոլոր հակամարտությունների և վեճերի վերաբերյալ հայ ժողովուրդը պետք է վճռականորեն պնդի իր արդար և սկզբունքային լուծումները:

Մեկ հոդվածի սահմաններում հնարավոր չէ ներկայացնել հայ ժողովրդի արտաքին քաղաքական օրակարգի բոլոր կետերը և մեկ առ մեկ դիրքորոշումներ արտահայտել համամարդկային նշանակություն ունեցող բոլոր մարտահրավերների վերաբերյալ: Դա կանենք մեր հաջորդ համարներում: Իսկ այժմ նշենք, որ համաշխարհայնացման ներկա ընթացքի, միջազգային կազմակերպությունների ունեցած դերակատարության, համընդհանուր անվտանգության, բնապահպանության և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ հայ ժողովրդի տեսակետերը կարող են էականորեն տարբերվել այլ պետությունների՝ ներկայումս հնչող բոլոր դիրքորոշումներից միայն այն պատճառով, որ դրանք կարտահայտվեն ոչ թե իր շահերը հետապնդող, այլ իր պատասխանատվությունը գիտակցող ազգ-պետության կողմից:

ԿԼԻՆԻ՞ ՊԱՏԵՐԱԶՄ ԻՐԱՆԻ ԴԵՄ

ԻՐԱՆՆ ԱՆՏԵՍՈՒՄ Է ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՈՒՐԱՆ ՀԱՐՍՏԱՑՆԵԼ

Իրանի միջուկային ծրագրի հարցը շարունակում է մնալ միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Թեհրանն իր տարածքում ատոմային էլեկտրակայաններ է կառուցում և այդ նպատակով իրականացնում է ատոմի հարստացման աշխատանքներ: Սա մտահոգում է Արևմուտքին և հատկապես ԱՄՆ-ին և Իսրայելին, որոնց թվում է՝ այդ աշխատանքների իրական նպատակը միջուկային զենք ստեղծելն է: Եվ քանի որ նրանք թշնամի են համարում Իրանի Իսլամական Հանրապետությունը, ամեն կերպ փորձում են խանգարել նրա միջուկային ծրագրերը: Իսկ Թեհրանը հայտարարում է, որ ինքը զանգվածային ոչնչացման զենք չի պատրաստվում ստեղծել, խաղաղ նպատակներով միջուկային տեխնոլոգիա ունենալն էլ իր իրավունքն է, և ոչ ոք չի կարող դա նրան արգելել:

Այս խնդրի շուրջ Իրանի հետ բանակցում են եվրոպական երկրները, որոնք տարբեր խոստումներ են շռայլում, միայն թե նա հրաժարվի սեփական միջուկային ծրագրից: Ռուսաստանը պաշտպանում է Իրանի խաղաղ միջուկային ծրագրեր ունենալու իրավունքը, ատոմակայան է կառուցում Բուշերում և միաժամանակ փորձում է Իրանում օգտագործվող միջուկային վառելիքի շրջանառությունը վերահսկողի դեր ստանձնել, որպեսզի այն չօգտագործվի ռազմական նպատակներով: Իսկ ահա Միացյալ Նահանգներն ընդհանրապես չեն ուզում ընդունել Իրանի միջուկային տերություն դառնալու հեռանկարը և պարբերաբար սպառնում են նրան պատերազմով:

Սպառնալիքները չեն վախեցնում Իրանի ղեկավարությանը: Թեհրանը շարունակում է ուրան հարստացնել և արդեն հայտարարել է միջուկային ակումբի անդամ դառնալու մասին: Որոշ վերլուծաբաններ էլ չեն կասկածում, որ ժամանակի ընթացքում Իրանը նաև միջուկային զենք կունենա: Թեհրանին չեն վախեցնում նաև տնտեսական պատժամիջոցները, որովհետև եթե Իրանը դադարեցնի էներգակիրներ մատակարարել աշխարհին, դա կարող է լուրջ հետևանքներ առաջացնել բոլորի համար:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՀԱՐՎԱԾ՝ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Քանի որ Իրանի դեմ դժվար է ցամաքային գործողություններ իրականացնել, Վաշինգտոնում քննարկում են նույնիսկ միջուկային հարվածներ հասցնելու հնարավորությունը: Ընդ որում, ամերիկյան մամուլում արդեն հիշատակվել են որոշակի ռումբերի տեսակներ և հարվածի հավանական վայրեր: Մասնավորապես՝ հիշատակվել են B 11 61 ռումբը, որը Հերոսիմայի վրա գցած ռումբից հզոր է 200 անգամ, ինչպես նաև մի քանի օբյեկտների անուններ Իսպահանի և Նաթանցի վարչական տարածքներում: Վաշինգտոնի այս ծրագրերը լուրջ տարաձայնություններ են առաջացրել Շտաբերի պետերի միացյալ կոմիտեում: Առանձին սպաներ նույնիսկ սպառնացել են թողնել զինվորական ծառայությունը: Որոշ պաշտոնաթող գեներալներ հանդես են եկել դատապարտող հայտարարություններով:

Վաշինգտոնը ծայրահեղ քայլի է գնում նաև այն պատճառով, որ իր հակաիրանյան ծրագրերը միջազգային աջակցություն չեն ստանում: Նույնիսկ Մեծ Բրիտանիան չի աջակցում ԱՄՆ-ին: Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլեերը հայտարարել է, որ Իրանին հարվածելու դեպքում Վաշինգտոնին չի օժանդակելու: Լոնդոնում թեև կարծում են, որ իրանական խնդրի երկարաժամկետ լուծումն այնտեղ ժողովրդավարության հաստատումն է, սակայն ավելացնում են, որ այն չի կարելի պարտադրել. դա կարող է բումերանգի պես հարվածել, ինչպես Իրաքի դեպքում:

Բացի այդ, գրեթե պարզ է, որ Ռուսաստանը և Չինաստանը թույլ չեն տա, որ ՄԱԿ-ում Իրանին հար-

վածելու որոշում կայացվի: Սակայն այդ հանգամանքը վաղուց արդեն խոչընդոտ չէ ԱՄՆ-ի համար, և պետքարտուղար Ռայսն արդեն հայտարարել է, որ իրենք Իրանին կարող են հարվածել ինքնապաշտպանության նպատակով:

ՃԱՄԱՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԿՍԵԼՈՒ ԱՄԵՆԱՀԱՎԱՆԱԿԱՆ ՎԱՅՐՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՆ Է

ԱՄՆ-ի ռազմական ծրագրերում կարեվոր նշանակություն ունի իրանական Ատրպատականն իր թրքալեզու բնակչությամբ:

Իրաքի համեմատ Իրանը շատ ավելի կազմակերպված պետություն է, և օդային հարվածներից հետո առանց տեղական բնակչության աջակցության այնտեղ դժվար է ցամաքային գործողություններ իրականացնելը: Նման աջակցության հույս Միացյալ Նահանգներն ունեն միայն Ատրպատականում: Որքանով է այդ հույսն արդարացված՝ դժվար է ասել, սակայն նման պնդումներ անելու համար որոշ նախադրյալներ կան: Հայտնի է, որ թե Իրանի տարածքում, թե արտասահմանում իրանյան ընդդիմության առանցքային դեմքերը թրքալեզու շրջաններից են: Բացի այդ, ԱՄՆ-ն այս հարցում կարող են աջակցություն ստանալ Թուրքիայից և Ադրբեջանից: Իսկ վերջերս էլ իրանական թերթերում ադրբեջանցիներին ծաղրող հրապարակումների դեմ Ատրպատականում տեղի ունեցան բողոքի ցույցեր:

Եղան նաև հակահայկական ցույցեր Թավրիզի շրջանում: Պարզ է, որ դրանք չէին կարող տեղի ունենալ առանց Ադրբեջանից եկող ազդանշանների: Ճիշտ է, Իրանի ոստիկանությունը ճնշեց այդ ցույցերը, սակայն մտահոգիչ է այն, որ Ադրբեջան պետությունը որոշակի ազդեցություն իրանյան Ատրպատականում արդեն ունի: Այս ամենը, անշուշտ, մեծացնում է Ատրպատականի թրքալեզու բնակչության նշանակությունն ամերիկյան ծրագրերում:

ԱԼԻԵՎԻ ԱՅՑԸ ԱՄՆ՝ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿ, ԹԵ՞Ղ ԳԱՂՏՆԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանյան մամուլի մի մասն Իլհամ Ալիևի այցը Վաշինգտոն գնահատեց որպես Ադրբեջանի նախագահի դիվանագիտական փայլուն հաղթանակ: Եվ, իրոք, տպավորությունն այն էր, թե Միացյալ Նահանգներն Ադրբեջանի կարիքն ունեն և փորձում են նրան սիրաշահել, իսկ Ադրբեջանը ղեկավարվում է միայն սեփական շահերով, չի ուզում հարաբերությունները փչացնել հարևան Իրանի հետ և այդ մասին առանց վախենալու հայտարարում է հենց Վաշինգտոնում: Դեռ նախագահների հանդիպումից առաջ Ի. Ալիևը Վաշինգտոնին զգուշացրեց, որ Իրանի դեմ պատերազմ սկսելը վտանգավոր հետևանքների կարող է բերել, և հայտարարեց, որ ինքն այդ դեպքում ԱՄՆ-ին չի աջակցի:

Որպեսզի ճիշտ հասկանանք այդ խոսքերի իմաստը, պետք է նախ հակառակ ենթադրությունն անենք: Ի՞նչ խոսքեր կհնչեին Վաշինգտոնում, եթե Բուշը և Ալիևը պայմանավորվեին համատեղ գործել Իրանի դեմ: Չէ՞ որ այդ դեպքում նույնպես Ալիևը, զգուշանալով Թեհրանի զայրույթից, բարձրաձայն չէր հայտարարի, թե ինքը պատրաստվում է օգնել անդրօվկիանոսյան իր գործընկերոջը՝ ընդդեմ հարևան Իրանի: Այսինքն՝ կասեր ճիշտ այն, ինչ մենք լսեցինք Վաշինգտոնում: Եթե հաշվի առնենք, որ իրական պայմանավորվածությունները, սովորաբար, ձեռք են բերվում նման հանդիպումներից շատ առաջ, իսկ հանդիպումները միայն բանակցային գործընթացի վերջակետն են դնում, կարելի է ենթադրել, որ նախքան հանդիպումն արված Ալիևի բոլոր հայտարարությունները ևս համաձայնեցված էին Բուշի հետ: Բնական է, որ վերջինս նույնպես չպետք է աներ այնպիսի հայտարարություններ, որոնք կհակասեին Իլհամ Ալիևի ասածներին:

Փաստորեն, վաղաժամ են հայաստանյան մամուլի այն եզրակացությունները, թե Ալիևը կարողացավ աշխարհի հզոր պետության առջև պաշտպանել իր երկրի շահերը, տեղի չտվեց նրա ճնշումներին և չփչացրեց իր հարաբերությունները հարևան Իրանի հետ: Այդուհանդերձ, ընդունենք, որ ինչ-ինչ դիվանագիտական հաջողություն Ադրբեջանը, այնուամենայնիվ, ունեցավ: Նա բավականին թանկ վաճառեց իր ռազմավարական դիրքը և փորձեց որոշ աջակցություն ստանալ ԱՄՆ-ից: Իսկ այն, որ Վաշինգտոնը պատրաստ է օժանդակել Ադրբեջանին ինչ-ինչ հարցերում, երևում էր Բուշի սիրալիր վերաբերմունքից: Մասնավորապես՝ վերջինս գովաբանում էր Ադրբեջանի նախագահի՝ էներգետիկ անվտանգության հարցերում աշխարհին օգնության հասնելու պատրաստակամությունը: Ավելին՝ Բուշը, դուրս գալով արարողակարգից, հատուկ շնորհակալություն հայտնեց Իլհամ Ալիևին, որը, իր աղջկա հարսանիքի նախապատրաստությունը թողած, այցելել էր Վաշինգտոն: Այս բոլոր սիրաշահությունները հաշվի առնելով՝ որոշ վերլուծաբաններ կարծեցին, թե ԱՄՆ-ն Ադրբեջանից ինչ-որ կարևոր բան են խնդրում, որը դեռ չեն ստացել: Սակայն դրանք, նույն հաջողությամբ, կարող էին շնորհակալական արտահայտություններ լինել այն բանի համար, որ Ադրբեջանն արդեն խոստացել է հավանական պատերազմի դեպքում օժանդակել ԱՄՆ-ին: Ամեն դեպքում, Իրանի դեմ Վաշինգտոնի և Բաքվի միջև արդեն իսկ կայացած գաղտնի համաձայնությունների վարկածն ավելի հավանական է, քան այն, որ Ադրբեջանը դեմ գնաց Միացյալ Նահանգներին և հրաժարվեց աջակցել նրան իր ագրեսիվ ծրագրերում: Իսկ Վաշինգտոնում արտասանված խոսքերի առաջին հասցեատերը Թեհրանն էր, որից փորձում էին քողարկել նախագահների հանդիպման իրական նպատակը: Որքանով դա հաջողվեց՝ ցույց կտա ժամանակը:

ԱԼԻԵՎԸ ՈԳԵՇՆՉՎԱԾ Է ՆԱԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑՈՒՄ

ԱՄՆ-ում գտնվելու օրերին Ալիևը շատ ոգևորված արտահայտվել էր նաև

Ղարաբաղյան կարգավորման հեռանկարների վերաբերյալ: Ելույթ ունենալով «Կարնեգի» հիմնադրամում՝ նա նշել էր, որ Ադրբեջանը դառնալու է ուժեղ, բարգավաճ երկիր՝ հզոր տնտեսությամբ և հասարակությամբ, երկիր, որի հետ ավելի լավ է հարևան լինել, քան չլինել: «Խաղաղությունը», ըստ Ալիևի, «ձեռնտու է բոլոր կողմերին»: Ըստ այդմ, փոխզիջման դիմաց Հայաստանը կունենա հաղորդակցության ուղիներ, ելք դեպի Ռուսաստան, ինչը Հայաստանի համար շատ կարևոր է, և կկարողանա մասնակցել տարածաշրջանային ծրագրերին: Նա ներկայացրել էր լուծման իր տարբերակը. Ղարաբաղում ապրող հայերն իրավունք ունեն Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում ունենալ ինքնավարության բարձր մակարդակ, ինչը մենք տեսնում ենք բազմաթիվ այլ երկրներում, այդ թվում՝ Եվրոպայում, նրանց պետք է բավականին ամուր քաղաքական երաշխիքներ տրվեն, որ տարածաշրջանում խաղաղությունն անշրջելի է լինելու:

Դժվար է ասել, թե առանձնազրույցի ժամանակ Ալիևը և Բուշն ինչ են խոսել միմյանց հետ: Բրիֆինգի ընթացքում Բուշը Ղարաբաղյան խնդրի կարգավորման ձևերի կամ ժամկետների վերաբերյալ որևէ ակնարկ չարեց: Սակայն Մինսկի խմբի ամերիկյան համանախագահ Բրայզայի հետագա քայլերը ցույց տվեցին, որ չնայած ստորացուցիչ տարբերակին Քոչարյանի համաձայնությանը՝ ԱՄՆ-ն ընդառաջում են Ադրբեջանի էլ ավելի արմատական պահանջներին: Ամերիկյան համանախագահի նախաձեռնությամբ դադարեցվեց բանակցային գործընթացը, ինչը հնարավորություն է տալիս Բաքվին հարցը լուծել պատերազմի միջոցով՝ միգուցե նատոյական խաղաղապահների օգնությամբ: Չմոռանանք, որ Ադրբեջանի դերը հակաիրանյան ծրագրերում մեծ է այնքանով, որքանով երկար է ադրբեջանաիրանական սահմանը: Հետևաբար՝ հնարավոր է, որ Վաշինգտոնն այսօր մտածում է Արաքսի ափամերձ շրջաններն Ադրբեջանին հանձնելու մասին՝ չսպասելով խնդրի վերջնական կարգավորմանը:

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԻՐԱՆՅԱՆ ՀԱԿԱՀԱՐՎԱԾԻ ԹԻՐԱԽ

Ինչպես Վաշինգտոնի հանդիպումից առաջ, այնպես էլ հետո Իրանի բարձրաստիճան տարբեր պաշտոնյաներ զգուշացրել են, որ Ադրբեջանը կարող է դառնալ իրանյան հակահարվածի թիրախ, եթե իր տարածքը տրամադրի ԱՄՆ-ի զինված ուժերին: Թեհրանը նույնիսկ սպառնացել է թիրախ դարձնել նաև Բաքու-Ջեյհան նավթատարը: Պետք է նկատել, որ Ադրբեջանն արդեն Վաշինգտոնին տրամադրել է ռադիոլոկացիոն կայաններ, նատոյական չափանիշներին համապատասխանեցվող օդանավակայաններ և այլն: Սակայն իրանցի պաշտոնյաների սպառնալիք-ակնարկները զուգորդվում են իրանաադրբեջանական երկխոսությամբ և բարձր մակարդակի հանդիպումներով, որոնք տեղի են ունենում միջազգային կոնֆերանսների ժամանակ: Փաստորեն, Իրանի համար ավելի նախընտրելի է Ադրբեջանին հետ պահել չմտածված և վտանգներով լի գործողություններից, քան թե հետո հակահարված հասցնել: Ամերիկահրանյան դիվանագիտական պատերազմը հանուն Ադրբեջանի դեռևս ավարտված չէ, և դժվար է ասել, թե Ադրբեջանը վերջնական ինչ ընտրություն կկատարի այս հակամարտության կողմերի միջև: Նա կարող է հավատարիմ մնալ Վաշինգտոնում հրապարակավ հայտարարած իր դիրքորոշմանը, թե Իրանն Ադրբեջանին հարևան երկիր է, և ինքը չի կարող աջակցել ԱՄՆ-ին հակաիրանյան ծրագրերում: Մյուս կողմից՝ նա կարող է շարունակել խաղարկել իրանական Ատրպատականի իր խաղաքարտը, համագործակցել Պենտագոնի հետ՝ վերջնականապես վերածվելով Վաշինգտոնի դաշնակցի:

ՔՐԴԱԿԱՆ ԴԱՍԸ

Միացյալ Նահանգները նաև Թուրքիայի կարիքն ունեն: Մենք հիշում ենք, որ Անկարան մերժեց օգնել ԱՄՆ-ին վերջինիս հակաիրաքյան ծրագրերում: Գլխավոր պատճառն այն էր, որ իրաքյան պատերազմում ԱՄՆ-ը որպես դաշնակից օգտագործելու էին նաև քրդերին: Իսկ քրդերի հավանական անկախացումը դեմ էր Թուրքիայի շահերին:

Այս անգամ ևս Վաշինգտոնն ունի Թուրքիայի կարիքը, և, ամենայն հավանականությամբ, նման դաշնակցի օժանդակությունը շատ կարևոր է նրա համար, որովհետև ԱՄՆ-ը Թուրքիային սիրաշահող քայլեր կատարեցին: Պետքարտուղար Ռայսի՝ Անկարա կատարած այցելությունից հետո, ըստ երևույթին՝ ինչ-որ գաղտնի պայմանավորվածության արդյունքում, թուրքական բանակը ներխուժեց Հյուսիսային Իրաք (Հարավային Քրդստան) և հարվածեց PKK-ի ճամբարներին: Սա, հավանաբար, այն գինն էր, որ Միացյալ Նահանգները վճարեցին Անկարային, որպեսզի ստանան Թուրքիայի հարավ-արևելքում տեղակայված ռազմաօդային բազաներն Իրանի դեմ օգտագործելու իրավունքը: Այդ գինը վճարվեց քրդերի հաշվին, որոնք անկախ պետություն մինչ օրս չունեն:

Կարող ենք զուգահեռ անցկացնել Հյուսիսային Իրաքի և Հյուսիսային Իրանի կամ Հարավային Քրդստանի և իրանական Ատրպատականի միջև: Թրքալեզու իրանցիների համար ուսանելի դաս կարող է լինել իրաքյան քրդերի հետ կատարվածը: Նրանք դարձան ԱՄՆ-ի գլխավոր դաշնակիցը և հույս ունեին անկախություն ստանալ: Ճիշտ է, նրանց հաջողվեց համաիրաքյան կառավարությունում զբաղեցնել բազմաթիվ պաշտոններ՝ ընդհուպ մինչև Իրաքի նախագահի պաշտոնը, իսկ քրդաբնակ տարածքներում ստանալ ինքնավարություն՝ գրեթե փաստացի անկախություն, սակայն ամերիկացիների թույլտվությամբ տեղի ունեցած թուրքական բանակի գործողությունները ևս մեկ անգամ փաստեցին, որ Միացյալ Նահանգները հուսալի դաշնակից չեն և ցանկացած պահին կարող են դավաճանել:

Վաղը Վաշինգտոնից, հավանաբար, խոստումներ կշռայլեն Ատրպատականում բնակվող թրքալեզու ժողովրդին՝ խոստանալով անկախություն կամ այլ արտոնություններ, հնարավոր է՝ խոս-

տանան միացում Ադրբեջանի հետ, սակայն դեռ հայտի չէ, թե, ի վերջո, ինչ կստանան նրանք այն բանից հետո, երբ Միացյալ Նահանգներին հաջողվի տապալել իրանյան վարչակարգը:

ԱՀՄԱԴԻՆԵՋԱԴԻ ՆԱՄԱԿԸ ԲՈՒՇԻՆ

Ժամանակ առ ժամանակ իրանաամերիկյան հարաբերություններում տեղի են ունենում սրացումներ և մեղմացումներ: Երբեմն հայտարարվում է բանակցային լուրջ արդյունքների և համաձայնության գալու հույսերի մասին, իսկ շատ չանցած՝ հնչում են սուր, դատապարտող խոսքեր: Միացյալ Նահանգները բազմիցս հայտարարել են, որ չեն հավատում, թե իրանյան իշխանությունները երբևէ կընդառաջեն Արևմուտքի պահանջներին և կդադարեցնեն իրենց միջուկային ծրագիրը: Իրանն իր հերթին բազմիցս հայտարարել է, որ չի հավատում, թե ԱՄՆ-ը կհամարձակվեն ռազմական լուծման գնալ, և շեշտել, որ նման որոշում կայացնելու դեպքում Վաշինգտոնին չի հաջողվի անել այն, ինչ արեց Իրաքում: Միացյալ Նահանգները նախընտրում են Իրանի հետ ուղղակիորեն չբանակցել՝ թողնելով դա իրենց եվրոպացի գործընկերներին:

Սակայն Իրանը, տևական ժամանակ բանակցելով եվրոպական տարբեր պետությունների, ինչպես նաև ՄԱԳԱՏԵ-ի հետ, այնուամենայնիվ, հետ չի կանգնում իր դիրքորոշումից, որ միջուկային ծրագիր ունենալն իր իրավունքն է, և ոչ ոք չի կարող այդ իրավունքը կասկածի տակ դնել: Տպավորությունն այն է, որ ավելի շուտ Վաշինգտոնը կհամաձայնվի նրան, որ Իրանը, թեկուզ որոշ վերահսկողության ներքո, բայց զարգացնի իր միջուկային տեխնոլոգիաները, քան Թեհրանը կհրաժարվի սեփական ատոմային էներգետիկան ունենալու հեռանկարից: Իրանը, ըստ էության, չի բանակցում միջուկային ծրագրից հրաժարվելու հարցի շուրջ, այլ միայն հավաստիացնում է դրա խաղաղ բնույթի մասին:

Դիվանագիտական այս փակուղու պայմաններում բավականին հետաքրքիր քայլ էր Իրանի նախագահ Ահմադինեջադի նամակը՝ հասցեագրված Ջորջ Բուշին: Նամակում ընդհանրապես չէր խոսվում այն հարցերի մասին, որոնք կազմում են ամերիկահրանյան հակամարտության հիմքը: Փոխարենը՝ Ահմադինեջադն առաջարկում էր նախագահ Բուշին մտածել այն մասին, թե ինչպես է պետք կառուցել աշխարհը, այն դարձնել ավելի արդար: Իրանի նախագահն առաջարկում էր ԱՄՆ-ի իր գործընկերոջը հանդիպել որևէ տեղ ուղիղ եթերում և բացեիբաց խոսել այն մասին, թե ինչպես են իրենք պատկերացնում ժամանակակից աշխարհը, ինչպես են պատրաստվում լուծել մարդկության առջև ծառացած հիմնախնդիրները: Փաստորեն, Իրանը նոր աշխարհակարգի ձևավորման հայտ է ներկայացնում՝ դրանով ներկայանալով որպես Միացյալ Նահանգների այլընտրանք:

«ՄԵԾ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱՆԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԸ՝ ԱՌԱՆՑ ԻՍՐԱՅԵԼԻ

Դեռևս վաղ է գնահատել, թե ինչ հնարավորություններ ունի Իրանը նոր աշխարհակարգ ձևավորելու հարցում, սակայն այն, որ Մերձավոր Արևելքում Իրանի դերակատարությունը մեծ է, ակնհայտ է: Ավելին՝ ներկայիս ամերիկահրանյան հակամարտությունն ավելի ճիշտ է դիտարկել Իրանի՝ ԱՄՆ-ի հռչակած «Մեծ Մերձավոր Արևելք» ծրագրին ընդդիմանալու համատեքստում: Ըստ ամենայնի, Մերձավոր Արևելքի վերաբերյալ Թեհրանն այսօր ունի սեփական ծրագիրը, և ներկա զարգացումները, այդ թվում՝ հավանական պատերազմը կամ հավանական պատերազմի մասին խոսակցություններն Իրանի համար ընդամենը միջոց են՝ իր պատկերացրած ուղղությամբ Մերձավոր Արևելք զարգացնելու համար: Փաստորեն, ստեղծվել է մի իրավիճակ, երբ, անկախ նրանից, թե ինչպիսի հանգուցալուծում կստանա ամերիկահրանյան հակամարտությունը, Իրանը, միևնույն է, շահում է այն առումով, որ այսօր արդեն նա դարձել է մահմեդական աշխարհի առաջնորդը, որը պայքարում է Մերձավոր Արևելքում իշխող օտար ուժերի դեմ: Պատահական չէ, որ Իրանի նախագահի և մյուս բոլոր պաշտոնատար անձանց ելույթների առանցքում պարբերաբար հայտնվում է Իսրայելի թեման: Վերջին շրջանում Իրանը բազմիցս առաջարկել է վերացնել Իսրայել պետությունը՝ տեղափոխելով նրա բնակիչներին Եվրոպա, Ամերիկա կամ այլ երկիր, որտեղից որ նրանք եկել են, կամ կանխագուշակել է, որ այդ պետությունը շատ շուտով վերանալու է: Հավանական պատերազմի դեպքում Իսրայելը հիշատակվել է նաև Իրանի կողմից հակահարվածի թիրախների շարքում: Փաստորեն, հակահրայելյան պայքարն Իրանի իսլամական կառավարությունը ներկայացնում է որպես տարածաշրջանի ժողովուրդների և մահմեդականության ազգային ազատագրական պայքար: Մերձավոր Արևելքում առաջնորդ լինելու Իրանի հավակնությունները չափազանցված չեն: Գաղտնիք չէ, որ ինչպես Պաղեստինում, այնպես էլ Լիբանանում Իրանն ունի մեծ թվով աջակիցներ՝ հանձինս Համաս և Հզբոլլա շարժումներին: Գաղտնիք չէ, որ Սիրիան Իրանից որոշակի աջակցություն է ստանում բոլոր այն դեպքերում, երբ ենթարկվում է Միացյալ Նահանգների և այլ երկրների դիվանագիտական ճնշումներին: Իրանի հեղինակության աճին չի խանգարում նույնիսկ այն հանգամանքը, որ Մերձավոր Արևելքի բնակչության մեծ մասն արաբներ են, քանի որ Իրանն առաջին պլան է մղում մահմեդականության և հատկապես Շիա ուղղության գաղափարը: Այնպես որ, Միացյալ Նահանգների կողմից պատերազմի սանձազերծումն ավելի կբարձրացնի Իրանի հեղինակությունը: Իրանի հեղինակությունը կաճի նաև այն դեպքում, եթե Միացյալ Նահանգներն այդպես էլ չհամարձակվեն պատերազմ սանձազերծել. չէ՞ որ դա կընկալվի որպես պարտություն վերջինիս կողմից:

Սակայն մինչ ԱՄՆ-ը կորոշեն պատերազմել, թե ոչ, Իսրայելը չդիմացավ և փորձում է կանխել Համասի և Հզբոլլայի հետագա ուժեղացումը՝ ռազմական գործողություններ սկսելով նախ՝ Պաղեստինի, հետո էլ՝ Լիբանանի դեմ: Մի՞թե սա մեծ պատերազմի սկիզբն է:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԵՆ

Վերջապես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները հանդես եկան վաղուց սպասված մի հայտարարությամբ, որ իրենք այլևս ընդունակ չեն փոխզիջումային նոր տարբերակներ առաջարկել և, փաստորեն, դադարեցնում են իրենց գործունեությունը: Եթե հարցի քննարկումն այլ ձևաչափով չվերսկսվի, հույս կա, որ հայ ժողովուրդը մեկընդմիշտ կձերբազատվի «Ղարաբաղյան հակամարտության միջազգային կարգավորում» կոչվող պատրանքից, կապավինի սեփական ուժերին և ինքնուրույն կավարտի այն մեծ գործը, որ սկսել է 1988-ին: Այս ընդհանուր առմամբ դրական արդյունքի կողքին մենք ականատես ենք նաև շատ ցավալի իրողությունների:

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահող Մեթյու Բրայզա

Բանակցային սեղանին դրված և գոնե հայկական կողմի հավանությանն արժանացած վերջին տարբերակի պաշտոնական բացահայտումը համանախագահների կողմից Ռոբերտ Քոչարյանի և մյուսների համար ծանր հարված էր: Այն, ինչ առաջ գիտեին միայն հարցով մասնագիտորեն զբաղվողները, և ենթադրում էին շատերը, հիմա հաստատապես իմացավ ամբողջ ժողովուրդը: Ոչ ոք այլևս չի կասկածում, որ տարիներ շարունակ սուտ հայրենասիրական կեցվածք ընդունած վարչախումբը բանակցությունների ողջ այս ընթացքում ի վիճակի չի եղել կամ չի էլ ուզել պաշտպանել հայ ժողովրդի արդար իրավունքը: Օտարահաճ ստրկամտության պատճառով նրանք ընդունել են մի շարք ստորացուցիչ պայմաններ, որոնց թվում են բոլոր ազատագրված տարածքների (նեղ միջանցքից բացի) հանձնումը, ադրբեջանցիների վերադարձն ինչպես այդ շրջաններ, այնպես էլ Շուշի, Խոջալու և այլ բնակավայրեր, Արցախի փաստացի վերադարձն իր խորհրդային կարգավիճակին և օտար զինուժի տեղակայումը:

Բացահայտմանը հետևեց Երևանում իշխող վարչախմբի բողոքը, թե իբր տարբերակը միակողմանի է ներկայացվել և չի արտացոլում հայկական կողմի համար նպաստավոր կետերը: «Բա կորիդորը...»,- զարմանում էր պարոն Օսկանյանը՝ նույնիսկ այս դեպքում նկատի ունենալով ոչ թե տարածքը, այլ միայն դրանով անցնող ճանապարհը: Ինչպես պարզվեց, երկրորդ նպաստավոր կետը, ըստ նրա բացատրությունների, այն էր, որ Քարվաճառը հակառակորդին պետք է հանձնվեր ոչ թե անմիջապես՝ 5 շրջանների հետ, այլ Բերձորի հետ և միայն հանրաքվեից հետո: Այն հանրաքվեից, որը, հայտնի չէ, թե երբ և ում մասնակցությամբ պետք է կայանա և ընդհանրապես կկայանա արդյոք: Ահա և բոլորը: Ի՞նչ աստիճանի անամոթ պետք է լինի մարդ, նույնիսկ եթե քաղաքական գործիչ է, որ Արցախյան պատերազմի ավարտից 12 տարի անց այս ողորմելի նախագիծը համարի հայանպաստ:

Բայց պարզվում է, որ այդպիսի անամոթները մեր քաղաքական դաշտում ավելի քան շատ են: Հաջորդ օրերին հեռուստաեթերով և մամուլի էջերում նույն անամոթությամբ աչքի էին ընկնում մի շարք պալատական մտավորականներ և քաղաքագետներ: Խոսրով Հարությունյանը, օրինակ, փորձում էր բացատրել, թե որն է Արցախյան խնդրում մեր՝ հայերիս նպատակը, իսկ որը՝ դրան հասնելու միջոցը, և եզրակացրեց, որ Մինսկի խմբի այս առաջարկը նույնպես կարող է մեր նպատակին հասնելու միջոց լինել: Էլ ավելի ողորմելի էր դիտվում Ղարաբաղյան շարժման երբեմնի կարկառուն գործիչ Սուրեն Զոլյանը, ով նույնպես հրապարակված տարբերակը հավասարակշռված է համարում, սակայն կարծում է, որ տարածքների հանձնման և հանրաքվեի անցկացման կետերը մի քիչ անորոշ են և պետք է որոշակիացվեն: Իսկ Դաշնակցության պաշտոնյա Կիրո Մանոյանը բացահայտ հայտարարում է, որ թեկուզ իրենք մի քիչ դեմ են, բայց ոչ իրենք, ոչ էլ որևէ մեկը Հայաստանում չի ընդվզի, եթե հիշյալ տարբերակը ստորագրվի: Վերջապես ի հայտ եկան «երիտասարդներ», որոնք սկսեցին պաշտպանել իրենց իշխանություններին՝ քննադատելով Մինսկի խմբին այն առաջարկների համար, որոնց նույն այդ իշխանությունները բազմիցս իրենց համաձայնությունն են տվել:

Բացահայտումը շփոթեցրեց նաև հիշ-ամետ ընդդիմությանը, որն անընդհատ կրկնում էր, թե իբր Քոչարյանը չի ուզում զիջումների գնալ և հարցը կարգավորել: Վերջին տարբերակի հրապարակումից հետո պարզվեց, որ Քոչարյանն ավելին է պատրաստ եղել զիջելու, քան իրենք կերևակայեին: Փաստորեն, ակնհայտ դարձավ, որ ոչ թե Քոչարյանն է տապալել Տեր-Պետրոսյանին, այլ Տեր-Պետրոսյանն է իշխանության բերել Քոչարյանին և մյուսներին, որպեսզի մի կողմից՝

նրանց ձեռքով շարունակի իր պարտվողական քաղաքականությունը, մյուս կողմից՝ անձամբ ինքը զերծ մնա «դավաճանի» պիտակից: Այսօր իշխանությունների պարտվողականությանը, անկախ իրենց դիմադիր-ընդդիմադիր լինելուց, բացահայտ սատարում են բոլոր «արևմուտքցիները», նույնիսկ բանակում չծառայելու համար ձերբակալված և իրեն քաղբանտարկյալ հռչակած, ծայրահեղ ընդդիմադիր «Ժամանակ» թերթի խմբագիր Արման Բաբաջանյանը: Այսպիսով, ավարտվում է նաև «նախկին-ապազգային» և «ներկա-իբր ազգային» իշխանությունների հակադրության մասին խաղը: Սրանից անակնկալի եկած հիշ-ամետների մի մասն էլ, մասնավորապես՝ «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը, ստիպված կոչ է անում ընդունել այս առաջարկությունը՝ հայտարարելով, թե հակառակ դեպքում պատերազմ կլինի, որից իրենք վախենում են:

Սակայն ինչո՞ւ են բոլոր այս գործիչները շարունակում քննարկել Մինսկի խմբի առաջարկած և արդեն երկու անգամ (Ռամբույեում և Բուխարեստում) մերժված տարբերակը, եթե անգամ դրա հեղինակ, «ճգնաժամային խմբի» ներկայացուցիչ Սաբինա Ֆրայզերը հուսահատված հայտարարում է, որ. «Ռամբույեից առաջ ավելի մեծ էին խաղաղության հասնելու և օկուպացված տարածքներից հայկական զորքերի դուրսբերման, ադրբեջանցի բռնի տեղահանվածների վերադարձի հույսերը, քան 2006-ի երկրորդ կեսին կամ 2007-ի առաջին կեսին: Այժմ այդ հույսը չի նշմարվում, իսկ համանախագահները հայտարարում են իրենց գործունեությունը շարունակելու աննպատակահարմարության մասին»: Նա նաև «չի հավատում նոր միջնորդների ի հայտ գալու հավանականությանը»:

Ոմանց կարծիքով, համանախագահների հայտարարությունն ավելի շատ վերջնագիր է արտահայտում, քան հուսահատություն: Դրա համար էլ հատկապես ամերիկացի համանախագահ Բրայզայի հայտարարություններին պետք է լուրջ վերաբերվել: Եվ, իրոք, համանախագահները երկրների ղեկավարներից պահանջում են քայլ անել: Նույն Սաբինա Ֆրայզերը սպառնում է, թե. «Մենք մտնում ենք շատ սարսափելի մի փուլ, երբ կողմերի միջև որևէ խաղաղ բանակցություն չի լինի»: Միջազգային հանրությունն իր գործն ավարտված է համարում, առաջարկված տարբերակը՝ միանգամայն հավասարակշռված, և սպասում է, որ երկրների նախագահները համոզեն իրենց ժողովուրդներին, թե դրանից լավ տարբերակ չի կարող լինել, և ստորագրեն փաստաթուղթը: Երկկողմանի սպառնալիք է պարունակում նաև այն հայտարարությունը, թե «կողմերը չպետք է ակնկալեն միջազգային հանրության աջակցությունը խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու դեպքում»: Այսինքն՝ մի կողմից վախեցնում են Հայաստանին հավանական պատերազմով, մյուս կողմից՝ Ադրբեջանին, որ չեն աջակցի, եթե նա գնա ռազմական ճանապարհով:

Իսկ իրականում ո՞ւմ է հասցեագրված այս ճնշումը: Եթե Ալիևին, ապա ակնհայտ է, որ նա չի ենթարկվում դրան և փուլից փուլ խստացնում է իր դիրքորոշումը: Եթե Քոչարյանին, ապա նույնպես ակնհայտ է, որ անգամ արդեն խոստացված զիջումների կեսն իրականացնելը նրա համար քաղաքական ինքնասպանություն կնշանակի: Իսկ միգուցե միջազգային հանրության նպատակն էլ հենց դա՞ է: Այդ դեպքում հնարավոր է, որ փաստաթղթի բացահայտման իրական նպատակը Հայաստանում իշխող խմբակին մերկացնելն էր: Սակայն ավելի հավանական է, որ ոչ մի ճնշում էլ չկա և երբեք չի եղել այնպիսի ճնշում, որին կողմերը չկարողանային դիմադրել: Համանախագահները պարզապես հոգնել են անիմաստ զբաղմունքից և հարմար ձև են գտել՝ այդ բեռից ազատվելու համար: Նրանք բոլորն էլ Ղարաբաղյան խաղաքարտից բացի բավականաչափ լծակներ ունեն՝ տարածաշրջանում իրենց ազդեցությունն ապահովելու համար:

Մնում է հասկանալ, թե Ադրբեջանն ինչու է մերժում փաստաթուղթը: Չէ՞ որ դրանով նա ստանում է սկզբից հինգ, հետո՝ երկու շրջան, վերադարձնում է իր մարդկանց ոչ միայն այնտեղ, այլև նախկին ԼՂԻՄ-ի տարածք, որտեղ անցկացվելիք հանրաքվեն ինքը միշտ կարող է խափանել կամ խաղաղապահների օգնությամբ իր ուզած ձևը պարտադրել և այդպիսով, ի վերջո, Արցախն ամբողջությամբ ենթարկել իրեն: Սա հասկանալու համար պետք է պատկերացնել, թե ինչ երազներ են տեսնում Բաքվում: Դրանցում կա նավթ, որը նախ՝ դոլարների, իսկ հետո էլ՝ հզոր սպառազինության է վերածվում: Դրա օգնությամբ պատժվում են հայերը, որոնց այլևս կարիք չի լինի ինքնավարություն տրամադրել: Նրանք պարզապես դուրս կշպրտվեն Ղարաբաղից, միգուցե նաև Մեղրիից և այլ «ադրբեջանական» շրջաններից՝ ապահովելով երկրի միատարրությունը: Եվ այդ դեպքում միջազգային հանրությունը ոչինչ չի կարող ասել. չէ՞ որ հայերն իրենք չհամաձայնվեցին Քելբաջարը հանրաքվեից առաջ հանձնել: Այս երազի իրականություն դառնալու հավանականությունն Ադրբեջանում մեծ են համարում, որովհետև համոզված են, որ հայերը շատ թույլ են և գնալով ավելի են թուլանում: Այլապես խեղճերն ինչպես հասկանան, թե ինչու է պաշտոնական Երևանն այդքան պատրաստակամ նվաստացուցիչ զիջումների, իսկ ընդդիմության մեծ մասը դրա համար ոչ միայն չի քննադատում նրան, այլև պահանջում է ավելի մեծ զիջումների գնալ: Ի՞նչ իմանան ադրբեջանցիները, որ այս բոլոր քաղաքական ուժերը կապ չունեն հայ ժողովրդի հետ և չեն արտահայտում նրա կամքը, այն կամքը, որի ուժով ազատագրվեց Արցախը, և որը, թեկուզ մեծ զրկանքների գնով, բայց կարող է ադրբեջանական երազը վերածել բոլորովին այլ իրականության: Գիտակցո՞ւմ են արդյոք նրանք, որ պատերազմի մասին երազելով՝ իրենք երազում են այն մասին, թե ինչպես Գանձակն ու Նախիջևանը ժամ առաջ կհանձնեն դրանց իրական տերերին:

Ինչևէ, Ղարաբաղյան հակամարտության միջազգային կարգավորումն ավարտվում է: Եթե անգամ առկա է միջազգային ճնշման մի վերջին ճիգ, ապա հայ ժո-

ղովուրդն այն հեշտությամբ հետ կմղի: Մնում է ամենակարևորը՝ մեր ուղեղներից ընդհանրապես ջնջել «միջազգային կարգավորում» արտահայտությունը: Մի ամբողջ տասնամյակը բավական է, որպեսզի հասկանանք, որ օտարները մեր հարցերը լուծել չեն կարող: Համենայն դեպս, մեր պատկերացրած ձևով երբեք չեն լուծելու: Մենք նոր չպետք է համոզվենք, որ Մինսկի խմբի համանախագահների երևակայությունը երբեք էլ աչքի չի ընկել բազմազանությամբ: Նրանց բոլոր առաջարկությունների հիմքում եղել է մեկ՝ հայ ժողովրդի համար բացարձակապես անընդունելի բանաձև՝ «տարածքներ՝ կարգավիճակի դիմաց»: Դրա ցանկացած տեսքով կիրառման դեպքում հայությունը ոչ միայն կզրկվեր հայրենի տարածքներից, այլև կկորցներ անվտանգության կարևոր երաշխիքներ, ինչը կարճ ժամկետում կհանգեցներ Արցախի եւ Սյունիքի հայաթափմանը:

Ով էլ փորձի փոխարինել Մինսկի խմբին, ավելի լավ բան չի առաջարկելու: Հետևաբար՝ մենք ինքներս երբեք չպետք է ձգտենք վերականգնել բանակցային գործընթացը կամ հարցերը տեղափոխել միջազգային ատյաններ: Արցախյան շարժումը մենք ենք սկսել, անցել ենք մեզ պարտադրված ռազմական փուլով և վիժեցրել հակառակորդի ծրագրերը: Անցանք նաև դիվանագիտական փուլը և թույլ չտվեցինք, որ մեր հին ու նոր ապազգային ղեկավարներն ընդառաջ գնան միջազգային թելադրանքին: Այժմ սկսվում է մի նոր փուլ, որտեղ մենք ազատ ենք և կարող ենք միակողմանի ծրագրեր իրականացնել: Մենք պետք է գործով ապացուցենք, որ տերն ենք մեր հայրենիքի նորազատ հատվածի: Արցախյան շարժումը շարունակվում է: Նրա ներկա փուլի գլխավոր խնդիրն ազատագրված բոլոր շրջանների լիարժեք բնակեցումն է հոծ գյուղական, մասամբ նաև քաղաքային բնակչությամբ: Գյուղատնտեսական ներուժի առումով այդ տարածքները համարժեք են Արարատյան դաշտին և պետք է ունենան նրան համեմատական թվով ու մեծությամբ բնակավայրեր, բնակչություն և զարգացած ենթակառուցվածք: Զուգահեռաբար մենք պետք է հիշենք նաև պաշտպանության մասին և միշտ պատրաստ լինենք հակազդել ցանկացած ոտնձգության: Բանակի թիկունքն ապահովելու համար առաջնային ուշադրություն պետք է դարձվի շփման գծին հարող շրջանների բնակեցմանը:

Այս ծրագրերի իրագործումը, սակայն, չի կարող ղեկավարել զիջումների պատրաստ ներկայիս վարչախումբը: Չեն կարող ղեկավարել նաև ներկայիս ընդդիմադիրների մեծ մասը, որոնք, դեռ իշխանության չեկած, արդեն պատրաստ են ամեն բան զիջել: Նոր առաջնորդներ են անհրաժեշտ, որոնք հենց հիմա և բարձրաձայն կհայտարարեն, որ Արցախը, ներառյալ ազատագրված բոլոր շրջանները, Հայաստանի անբաժան մասն են, և կգործեն դրան համապատասխան:

ՆԱԽԱԴԵ՞Ր ԵՆ ԱՐԴՅՈՔ ՉԵՌՆՈԳՈՐԻԱՆ ԵՎ ԿՈՍՈՎՈՆ

Մայիսի 25-ին նախկին Հարավսլավիայի մաս կազմող Չեռնոգորիան հանրաքվեով առանձնացավ Սերբիայից: Այդ օրերին Մինսկի խումբը դեռ չէր բացահայտել իր առաջարկությունը, և մեր իշխանությունները ոգևորված խոսում էին Լեռնային Ղարաբաղում անկախության նոր հանրաքվե անցկացնելու հնարավորության մասին: Ղարաբաղյան հարցի միջազգային կարգավորման կողմնակիցները սկսեցին զուգահեռներ տանել Չեռնոգորիայի և չճանաչված մյուս պետությունների, հատկապես՝ Ղարաբաղի միջև և դիտարկել այն որպես շատ օգտակար նախադեպ: Հարավսլավական թնջուկից ծնված երկրորդ նախադեպը, որ հաճույքով դիտարկում էին մեր քաղաքագետները, Կոսովոն էր:

Սակայն իրականում ի՞նչ են ներկայացնում Չեռնոգորիայի և Կոսովոյի նախադեպերը: Առաջին դեպքում խոսքը որոշակի սահմաններում արդեն գոյություն ունեցող մի պետության մասին է, նման խորհրդային միութենական հանրապետություններին, որն իր տարածքում հանրաքվե անցկացրեց և դուրս եկավ միության կազմից այն բանից հետո, երբ այնտեղից բոլորն արդեն դուրս էին եկել, և մնացել էին միայն Սերբիան և Չեռնոգորիան: Ընդ որում, նշենք, որ հանրաքվեին մասնակցում էին Չեռնոգորիայի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունները, այդ թվում՝ բավականին մեծ թվով սերբեր, մոտավորապես այնքան, որքան ժամանակին Ղարաբաղում ադրբեջան-

ցի էր բնակվում: Բացի այդ, չեռնոգորցիները նույն սերբերն են և վերջին տարիներին Սերբիայի հետ որևէ խնդիր չեն ունեցել: Հանրաքվեն ավելի շատ եվրոպացիների պահանջն էր և Սերբիային ուղղված պատժամիջոցներից խուսափելու միջոց: Սերբիան ինքն էլ շատ դեմ չէր Չեռնոգորիայի անկախությանը:

Եթե մենք Ղարաբաղյան խնդրի լուծման համար որպես նախադեպ վերցնում ենք Չեռնոգորիայի անկախությունը, դա ենթադրում է, որ Ղարաբաղը պետք է վերականգնվի այն վիճակում, ինչ որ Խորհրդային Միության ժամանակ էր, այնտեղ պետք է հետ գան տեղի ադրբեջանցիները, և հետո հանրաքվեի միջոցով Ղարաբաղը հռչակի իր անկախությունը: Սակայն ամենակարևորն այստեղ այն է, որ այս տարբերակի ճշգրիտ կիրառման դեպքում հանրաքվե ասվածն անցկացվելու է նախկինում ամրագրված սահմանների ներսում: Ղարաբաղի դեպքում դրանք ԼՂԻՄ-ի սահմաններն են՝ առանց ազատագրված տարածքների: Փաստորեն, մասամբ հենց չեռնոգորիական տարբերակն է այսօր դրված Միջազգային ճգնաժամային խմբի առաջարկների հիմքում: Դրա կիրառությունը ենթադրում է, որ ինքնաբերաբար հանձնվում են մնացած բոլոր ազատագրված տարածքները, հանձնվում է մեզ համար կենսական նշանակություն ունեցող Արաքսի ափը, Հայաստանի հետ սահմանն էլ կամ ընդհանրապես վերանում է, կամ ինչոր կարգավիճակով միջանցք է մնում: Միջազգային իրավունքով և Չեռնոգորիայի անկախությամբ ոգևորված մեր քաղաքագետներին, բնականաբար, չի մտահոգում այն, որ Ղարաբաղյան կարգավորման ընթացքում չեռնոգորիական նախադեպը կիրառելու դեպքում մեր հայրենի տարածքները նորից հանձնելու ենք Ադրբեջանին: Ինչո՞ւ հանկարծ Ստալինի օրոք գծված, բայց վաղուց արդեն գոյություն չունեցող ԼՂԻՄ-ի արհեստական սահմաններն այդքան դժվար է ջնջել որոշ գործիչների մտապատկերից:

Ինչ վերաբերում է Կոսովոյին, ապա այն ավելի ցածր մակարդակի՝ ինքնավար մարզի կարգավիճակ ունեցող միավոր էր Սերբիայի կազմում, որի տարածքում ծավալվեցին պատերազմական գործողություններ, որոնց ընթացքում եղան սերբերի տեղահանություններ: Արտաքին աջակցության շնորհիվ այստեղ ձևավորվեց դեռևս չճանաչված ինքնուրույն պետություն: Արտաքուստ այն, ինչ կատարվել է Կոսովոյում, բավականին նման է Ղարաբաղում տեղի ունեցածին, և միգուցե այս նախադեպը կարող էր օգտակար լինել Ղարաբաղյան հիմնախնդրի միջազգային կարգավորման հարցում:

Սակայն կա երկու պատճառ, թե ինչու մենք չպետք է ուզենանք այդ մոդելը կիրառել Արցախի դեպքում:

Առաջինն այն է, որ Կոսովոյի անկախացումը Սերբիայից տեղի ունեցավ միջազգային հանրության միջամտության արդյունքում, իսկ նման միջամտության դեպքում ցանկացած խնդիր, որպես կանոն, լուծվում է հօգուտ միջամտողի, այլ ոչ թե օրենքով կամ արդարությամբ: Հարավսլավիայի դեպքում բացահայտ է, որ խնդիր էր դրված քանդել այդ դաշնապետությունը, թուլացնել սերբական գործոնը, միջամտել այդ տարածաշրջանի գործերին՝ այդ կերպ ազդելով ներեվրոպական գործընթացների վրա: Այսինքն՝ այն, ինչ կատարվել է Կոսովոյում, ըստ էության, եղել է ագրեսիա Սերբիայի դեմ, ինչը քողարկվել և քողարկվում է արհեստական, իրավական հիմնավորումներով: Կոսովոյի բանակը, օրինակ, ամբողջովին զինվել է արևմտյան ուժերի կողմից, որից հետո «խաղաղապահների» աջակցությամբ տեղակայվել է ալբանացիներով բնակեցված տարածքներում և այդ նույն «խաղաղապահների» թողտվությամբ կոտորել սերբերին ու արտաքսել: Այնինչ այդ շրջանը պատմականորեն և, ընդհանրապես, բոլոր իմաստներով սերբական է, իսկ մահմեդականացված ալբանացիները՝ օսմանյան տիրապետության հետևանք: Մեր դեպքում պատկերը միանգամայն այլ է՝ ճիշտ հակառակը: Արցախը հայկական է եղել: Նախահարձակը եղել է Ադրբեջանը: Եվ առնվազն միամտություն է կարծել, թե միջազգային հանրություն կոչվածը, որն իր շահերից ելնելով, փաստորեն, հովանավորեց կոսովացիների ագրեսիվ գործողությունները Սերբիայի դեմ և հետո էլ նրանց անկախանալու և սեփական պետություն ստեղծելու հնարավորություն տվեց, նույն հնարավորությունը կարող է տալ նաև մեզ: Միջազգային հանրության շահերն այս տարածաշրջանում ադրբեջանամետ լուծում են թելադրում:

Բացի այդ, երկրորդ պատճառը, որ մենք չպետք է ուզենանք Կոսովոյի տարբերակը որպես նախադեպ վերցնել մեզ համար, այն է, որ դրա կիրառման դեպքում փոխվում է Ղարաբաղյան խնդրի էությունը: Այսինքն՝ եթե մենք ընդունում ենք այդ տարբերակը, մենք առնվազն ընդունում ենք, որ ճիշտ կոսովացիների նման ագրեսիվ գործողություններ ենք իրականացրել, մեր դեպքում՝ Ադրբեջանի նկատմամբ: Մինչդեռ մենք ազատագրել ենք պատմական և իրավական տեսանկյունից մեզ պատկանող տարածքները:

Կոսովոյի և Ղարաբաղի միջև զուգահեռներ անցկացնողներն ագրեսիվ և ազատագրական գործողությունները, փաստորեն, դնում են իրար կողքի, նույն հարթության վրա: Դա նույնիսկ փոխում է մեր իսկ վերաբերմունքը մեր խնդրի նկատմամբ: Ինքներս մեզ դնում ենք կոսովացի ագրեսորի կարգավիճակում, մեր արմատականները սկսում են բարձրաձայնել, թե գրավել ենք, լավ ենք արել, մեր զիջողներն էլ՝ դե գրավել ենք էլի, պետք է վերադարձնենք: Երկու դեպքում էլ ամրագրվում է մեկ բան. մենք գրավել ենք մեզ չպատկանող տարածքներ, այլ ոչ թե ազատագրել ենք և, պարզ է, ազատագրածից ոչինչ էլ չենք վերադարձնելու: Այս իմաստով որևէ զուգահեռ անցկացնելը Ղարաբաղի հետ տեղին չէ:

Այնպես որ, թե Չեռնոգորիայի և թե Կոսովոյի տարբերակների ոչ միայն կիրառումը, այլև Արցախի հետ համեմատությունն անգամ ընդունելի չէ: Սա ևս մեկ անգամ վկայում է միջազգային կարգավորման անհնարինության և անպիտանության մասին և ևս մեկ անգամ ի ցույց դնում քաղաքական մտքի սնանկությունը, երբ այն սնվում է արտաքին աղբյուրներից:

ՋԱՎԱԽՔԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԱԴԻԱՏՈՐ ՉԷ

Պատասխան Հրանտ Տեր-Աբրահամյանի «ԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՄԻՆՈ» հոդվածին (Հայկական ժամանակ, 15 ապրիլի, 2006թ.)

Արդեն բավական ժամանակ է, ինչ չի մարում այն տպավորությունը, թե Հայաստանում ինչ-ինչ ուժերի հանձնարարվել է Ջավախքի խնդիրը ներկայացնել բացառապես ռուս-վրացական հարաբերությունների համատեքստում, որտեղ ռուսները հանցագործ են, վրացիները՝ տուժող, իսկ հայերը, մասնավորապես՝ ջավախքահայությունը՝ խաղալիք օտար հանցագործի ձեռքին: Նույն ուժերի երկրորդ խնդիրը ժողովրդին սարսափեցնելն է ենթադրյալ նոր հակամարտության մեջ ներքաշվելու հեռանկարով:

Իհարկե, պետք է նկատել, որ տեղական մամուլում հայերին, մասնավորապես՝ ջավախքցիներին որպես բուք գործիք ներկայացնելն ինքնանպատակ չէ: Դա տեղի է ունենում մեկ այլ՝ հակառուսական քարոզչության համատեքստում: Դա ենք նկատում նաև Հրանտ Տեր-Աբրահամյանի ակնհայտորեն հակառուսական երանգ ունեցող հոդվածաշարի հրապարակումներից մեկում, որը վերնագրված էր «Ետխորհրդային Միմինո» (Հայկական Ժամանակ, 15 ապրիլի, 2006թ.):

Ռուսաստանին տեղի և անտեղի մեղադրելն այսօր նորաձև է դարձել, և քաղաքական գրչակները հենց դրանով են զբաղված: Ռուսներին մեղադրել, իհարկե, կարելի է, երբեմն նույնիսկ անհրաժեշտ է և շատ արդար: Սակայն անթույլատրելի է, երբ Ռուսաստանին քարկոծելիս դիտավորությամբ կամ անտարբերության պատճառով չնկատելու են տալիս հայկական ինքնուրույն գործոնը, խեղաթյուրում են նրա նշանակությունը, միայն թե առավել պատկերավոր դարձնեն Ռուսաստանի վնասակարությունը, խոցեն մեր ժողովրդի արժանապատվությունը և այդ կերպ մղեն նրան ավելի հակառուսական դրսևորումների: Դա անելու իրավունքը չունեն հատկապես ազգային նկարագիր և վերլուծական միտք ունեցող հեղինակները, ինչպիսին իր նախկին հրապարակումների մեծ մասում ներկայանում է Հրանտ Տեր-Աբրահամյանը: Ուստի՝ չենք կարող լռությամբ արձագանքել հայ-վրացական հարաբերություններին նվիրված նրա հոդվածի որոշ մտքերին, որոնք ծայրաստիճան վտանգավոր ենք համարում:

«Ларису Ивановну не хочу», «ՁԵՐ ՆՄԱՆՆԵՐԸ ԽԱՅՏԱՌԱԿՈՒՄ ԵՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆ» ԵՎ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ՝ «ՎԱԽ ՄԱՄԱ ՋԱՆ, ԷՍ ԻՆՉ Ա ԿԱՏԱՐՎՈՒՄ»

Հակառուսականությունը Հայաստանում նաև ներքաղաքական նշանակություն ունի, որովհետև Մոսկվայի հետ «ռազմավարական գործակցության» բնույթը և դրա հատկապես տնտեսական ծանր հետևանքներն իշխող վարչախմբին ներկայացվող գլխավոր մեղադրանքներն են: Սակայն նույն այդ հակառուսականությունը հաճախ շաղախված է բացահայտ արևմտամետությամբ, որը ներկայացվում է որպես այլընտրանք: Սա ևս մեկ անգամ հաստատում է, որ քարոզարշավն ընթանում է ոչ միայն ներքին տրամաբանությամբ, այլև արտաքին գործոնն միջամտությամբ: Հետևաբար՝ կարելի է զանազանել հայկական հակառուսականությունը տարածաշրջանից Ռուսաստանին դուրս մղելու միջազգային ծրագրից:

Այն, որ Ռուսաստանը նախկինում էլ, այսօր էլ մեծ վնասներ է պատճառել իրեն բարեկամ համարող ժողովուրդներին և առաջիններին թվում՝ մեզ, վաղուց գաղտնիք չէ: Նրա կայսերական քաղաքականությունը մի քանի անգամ կործանման եզրին է հասցրել հայությանը: Որոշ դեպքերում դա տեղի է ունեցել ակամա՝ այլ խնդիրներ հետապնդելիս կամ ներռուսական խառնաշփոթի պատճառով, բայց ավելի հաճախ հայավնաս գործողությունները եղել են նպատակային: Սրա գիտակցումը միշտ էլ հատուկ ցավ է պատճառել նրանց, ովքեր ինչ-որ ժամանակ հավատացել են ռուսներին, երախտապարտ են եղել նրանց՝ օրհասական պահերին ձեռք մեկնելու համար:

Այսօր իրավիճակը բավականին փոխված է: Կարելի է ասել, որ հայությունը վաղուց արդեն հաղթահարել է հյուսիսին հավերժ պարտական լինելու բարդույթը: Անհրաժեշտության դեպքում նա ռուսի դեմ էլ կարող է զենք բարձրացնել, ինչպես որ դա արդեն արել է 1991-ին Գետաշենում, դրանից առաջ էլ՝ Լեռնահայաստանում: Ռուսների ձեռքին կույր գործիք լինելու մասին խոսելուց առաջ այս դրվագները նույնպես անհրաժեշտ է ինչ-որ կերպ մեկնաբանել:

Նույնիսկ Հայաստանում իշխող խմբակը, որն ինչ-ինչ պատճառներով պինդ բռնել է Ռուսաստանի փեշը, իրականում ռուսասեր չէ: Նա մեծ հաճույքով կփոխեր ռուսական փեշը ամերիկյանով, եթե այդ հնարավորությունը նրան տրվեր: Ամեն ինչ կախված է նրանից, թե որն է նպատակդ, և ինչ գին ես պատրաստ վճարել՝ դրան հասնելու համար: Ինչ վերաբերում է իշխանությանը, ապա նրա նպատակը հայտնի է: Տեսնում ենք նաև, թե ինչ գին է վճարվում դրա դիմաց: Սակայն հայ-ռուսական գործակցությունը, այսինքն՝ ոչ թե բարեկամությունը, այլ ամենահիսկական առևտուրը, միայն այս հարթության մեջ չէ, որ ընթանում է: Իր անվտանգության խնդիրները լուծելու համար Հայաստանն ինչ-որ տեղից պետք է զենք ստանա, և այս իմաստով մենք իսկապես կանգնած ենք դժվարին ընտրության առաջ: Պետք է ուսումնասիրել այն փաստարկը, որ ռուսական էժան զենքն իրականում շատ ավելի թանկ է: Սա ներազգային քննարկման լուրջ խնդիր է: Մենք, սակայն, չենք կարող այն լուծել, եթե շարունակենք չնկատել հայ ժողովրդի միանգամայն ինքնուրույն և էական գործոն լինելը, եթե հերթական անգամ ինքներս մեզ գործիք համարենք:

Վերջին ամիսներին ակնհայտ երևում է, որ անգամ Հայաստանի ռուսամետ իշխանություններին հնարավոր չէ մեղադրել Ջավախքում տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Այս դեպքում նրանք ավելի քան վրա-

ցամետ են. իշխանամետ թերթերը գործակալներ են կոչում ջավախքցի «ծայրահեղականներին», կագեբեական ճնշումների են ենթարկում հայ-վրացական «թշնամանք հրահրողներին» և ցուցադրական միջոցառումներ են կազմակերպում վրաց դեսպանի մասնակցությամբ: Ինչ վերաբերում է ընդդիմությանը, ապա նրա բոլոր հատվածները կամ անտարբեր են Ջավախքի խնդիրների նկատմամբ և ասելիք չունեն, կամ իրենց ցուցադրական արևմտամետության պատճառով պարտավոր են պաշտպանել պարոն Սահակաշվիլուն ու նրա պետությանը:

Մնում է մեղադրել ժողովրդին, մասնավորապես՝ ջավախքահայությանը: Բայց ժողովրդին մեղադրելը մի քիչ բարդ է, որովհետև եթե նույնիսկ այնտեղ ռուսների գործակալական հզոր ցանց է գործում, ապա այն դժվար թե հաջողության հասներ, եթե չլինեին առարկայական պատճառներ, իսկ եթե այդ պատճառները կան, ժողովուրդն առանց գործակալների էլ կարող է ժամանակ առ ժամանակ ընդվզել: Ավելի որոշակի խոսենք. Ախալքալաքում «ռուսական» չնչին դրսևորումներ, այնուամենայնիվ, նկատելի են, որոնցից ամենաաղմկոտը մեկ զրահամեքենայի ճանապարհը փակելն էր, ինչը, սակայն, շարունակություն չունեցավ, և Ախալքալաքի զրահատեխնիկայի կեսն արդեն դուրս է բերվել: Սա է Ռուսաստանի առավելագույն կարողությունը կամ ցանկությունը, և եկեք ինքներս նրան «ուժ» և «նպատակներ» չվերագրենք, այլ լայն բացենք մեր աչքերը և տեսնենք, թե ռուսներից բացի քանի երկրի գործակալ է արդեն Ջավախքում գործում, և փորձենք հասկանալ, թե որն է սրանց հայտնվելու պատճառը: Իսկ պատճառը մեկն է. նրանք մեզնից լավ գիտեն, թե ինչ գործոն է հայը Վրաստանում, տարածաշրջանում, Բաքու-Ջեյհանի երկայնքով, և ուզում են այն հնարավորինս վերահսկելի դարձնել:

Ջավախքում միակ գործոնը հայերն են: Մնացածը՝ բոլորի, այդ թվում՝ Վրաստանի, Հայաստանի իշխանությունների, Ռուսաստանի, Ֆրանսիայի կամ Գերմանիայի հատուկ ծառայությունների գործողությունները, ուղղակի կամ անուղղակի ածանցվում են այդ հանգամանքից և որոշակիորեն հակադարձման բնույթ են կրում: Սա է իրողությունը, որը պետք է տեսնել, կարևորել և ընդունել: Դրա համար անհրաժեշտ է և բավարար մի քիչ շփվել Ջավախքի ժողովրդի հետ և հասկանալ, թե նա ինչի մասին է մտածում, ինչի դեմ է ընդվզում, այլ ոչ թե հեռու գնացող դատողություններ անել այն չնչին փաստից, թե Ջավախքի խնդիրը տեղեկատվական դաշտ է ներթափանցում այն ժամանակ, երբ ռուսներն են դա ուզում: Եթե տեղեկատվական դաշտը ռուսներինն է, բա էլ ե՞րբ թափանցեր: Իսկ եթե չթափանցեր, դրանից կեզրակացնեինք, որ Ջավախքի խնդիր ընդհանրապես գոյություն չունի՞:

ՁԵՌՆՏՈՒ՞Ի ԱՐԴՅՈՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ

Հայաստանին Վրաստանի թուլացումը ձեռնտու չէ, ընդհակառակը, ձեռնտու է Վրաստանի ուժեղացումը, բայց Վրաստանի, այլ ոչ թե այն մինի-կայսրության, որն իր գոյությունը երկարաձգելու համար միշտ օտար հզորների հովանավորության կարիքն է ունեցել և այսօր էլ ունի առավել քան երբևէ: Վրաստանը՝ իբրև կայսրություն, չի կարող ուժեղ լինել և վտանգում է ամբողջ տարածաշրջանի ինքնուրույնությունը: Ընդ որում, հայությանն ուղղված սպառնալիքն ամենամեծն է, քանի որ այսօր Թբիլիսիի հովանավորների թվում է նաև Թուրքիան: Վրաց պետության տարածքում իրականացվող բոլոր ծրագրերը զգալի չափով համաթուրանական բնույթ ունեն և օբյեկտիվորեն հակահայկական են:

Մեզ միայն բարեկամական Վրաստանի հզորացումն է ձեռնտու: Սակայն այսօր վրաց հանրության մեծամասնությունն անգամ իր կառավարությունից ավելի հակահայ է: Այս թշնամանքը ոչ մի կապ չունի երկրների «աշխարհաքաղաքական տարբեր կողմնորոշումների» հետ, ինչպես կարծում է Հրանտ Տեր-Աբրահամյանը: Այն ավելի շատ նման է թերարժեքության համազգային բարդույթի և այդ պատճառով ավելի ցայտուն դրսևորվում է հատկապես մտավորականների շրջանում: Պատմական խեղաթյուրումների, հուշարձանների յուրացումների գլխավոր իմաստը հայերի և նրանց պատմության հետ մրցելն է: Թբիլիսիում արագ են սպառվում այն թերթերը, որոնք հակահայկական հոդված են պարունակում: Նույնիսկ Աբխազիայի կորստի համար մեղավոր են հայտարարված հայերը:

Բացի այդ, վրացիները քաջ գիտեն, որ Ջավախքում՝ Վերին և Ներքին, Թռեղքում և Գուգարքի մյուս շրջաններում հայերը սեփական հողի վրա են և ցանկության դեպքում հեշտությամբ կարող են անջատվել Վրաստանից: Այդ վախն է պատճառը, որ թեկուզ ջավախքցիները ձայն էլ չհանեն, վրացիները, միևնույն է, օրական մի քանի անգամ հայտարարում են, թե Ջավախքին ինքնավարություն չեն տրամադրի: Սրան գումարվում է նաև այն ենթադրությունը, թե Ջավախքի հայերը սպառնալիք են Վրաստանի տարածքով անցնող նավթամուղների, գազամուղների, երկաթգծերի և մայրուղիների համար, իսկ Թբիլիսին դրանց անվտանգությունն ապահովելու պարտավորություններ է ստանձնել: Հետևաբար՝ քաղաքական թշնամանքը նույնպես ուղղակիորեն հայերի դեմ է, այլ ոչ միայն այն հայերի, որոնք իբրև թե ռուսների դաշնակիցն են:

Մյուս կողմից՝ Վրաստանն այսօր իրեն ուժեղ է համարում և կարծում է, թե կարող է աստիճանաբար ազատվել Ջավախքի հայ բնակչությունից, փոխել շրջանի ազգային կազմը և մեկընդմիշտ ազատվել նոր «անջատողականության» վտանգից: Նրանց գոտեպնդում է այն հաշվարկը, թե Հայաստանի շրջափակված լինելը Երևանի նկատմամբ ճնշման և նրան Ջավախքի խնդիրներից մեկուսացնելու արդյունավետ միջոց է:

Որքան էլ Վրաստանում շատ լինեն հակահայ դրսևորումները, այնուամենայնիվ, չմոռանանք, որ նման վերաբերմունքի են արժանանում նաև այդ փոքրիկ կայսրության մյուս ժողովուրդները, որոնցից երկուսն արդեն հեռացել են:

Խորացող այլատյացության գլխավոր պատճառը Վրաստանի ծիծաղելի կայսերական հավակնություններն են, որոնք նրան մի արտաքին ուժից մյուսի գիրկն են նետում՝ թշնամացնելով նախորդի հետ: Օրինակ՝ մտնելով Ցարական Ռուսաստանի կազմի մեջ և հետագայում՝ խորհրդային տարիներին էլ, Վրաստանը ստացավ շատ արտոնություններ, Թիֆլիսը դարձավ Կովկասի կենտրոն, ոչ վրացական շատ գավառներ հանձնվեցին նրա ենթակայությանը: Այսօր, սակայն, Վրաստանը բոլորից ավելի թշնամաբար է տրամադրված նույն Ռուսաստանի դեմ: Բայց բացառված չէ, որ մի օր նորից դիմի նրա օգնությանը, եթե թուլանա իր ներկա հովանավորները, միայն թե պահպանի իր ներկայիս տարածքը և իշխանությունն այնտեղ ապրողների

նկատմամբ: Սակայն այդպես հավերժ չի կարող շարունակվել: Վրաց մինի-կայսրությունը վաղ թե ուշ փլուզվելու է: Դրան պետք է օժանդակել ոչ թե վրացիներին ատելու պատճառով, այլ նրանց հետ արդար վարվելու և, ի վերջո, բարեկամանալու համար: Անհրաժեշտ է օգնել վրաց, մեգրել, սվան և մյուս ժողովուրդներին ազատվել այս հիվանդագին վիճակից և ապրել հարևանների հետ հաշտ և համերաշխ:

ԳՈՒԳԱՐՔ ԵՎ ՈՉ ԹԵ ԲՈՐՉԱԼՈՒ

Դրանտ Տեր-Աբրահամյանի հոդվածը վտանգավոր մտքեր էր պարունակում նաև Բորչալուի ադրբեջանցիների հետ կապված: Դրանցից առաջինը վերաբերում էր ադրբեջանցիների միջոցով վրացիների դեմ գործելուն: Հեղինակն այս առաջարկն ուղղում է մեկ «ազգանվեր տղերքին», մեկ էլ հատուկ ծառայություններին և հիմնավորում է «անուղղակի հարվածի մարտավարության արդյունավետությամբ»: Այսինքն՝ առաջարկում է գործել վրացիների դեմ, բայց ոչ թե Ջավախքում, այլ ինչ-ինչ անհասկանալի ձևերով Մարնեուլիի ադրբեջանցիներին դրդել, որպեսզի նրանք հակամարտության մեջ մտնեն վրացիների հետ:

Դրան հակասում է նույն հոդվածում առկա մյուս վտանգավոր միտքը, որը հայ-վրացական՝ քրիստոնեական դաշինքի կոչ է պարունակում՝ ընդդեմ մահմեդականության: Այսինքն՝ վրացիների հետ դաշինք կնքելու համար մենք պետք է նրանց դեմ տրամադրենք ադրբեջանցիներին, որպեսզի հետո վերջինների դեմ պայքարում օգնենք վրացիներին ու դաշնակից դառնանք: Որպեսզի ավելի համոզիչ հնչի հայ-վրացական յուրօրինակ դաշինքի գաղափարը, առաջ է քաշվում այն փաստարկը, թե հայ-վրացական թշնամանքը Ռուսաստանից բացի ձեռնտու է նաև Թուրքիային և Ադրբեջանին:

Բոլոր այս դատողությունները քննադատության չեն դիմանում:

Հայ ժողովուրդը երբեք անուղղակի հարվածների ընդունակ չի եղել, և սա թերություն չէ: Ավելին՝ հայերը երբեք նախահարձակ չեն լինում: Թշնամանքի բոլոր տեսակ դրսևորումներին ջավախքահայությունը միշտ համարժեք է հակադարձելու և ոչ ավելին: Իսկ այսօր ընդհանրապես անիմաստ է քննարկել պետության կողմից անուղղակի ծրագրեր իրականացնելու հնարավորությունը:

Քրիստոնեական դաշինքի վերաբերյալ. հայ ժողովուրդը երբեք չպետք է հակադրվի մահմեդականությանը կամ նրա որևէ ճյուղին և ներգրավվի, այսպես կոչված, «քաղաքակրթությունների պատերազմին»: Ընդհակառակը, մենք կարող ենք և պարտավոր ենք կամուրջի դեր խաղալ արևմտյան և մահմեդական աշխարհների միջև: Բացի այդ, վրաց եկեղեցին այսօր շատ է հեռացել հոգևոր ակունքներից, վերածվել է ծայրահեղ ազգայնական կառույցի և փաստացի պատերազմ է հայտարարել հայ եկեղեցուն և Ջավախքի ժողովրդին, ինչը բացառում է կրոնական բնույթի որևէ դաշինք:

Վերջապես, Թուրքիան և Ադրբեջանը Վրաստանի դաշնակիցներն են: Նրանց կապն այսօր Վրաստանի տարածքն է, իսկ Թուրքիան վերջինի թիկունքն է հակառուս պայքարում: Ու թեև Վրաստանն ունի ժողովրդագրական դժվարություններ, և նրան արդեն սպառնում է բնակչության աստիճանական թրքացումը, այնուամենայնիվ, Թբիլիսին այսօր չի կարող հրաժարվել պանթուրքական տարանցիկ շրջանի իր դերից և, որքան էլ չսիրի սեփական ադրբեջանցիներին, միևնույն է, շարունակելու է Բաքվի հետ ռազմավարական դաշնակցությունը: Մի խոսքով, Վրաստանը դեռ երկար ժամանակ մնալու է մեր հակառակորդների դաշնակիցը:

Այդուհանդերձ, հաստատենք, որ Վրաստանի ադրբեջանցի բնակչությունը բավականին ճնշված վիճակում է: Եթե ջավախքցիների հետ վրացիները նույն կերպ վարվեին, Ջավախքը վաղուց ապստամբած կլիներ: Սակայն այս հանգամանքը երբեք չպետք է շփոթեցնի: Եթե հանկարծ հայ-վրացական հարաբերությունները հակամարտության տեսք ստանան, համոզված կարելի է ասել, որ տեղի ադրբեջանցիները, ինչպես նաև մեսխեթցի կոչվող թուրքերը հեշտությամբ օգտագործվելու են Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի իշխանությունների կողմից: Որոշակի պահից էլ կարող է պարզվել, որ մեր պայքարը ոչ այնքան Վրաստանի դեմ է, որքան թուրք-ադրբեջանական ծրագրերի, որոնց այսօր ծառայում է Վրաստանը: Կարևոր է նկատի ունենալ, որ Կուրից հարավ ընկած շրջանները երբեք վրացաբնակ չեն եղել և այսօր էլ չեն: Քվեմո-քարթլի կոչվածը նույնպես Գուգարաց աշխարհի մի մասն է, որ մեծամասամբ հայաթափվել է և բնակեցվել թրքալեզու բնակիչներով: Այնուամենայնիվ, հայերը շարունակում են բնակվել Ծաղկայում, Բոլնիսում, Մարնեուլում: Վրաստանի իշխանությունն այդ շրջաններում նույնքան պայմանական է, որքան Ջավախքում: Եթե մի օր պայքար ընթանա ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այդ տարածքների համար, ապա գլխավոր կողմերը դարձյալ լինելու են հայերն ու թուրք-ադրբեջանցիները, իսկ վրացիներն ինքնաբերաբար խաղից դուրս են հայտնվելու:

Վրաց պետությունը փորձելու է կանխել նման զարգացումը, փորձելու է փոխել այդ տարածքների ազգային կազմը, վրացացնել: Սակայն մինչ այդ նա շարունակելու է սպասարկել տարածաշրջանում թուրք-ադրբեջանական շահերին, քանի դեռ համոզված է, որ Հայաստանն ավելի թույլ կողմն է և Թուրքիայից շատ ավելի փոքր դերակատարություն ունի տարածաշրջանում:

* * *

Մտահոգված լինելով այն հանգամանքով, որ հայ-վրացական հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվական հոսքում բավականին մեծ է ռուսական աղբյուրների դերակատարությունը, արևմտյան տարբեր կենտրոններ փորձում են այլընտրանքային տեղեկատվություն ապահովել՝ զուգահեռաբար կազմակերպելով հայ-վրացական հանրային երկխոսություն: Ընդ որում, հայտարարվող նպատակը հայ-վրացական բարեկամությունն է և կայունությունը տարածաշրջանում:

Սակայն մեծ համոզվածությամբ կարելի է պնդել, որ անգամ Վրաստանին շատ ձեռնտու այս նախաձեռնությունները տապալվելու են, քանի որ ինչպես պաշտոնական Թբիլիսին, այնպես էլ հանրային ներկայացուցիչների մեծ մասը տառապում են այն աստիճան կասկածամտությամբ, որ նույնիսկ հայերենի ավելի ազատ գործածության կամ հայոց պատմության դասավանդման մեջ անջատողականություն են տեսնում: Հետևաբար՝ մեծ է հավանականությունը, որ իրականում տեղի ունենա իրենց երևակայածը: Չէ՞ որ կասկածամտությունը ծնում է ոչ համարժեք և թշնամական վերաբերմունք և արժանանում նույնպիսի պատասխանի:

«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՋԱՎԱԽՔ»-Ի ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

2006թ. հունիսի 24-ին Ախալքալաքում բազմաթիվ գյուղերից և քաղաքներից ժամանած ութ հարյուրից ավել պատվիրակների մասնակցությամբ տեղի ունեցավ «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինք կազմակերպության համագումարը: «Միասնական Ջավախք»-ն այսօր հավակնում է վերածվել երկրամասի ամենաազդեցիկ և ամենազանգվածային կազմակերպության:

Համագումարի ընթացքում մասնակիցներն անդրադարձան ջավախքահայությանը հուզող հիմնական հարցերին, որոնցից առաջինը վերաբերում էր հայոց լեզվի կարգավիճակին: Նրանց հայտարարության մեջ ասվում է, որ. «Հայոց լեզուն հասարակական և քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում, առաջին հերթին՝ կրթական և վարչարարական բնագավառներում, իրավահավասար կերպով գործածելու երկրամասի հայ բնակչության իրավունքը սկզբունքային է և անվիճարկելի, հիմնարար է և ամրագրված է միջազգային բազմաթիվ նախադեպերում: «Միասնական Ջավախք»-ը կենտրոնական իշխանություններին կոչ է անում սեղմ ժամկետներում կանոնակարգել հայոց լեզվի վարչարարական և կրթական ոլորտներում գործածման մեխանիզմները՝ որպես միակ պետական լեզվի նկատմամբ իրավահավասար և այլընտրանքային լեզու»:

Նման պահանջ արձանագրվեց նաև դպրոցներում հայ ժողովրդի պատմությունն ուսումնասիրելու հարցում: Մասնավորապես՝ դաշինքի նախագահության անդամ Վահագն Չախալյանն իր ելույթում նշեց, որ յուրաքանչյուր ազգային փոքրամասնություն մարդկային և քաղաքացիական իրավունք ունի դպրոցում ուսանելու սեփական ժողովրդի պատմությունը: «Ինչո՞ւ է մեր այս արդարացի պահանջն անընդհատ հանդիպում հակազդեցության: Պետք է հասնել նրան, որ մեր մատաղ սերունդը հնարավորություն ունենա ոգեշնչվել մեր պատմության փառապանծ էջերով, ինչպես նաև շարունակի լիարժեք կրթություն ստանալ մայրենի լեզվով: «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքն անդրդվելիորեն պայքարելու է հայոց լեզվի ազատ գործածման իրավունքի համար: Վրացերենը Վրաստանի պետական լեզուն է: Այդուհանդերձ, Ջավախքում և հարակից շրջանների հայաշատ վայրերում հայերենին պետք է տրվի վրացերենին իրավահավասար տարածաշրջանային լեզվի կարգավիճակ: Հայ ազգաբնակչությունը կհաստատի կյանքի բոլոր բնագավառներում հայերենն ազատորեն գործածելու սեփական անվիճարկելի իրավունքը»,- ընդգծեց զեկուցողը:

Վ. Չախալյանն անդրադարձավ նաև Ջավախքում ռուսական ռազմաբազայի փոխարեն այլ զորք տեղակայելու հավանականությանը: Նա մասնավորապես նշեց, որ. «Ջավախքահայությանը մեծապես հուզում է ռուսական ռազմակայանի դուրսբերումից հետո նույն տեղում վրացական ռազմական ներկայության հաստատման խնդիրը: Պարզ չէ, թե որն է դրա անհրաժեշտությունը: Այսօր Վրաստանի անվտանգության հայեցակարգը դիտարկում է Թուրքիան որպես ռազմավարական դաշնակից, իսկ Հայաստանը՝ բարեկամ պետություն: Ուրեմն՝ արտաքին ո՞ր վտանգից է մեզ պաշտպանելու զորամասը: «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքն ամենայն պատասխանատվությամբ հայտարարում է, որ անվերապահորեն պայքարելու և կանխելու է տարածաշրջանային կայունությունը խարխլող և ջավախքահայության անվտանգությանը սպառնացող յուրաքանչյուր ոտնձգություն»:

Կարս-Ախալքալաք երկաթուղու կառուցման մասին «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքի տեսակետն այն է, որ այդ նախաձեռնությունը բխում է Թուրքիայի և Ադրբեջանի՝ Ջավախք և ամբողջ Վրաստան ներթափանցելու և Հայաստանը մեկուսացնելու բացառապես քաղաքական շարժառիթներից: Այդ նախագիծը հակասում է թե Վրաստանի և թե Հայաստանի արմատական շահերին:

Վերջապես, իր հայտարարությամբ դաշինքը դատապարտեց վրացական իշխանությունների՝ «երկրամասում ժողովրդագրական իրավիճակն այլափոխելու քաղաքականությունը»՝ նշելով, որ «նման գործելաոճն առաջ է բերում կենտրոնական իշխանությունների հանդեպ երկրամասի բնակչության աճող և հիմնավոր անվստահությունը, բացասաբար է անդրադառնում ընդհանուր քաղաքական իրադրության վրա՝ նպաստելով ազգամիջյան փոխհարաբերությունների խարխլմանը և ապակայունացնող գործընթացների շարունակական խորացմանը»:

Համագումարի ելույթների և ընդունված բանաձևերի առանձնահատկությունն այն էր, որ դրանցում չէր խոսվում ինքնավարության պահանջների մասին: Փոխարենը՝ շեշտը դրվում էր այն պահանջների վրա, որոնց Ջավախքի հայ բնաչությունն իր կազմակերպված քայլերով կարող է հասնել արդեն այսօր: Այնուամենայնիվ, «Միասնական Ջավախք»-ը հնարավոր չէ չափավորական կազմակերպություն համարել, հատկապես եթե հաշվի առնենք, որ նրա շարքերում համախմբված են և առաջնորդող դիրք են զբաղեցնում վերջին շրջանում հայ բնակչության շահերը հետևողականորեն պաշտպանող ուժերը:

Համագումարի կայացման փաստին շտապեցին արձագանքել Վրաստանի բարձրաստիճան պաշտոնյաները: Հակառակ այն բանի, որ համագումարն ընդհանրապես չէր բարձրացրել Ջավախքին ինքնավարություն տրամադրելու հարցը, միևնույն է, վրաց խորհրդարանի խոսնակ Բուրջանաձեն և վարչապետ Նողայիդելին շտապեցին հայտարարել, որ հայերի ինքնավարության պահանջներն անհիմն են, և իրենք չեն պատրաստվում նոր ինքնավարություն ստեղծել: Նրանք նաև «Միասնական Ջավախք»-ի անդամներին ժողովրդի մեջ հեղինակություն չունեցող ծայրահեղականներ կոչեցին՝ չնկատելով, որ համագումարը բավականին ներկայացուցչական էր, դրան մասնակցում էին ոչ միայն վերջին շրջանում վրացական ապօրինություններին համարժեքորեն հակադարձող երիտասարդները, այլև Ախալքալաքի և Նինոծմինդայի քաղաքապետերը, մի շարք գյուղապետեր, մտավորականներ և ժողովրդական բոլոր շերտերի ներկայացուցիչներ:

ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՌԱՋ

ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԵՐ

Երրորդ հանրապետությունում անցկացված բոլոր ընտրությունները՝ թե Ազգային ժողովի, թե նախագահական, թե համայնքային, ինչպես նաև երկու սահմանադրական հանրաքվեները, էական չափերով կեղծվել են: Հետևաբար՝ ոչ մի հիմք չկա պնդելու, թե չեն կեղծվի 2007 և 2008 թվականներին նախատեսված խորհրդարանական ու նախագահական ընտրությունները: Բնական հարց է առաջանում, թե ի՞նչ իմաստ ունի մասնակցել դրանց, եթե, միևնույն է, իշխանությունը կեղծիքներով վերարտադրվելու է: Ընդդիմադիր ուժերի մեծ մասը շատ դժվարությամբ է կողմնորոշվում այս հարցում: Բանն այն է, որ եթե նրանք հրաժարվում են հերթական ընտրություններից, ապա կանգնում են ծանր ընտրության առաջ: Կամ պետք է հրաժարվեն բոլոր տեսակ քաղաքական հավակնություններից, կամ պետք է փորձեն իշխանության գալ հեղափոխական մեթոդներով: Կուսակցապետերի մեծամասնությունը դժվարանում է խոստովանել, որ չունի բավարար գաղափարական և կազմակերպական ներուժ, պատրաստ չէ զոհողությունների և այդ պատճառով չի կարող հեղափոխական դառնալ: Հետևաբար՝ որքան էլ ընդդիմությունը խոսի ընտրությունների կեղծման մասին, միևնույն է, նրան այլ բան չի մնում անել, քան մասնակցել այդ կեղծվելիք ընտրություններին: Սակայն եթե հաշվի առնենք, որ կեղծարարների կողմից ընդդիմության համար սահմանափակ թվով տեղեր են հատկացվելու, ապա պարզ է դառնում, որ ընդդիմադիրները պայքարելու են ոչ այնքան իշխանությունների, որքան իրար դեմ՝ այդ տեղերը միմյանցից խլելու նպատակով:

Ընտրությունները կարևոր փորձաշրջան են նաև իշխանամետ թևի համար: Երկրում իշխող խմբակն ընտրությունից ընտրություն որոշ վերադասավորումներ է իրականացնում իրեն կից կուսակցությունների ցուցակում, որպեսզի թարմացնի իր քաղաքական իմիջը, ավելի հուսալի և հնազանդ հեռանկարներ ունենա օրենսդիր և գործադիր մարմիններում: Ուստի՝ իշխանամետներն ընտրություններին նախորդող շրջանում ձգտում են ամեն կերպ իշխող խմբակին ցուցադրել իրենց կարևորությունն ու անփոխարինելիությունը: Իսկ գործարարները, որոնք իշխանությունների իրական հենարանն են, չեն ուզում հենց այնպես փող տալ կուսակցություններին: Նրանք հայտնի զույգի հանձնարարությամբ կամ ձևավորում են սեփական քաղաքական միավորները կամ անդամակցում են որոշակի կուսակցության: Այդպիսով նրանք աստիճանաբար գրավում են զուտ կուսակցական իշխանամետների տեղերը:

Բոլոր իշխանամետները գիտակցում են՝ ինչքան էլ իրենք պայքարեն միմյանց դեմ, միևնույն է, համատեղ ջանքերով չպետք է թույլ տան, որ հարցերը լուծվեն օրինական դաշտում: Հակառակ դեպքում իրավիճակից կարող են օգտվել ընդդիմադիրները: Հետևաբար՝ իշխանամետների պայքարն ունի որոշ սահմանափակող կանոններ, որոնք սահմանում են իշխանության իրական տերերը: Իսկ նրանց համար իշխանամետ կուսակցությունների ժողովրդականությունն առաջին փաստարկը չէ: Այնուամենայնիվ, այս բևեռում ևս տեղերը քիչ են, քան հավակնորդները, և բոլորովին էլ բացառված չէ, որ իշխանամետների միջև մրցակցությունն այն աստիճան սրվի, որ շարունակվի նաև ընտրությունների օրը և դրանից հետո՝ կարևոր դարձնելով քվեները:

Ստացվում է, որ հերթական ընտրություններից առաջ և դրանց ընթացքում պայքարելու են ոչ թե ընդդիմադիրներն իշխանամետների դեմ և հակառակը, այլ յուրաքանչյուրն իր դաշտում՝ կեղծարարների կողմից ի սկզբանե հատկացված տեղերը բաշխելու նպատակով: Սակայն նրանց հաշվարկները զգալիորեն կխառնեն երրորդ ուժերը: Վերջիններս ոչ միայն կարող են մի քանի տեղ պոկել իշխանամետներից կամ ընդդիմադիրներից, այլև որոշակի զարգացումների դեպքում ունակ են ընդհանրապես ձախողել ընտրությունների հետ կապված բոլոր նախնական սցենարները:

Այս հանգամանքները բոլոր խաղացողների համար էլ կարևոր են դարձնում բուն ընտրությունները՝ տեղ չթողնելով արտահերթ իշխանափոխության մասին ընդդիմադիրների խոսակցություններին, և դժվար հաղթահարելի խոչընդոտներ ստեղծում իշխանությունների ինքնավերարտադրման ճանապարհին:

ԺԱՌԱՆԳՈՐԴԸ ԵՎ ՆՐԱ ԹԻՄԸ

Նախագահի պաշտոնավարության ժամկետի սահմանափակումը ստեղծել է մի իրավիճակ, երբ իշխանական վերանախավը ստիպված է որոշել Ռոբերտ Քոչարյանի ժառանգորդին: Քանի որ Հայաստանում իշխանությունը չափից ավելի կենտրոնացված է երկու առանցքային անձանց շուրջ, ապա բնական է ենթադրել, որ Քոչարյանի իրավահաջորդը պետք է դառնա Սերժ Սարգսյանը: Սակայն նույնիսկ այս հեռանկարը կապված է մի շարք բարդությունների հետ:

Նախ՝ Ռոբերտ Քոչարյանը դժվարությամբ է պատկերացնում իրեն առանց իշխանության և ուզում է, ինչ-որ դիրք գրավելով, պահպանել դրա գոնե մի մասը: Այս համատեքստում են նրա վարչապետ դառնալու մասին խոսակցությունները: Դա են ցանկանում նաև այն ուժերը, որոնք նախընտրում են գործ ունենալ Ռոբերտ Քոչարյանի հետ, այլ ոչ թե Սերժ Սարգսյանի: Քոչարյանի հեռացումը նրանց համար դիրքերի կորուստ է նշանակում: Երկրորդ՝ Սերժ Սարգսյանն ունի բավականին ցածր վարկանիշ, և մարդիկ դժվար են պատկերացնում նրան երկրի նախագահի դերում: Այդ մասին գիտի նաև ինքը՝ ժառանգորդը: Սակայն եթե Սերժ Սարգսյանը որոշի դառնալ վարչապետ, դժվար կլինի գտնել որևէ քաղաքական գործիչ, որին ինքը կարող է վստահել նախագահի աթոռը և համոզված լինել, որ վերջինս իրեն չի դավաճանի: Այդ դեպքում նա նաև իր դեմ կտրամադրի անձամբ Ռոբերտ Քոչարյանին և այն իշխանամետներին, ովքեր նախընտրում են վերջինիս հետ գործ ունենալ: Վերջապես, Սերժ Սարգսյանը բարդությունների կարող է հանդիպել միջազգային հան-

րության կողմից ընդունվելու հարցում, հատկապես եթե Արևմուտքի կողմից հովանավորվի ինչ-որ ընդդիմադիր առաջնորդ, և ընտրությունները տեղի ունենան մեծածավալ կեղծիքներով: Այս բոլոր դժվարություններով հանդերձ՝ այսօրվա դրությամբ գոնե Սերժ Սարգսյանի համար սեփական թեկնածությանն այլընտրանք գոյություն չունի:

Ապագա նախագահին խորհրդարանում հնազանդ մեծամասնություն է անհրաժեշտ: Ուստի՝ պատահական չէ, որ պաշտպանության նախարարն ակտիվորեն ձեռնամուխ է եղել ապագա խորհրդարանում իրեն հավատարիմ մեծամասնություն ձևավորելու գործընթացին: Ընդ որում, նրա պատկերացրած մեծամասնությունը բավականին տարբերվում է քոչարյանական կոալիցիայից: Այդ միավորման մեջ առանցքային տեղ է հատկացված միայն «Հանրապետական» կուսակցությանը: Դրա շարքերում Սերժ Սարգսյանը միավորում է իր բոլոր թիմակիցներին, նույնիսկ դատախազ Աղվան Հովսեփյանի հովանավորյալներին և «Ժողպատգամավորներին»՝ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ, որոնք ի սկզբանե պետք է հանդես գային այլ՝ «Միավորում հանուն Հայաստանի» կուսակցությամբ:

Այս գործընթացն այնքան էլ սահուն չի ընթանում: «Հանրապետական»-ին զուգահեռ՝ Գագիկ Ծառուկյանի «Բարգավաճ Հայաստան»-ի շուրջ ձևավորվում է մեկ այլ թիմ, որն ավելի շատ հավատարիմ է Ռոբերտ Քոչարյանին: Դաշնակիցմրցակից այս երկու ճամբարները փոփոխական հաջողություններով դեպի իրենց են ձգում մեծ ու փոքր գործարարներին, տեղական հեղինակություններին և ծառայամիտ ակտիվիստներին: Երբ այս մրցույթում Գագիկ Ծառուկյանը մի պահ առաջ անցավ, խոսակցություններ տարածվեցին, թե նույնիսկ որոշ հայտնի հանրապետականներ մտածում են իրենց ճամբարը փոխելու մասին: Հավանաբար, սա էր պատճառը, որ Սերժ Սարգսյանը որոշեց ժամանակից շուտ հայտարարել իր քաղաքական թիմի մասին, միավորել այն մեկ տանիքի տակ՝ ստիպելով երկմտող թիմակիցներին ընտրություններից շատ առաջ հավատարմության երդում տալ անձամբ իրեն:

Այսօր շատերին է հուզում այն հարցը, թե ինչպես կդասավորվեն այս երկու թևերի փոխհարաբերությունները: Կկարողանա՞ն նրանք համաձայնության գալ նախքան ընտրությունները, թե՞ ստիպված կլինեն դա անել ընտրություններից հետո՝ արդյունքները միասին կեղծելիս: Միգուցե հակասություններն այնքան կխորանան, որ ընդհանրապես հնարավոր չի լինի համաձայնության գալ, և դրանից կօգտվեն երրորդ ուժերը: Իսկ միգուցե այս ամենն ընդամենը խաղ է, լավ բեմականացված ներկայացում: Որն էլ ճիշտ լինի, միևնույն է, առավելագույնը, ինչին կարող է հավակնել Ռոբերտ Քոչարյանը, վարչապետի աթոռն է, որը նա կարող է ստանալ միայն իր ներկա պաշտոնը կորցնելուց հետո, իսկ Սերժ Սարգսյանը կարող է հավակնել նաև նախագահի աթոռին:

Հայաստանը կիսանախագահական սահմանադրություն ունի, և որքան էլ ընդլայնվեն վարչապետի լիազորությունները, միևնույն է, նախագահն է, որ ընկալվելու է որպես իշխանության առաջին դեմք: Նա երբեք չի դառնա անգլիական թագուհի, թեպետ ստիպված կլինի զգալի չափով կիսել իր իշխանությունը վարչապետի հետ: Հետևաբար, եթե ժողովուրդը հանդուրժի իշխանության ինքնավերարտադրություն, դա կնշանակի, որ մենք Ռոբերտ Քոչարյան-Սերժ Սարգսյան զույգին փոխարինեցինք Սերժ Սարգսյան-Ռոբերտ Քոչարյան զույգով: Այսինքն՝ Ս. Սարգսյանի նախագահության և Ռ. Քոչարյանի վարչապետության դեմ պայքարը նույն պայքարն է:

ՖՈՐՄԱՏԱՅԱՎ

Որքան էլ խառը լինեն գործերն իշխանական ճամբարում, այնուամենայնիվ, ընդդիմության գործերն ավելի բարդ են: Այստեղ շատ ավելի քիչ տեղերի համար այսօր պայքարում են շատ ավելի մեծ թվով գործիչներ և կազմակերպություններ: Դրանց մեծ մասի համար խորհրդարանում հայտնվելը քաղաքական ասպարեզում լինել-չլինելու հարց է: Նման պայմաններում ընդդիմադիր ուժերն անհամատեղելի երկու խնդիր ունեն լուծելու: Դրանցից առաջինը յուրաքանչյուրը պետք է լուծի ինքնուրույն՝ մրցելով գործընկերկուսակցությունների հետ, որպեսզի ընդդիմությանը հասանելիք տեղերից ավելի մեծ բաժին ստանա: Մյուս խնդիրն ընդդիմադիրները պետք է լուծեն հավաքաբար՝ փորձելով ավելացնել խորհրդարանական աթոռների ընդդիմության բաժինը: Այս խնդրի մաքսիմալիստական ձևակերպումն իշխանափոխությունն է, ինչին այսօրվա ընդդիմադիրներից գրեթե ոչ ոք այլևս չի հավատում, բայց ձևացնում է, թե դա իր գերնպատակն է: Ավելի չափավոր ձևակերպումն ընտրակեղծիքները հնարավորինս բացառելն է, ստացված ձայներին տեր կանգնելը: Այս իրարամերժ խնդիրները համատեղելու նպատակով ամիսը մեկ առաջարկվում են միասնական ընդդիմության նորանոր ձևաչափեր, որոնք բոլորն էլ մնում են թղթի վրա՝ հիասթափեցնելով և հուսահատեցնելով ժողովրդին:

Արդյունքում, մի քանի կուսակցություններ (ԱՄ, ՀԺԿ, «Հանրապետություն»), որոնք իրենց «մագիստրալ» են համարում, հայտարարում են ինքնուրույն հանդես գալու մասին՝ ենթադրելով, թե առանց դաշնակիցների էլ նույնքան ձայներ կհավաքեն: Միակ բացառությունը, թերևս, «Ժառանգություն»-ն է, որը դեռ հույս ունի բոլորին համախմբել Ռաֆֆի Հովհաննիսյանի անվան շուրջ: Անձ-կուսակցություններն էլ, չգտնելով այնպիսի անցողիկ թեկնածու, որի թիմում հայտնվելով՝ իրենք կարող են մուտք գործել խորհրդարան, փնտրում են այլընտրանքային լուծումներ: Որոշ ընդդիմադիր գործիչներ նույնիսկ մտածում են իշխանամետների ճամբար տեղափոխվելու մասին կամ արդեն տեղափոխվել են: Իսկ ով դա չի կարող կամ չի ուզում անել, դարձյալ ապավինում է միասնական ընդդիմության իրենց հարմար ձևաչափ գտնելուն:

Հաղթական ձևաչափն անհույս փնտրողների կողքին հայտնվել են գործիչներ, ովքեր գիտակցում են, որ ընդդիմության ճգնաժամը կազմակերպական չէ, այլ գաղափարական, և որ ձևաչափը չէ կարևոր, այլ առաջնորդող նպատակները: Սակայն նոր գաղափարի նրանց փնտրտուքը հանգում է դեռևս չմոռացված հնի վերակենդանացմանը: Պատահական չէ, որ դրանք մեծ մասամբ նախկին և ներկա հիշ-ականներն են, արևմտամետ մամուլը և մեկ-երկու ցուցադրական արևմտամետ կուսակցություններ, որոնցից խոշորը «Հանրապետություն»-ն է: Նրանք նորից խոսում են ազատականությունից ու ժողովրդավարությունից, ուզում են ռուսներին քշել ու ՆԱՏՕ մտնել, շատ են ուզում մասնակցել տարածաշրջանային ծրագրերին ու հանուն դրա շտապում են «արժանապատիվ խաղաղություն» կնքել Ադրբեջանի հետ և հրաժարվել Ցեղասպանությունը ճանաչելու պահանջներից: Տպավորություն է ստեղծվում, որ այս ուժե-

րին բոլորովին չի հետաքրքրում ժողովրդի աջակցությունը: Նրանք հույսներն ամբողջությամբ դրել են արտաքին ուժերի վրա:

Այս ամենը ցույց է տալիս, որ հին ընդդիմությունը, փաստորեն, սպառել է իրեն և դժվար թե կարողանա համախմբել ժողովրդին և առաջնորդել Սերժ Սարգսյանի և Ռոբերտ Քոչարյանի դեմ պայքարում: Նրա տեղն արդեն գրավում են այլ ուժեր, ինչպես օրինակ՝ «Դաշինք» կուսակցությունը, որն իրապես ունակ է խափանել իշխանության «ժառանգորդի» ծրագրերը և իր ներուժով գերազանցում է մնացյալ ամբողջ ընդդիմությանը:

ՀԱՂԹԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ

Միավորման խնդիրը վերաբերում է ոչ միայն և ոչ այնքան կուսակցություններին, որքան ժողովրդին: Սեփական հավակնություններով առաջնորդվող կուսակցական առաջնորդների միջև կայացած ցանկացած համաձայնություն անիմաստ է, եթե այն զուրկ է ժողովրդական աջակցությունից: Միայն այդպիսի աջակցություն վայելող ընդդիմությունն է ունակ հաղթել և նոր վարչակարգ հաստատել:

Հաջողության հասնելու համար ընտրողները ոչ թե քվեարկության օրը պետք է կատարեն իրենց ընտրությունը, այլ նախապես: Պաշտոնական քվեարկության ընթացքում ժողովուրդը պետք է ընտրի ոչ թե գաղափարների և դրանց լավագույն գործադրողների միջև, այլ չարի (իշխանության) և բարու (ընդդիմության) միջև: Երրորդ տարբերակ պետք է չլինի: Ոչ մի դեպքում բարին չպետք է հանդես գա բազմակի դեմքերով: Կամ-կամ, իշխանություն կամ ընդդիմություն, ընդգծված երկընտրանքի դեպքում ընտրություններին կմասնակցեն նույնիսկ ամենաանտարբերները: Ընդ որում, խոսքն իսկապես «բարի» ընդդիմության մասին է, որովհետև եթե հանկարծ ժողովրդի կողմից ընդդիմությունն էլ որպես «չար» ընկալվի, ապա ընտրությունը տեղի կունենա երկու չարիքներից փոքրագույնի օգտին, ինչը կարող է և իշխանության օգտին լինել:

Ներկայիս ընդդիմադիր բոլոր կուսակցությունները, միասին վերցրած, անդամների և համակիրների չնչին թիվ ունեն՝ մի քանի հազար: Ընտրությունների բախտը, սակայն, որոշելու են հարյուր հազարավոր ընտրողներ: Նրանց մեծ մասը քվեարկելու է ոչ թե այս կամ այն կուսակցության կամ դաշինքի օգտին, այլ փոփոխությունների: Այս իմաստով այնքան էլ կարևոր չէ կուսակցությունների միավորումը: Եթե ինչ-որ կերպ հաջողվի փոփոխությունների հույս ներշնչել և դրա շուրջ միավորել ժողովրդին, նույնիսկ ամենահավակնոտ կուսակցապետերը ստիպված կլինեն ընդունել ժողովրդի ցանկացած, այդ թվում՝ իրենց հավակնությունները չբավարարող որոշումը:

Տարբեր ձևաչափերով ընդդիմադիրների միավորվելու փորձերը ձախողվում են, որովհետև բացակայում է այն դատավորը, որը նախքան քարոզարշավը կարձանագրի յուրաքանչյուր գործչի ունեցած ժողովրդական աջակցության չափը և բոլոր հավակնորդներին իրենց արդար տեղը կհատկացնի: Կուսակցությունների առաջնորդներն այդպիսի դատավոր են համարում ընտրողներին, սակայն կեղծվող քվեարկությունից բացի նրա կամքն արձանագրելու որևէ այլ տարբերակ չեն տեսնում: Իսկ դա արդեն ուշ է: Ժողովուրդը պետք է ի սկզբանե վճռորոշ մասնակցություն ունենա համախմբման գործընթացին: Առաջնորդները չեն կարող ինքնակոչ լինել: Ժողովուրդն ինքը պետք է ընտրի իր առաջնորդներին և դա անպայման պետք է անի նախքան պաշտոնական քվեարկությունը: Քաղաքական ուժերը պետք է նման ընտրության հնարավորություն ստեղծեն բոլոր ցանկացողների համար քվեարկության օրվանից գոնե մի քանի ամիս առաջ, այլ ոչ թե փակ սենյակներում վիճեն, թե իրականում ընտրողներն իրենցից ում են նախընտրում: Ինքնակոչ, կեղծ և հավակնոտ առաջնորդների առատությունը մարդկանց զրկում է իսկական առաջնորդներին տեսնելու հնարավորությունից:

Ժողովրդին հոգնեցրած դեմքերի փոխարեն շատ ուրիշ գործիչներ կարող են զարդարել ընդդիմության միասնական ցուցակի առաջին տողերը: Դրանց թվում կարող են լինել ինչպես հայտնի, բայց համեստ անուններ, այնպես էլ դեռ անհայտ, բայց գաղափարական և քաղաքական պատրաստվածություն ունեցող անձինք, որոնց ելույթները կարող են նոր հույս հաղորդել ժողովրդին: Այդպիսի գործիչների մեծամասնությունը կուսակցականացված չէ: Որոշակի պայմանների դեպքում ընդդիմության միասնությունը կարող է կայանալ անկուսակցական, նոր, երիտասարդ անունների շուրջ: Անհրաժեշտ է նման մարդկանց համար ժողովրդին ներկայանալու հնարավորություն ստեղծել:

Ազգային նոր դեմքեր ի հայտ բերելու, նախքան պաշտոնական ընտրությունները ժողովրդական շարժման առաջնորդներին որոշելու, նրանցից հաղթական թիմ ձևավորելու և այդ թիմով ներկա իշխանությունը տապալելու տեխնիկական ձևեր գտնելը բոլորովին էլ դժվար չէ: Մասնավորապես՝ պաշտոնական քվեարկությունից առաջ կարելի է կազմակերպել այլընտրանքային խորհրդարանի ընտրություններ: Այդ խորհրդարանը կարող է կազմել ստվերային կառավարություն, միասնական ցուցակով մասնակցել ՀՀ ԱԺ ընտրություններին, ընտրակեղծիքների դեպքում այն կարող է վերածվել փաստացի ժամանակավոր իշխանության:

Սա հենց այն է, ինչ պիտի ուզենար անել ընդդիմությունը: Դժվարությունը, սակայն, այն է, որ հավակնոտ կուսակցապետերը գիտեն, որ իրականում իրենց ժողովրդականությունը բավականին ցածր է, և չեն ուզում, որպեսզի իրենց կողքին հայտնվեն ժողովրդի համակրանքը վայելող ազգային նոր առաջնորդներ: Այսօր առաջնորդ են նրանք, ովքեր ի վիճակի են անձնական կամ իրենց տրամադրված միջոցներից կուսակցություն ֆինանսավորել: Նրանք երբեք չեն համաձայնվի մասնակցել և ֆինանսավորել մի նախագիծ, որի արդյունքում կարող են ընտրվել ազգային ընդդիմության նոր առաջնորդներ, ովքեր իրենց կմղեն հետին պլան: Հետևաբար՝ ժողովրդական համախմբումը կարող է կայանալ նաև առանց ներկայիս ընդդիմության առաջնորդների և կուսակցությունների, առավել ևս, որ դրանց մեծ մասի քաղաքական պատկերացումները տրամագծորեն հակառակ են հայկականությանը և հիմնական կետերով գրեթե համընկնում են իշխող վարչակարգի վարած քաղաքականությանը:

Ընտրություններին մասնակցելը, ինչպես նաև իշխանափոխության այլ տարբերակների դիմելն անիմաստ է, եթե ժողովուրդը բավարար չափով կազմակերպված չէ հաղթական գաղափարի շուրջ, եթե մեկտեղված չեն նյութական և մարդկային ռեսուրսները: Այլընտրանքային խորհրդարանի գաղափարը հաղթական ընդդիմություն կայացնելու ձևերից միայն մեկն է: Անհրաժեշտ է ընտրել դրանցից լավագույնը և ձեռնամուխ լինել այն պայքարին, որը չի կարող սահմանափակվել հայտնի զույգին իշխանությունից զրկելով: Հայաստանում պետք է հաստատվի հայկական իշխանություն: Դեռ բավականին ժամանակ կա մինչև հերթական խորհրդարանական ընտրությունները, որպեսզի ազգային ուժերը ձևավորեն այդ իշխանության կորիզը և առաջնորդեն ժողովրդին:

IV ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎՈՒՆՔ, ԹԵ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախորդ համարում ներկայացրել ենք «Չորրորդ հանրապետության» հիմնարար սկզբունքներից մեկը՝ «ներազգային համագործակցությունը», որը պետք է փոխարինի այսօր պետական կառույցի հիմքում առկա «մրցակցության» սկզբունքին: ***Երկրորդ սկզբունքը, որն այս համարում ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը, «պարտականությունների ստանձնումն» է: Այն պետք է փոխարինի ներկայումս գործող «իրավունքի պահանջատիրությանը»:***

«Մարդու իրավունքներ» և «հիմնարար ազատություններ» բառեզրերը ժամանակակից քաղաքական բառապաշարում ամենաշատ գործածվողներից են: Այս արտահայտությունների ներքո արհեստականորեն ստեղծվել և արդի պետության մասին մեր պատկերացումների հիմքում է դրվել կեղծ արժեքների մի համակարգ, որի նպատակը մարդկանց ապակողմնորոշելն ու կառավարելի դարձնելն է: Դրանում քողարկված են մեխանիզմներ, որոնց օգնությամբ նենգափոխվում են լավի և վատի մասին պատկերացումները, ոտնահարվում են հոգևորը և բարոյականը, անհատները հակադրվում են ընտանիքներին, համայնքներին, ազգերին:

Այս հաստատումը, իհարկե, շատերը կքննադատեն: Ավելին՝ կարող են մեզ մեղադրել, թե, փոխանակ պայքարելու մեր երկրում մարդկանց իրավունքների զանգվածային ոտնահարումների դեմ, պետականաշինական բարեփոխումների անվան տակ փորձում ենք դրանք օրինականացնող համակարգ ներդնել: Նման քննադատության պատճառները հասկանալի են: «Իրավունքները» և «ազատություններն» այսօր վերածվել են քաղաքական կուռքերի: Դրանք զանգվածաբար քարոզվում են քաղաքական քրմերի կողմից որպես «բնական» և «գերագույն» արժեքներ: Բացի այդ, այս բառակապակցությունները բավականին գրավիչ են մարդկանց լայն շերտի և հատկապես նրանց համար, ովքեր հակված են ինչ-որ բաներ պահանջել ուրիշներից՝ իշխանությունից, վերադասից, դատարանից, միջազգային հանրությունից, իսկ չստանալու դեպքում՝ մեղադրել բոլորին, բացի իրենցից և դրանով արդարացնել սեփական մոլորվածությունը, անպատասխանատու անգործությունը կամ թուլությունը: Այդ պահանջկոտ վարքագիծն ուղղակիորեն բխում է անքննելի համարվող այն կեղծ ենթադրությունից, թե իբր մարդ ի ծնե և ի վերուստ ունի ինչ-ինչ «իրավունքներ» և «ազատություններ»:

Ոմանց այս ամենն իսկապես մոլորեցրել է: Մյուսները ձևացնում են, թե իբր հավատում են այդ արժեքներին: Իսկ մենք պնդում ենք, որ ոչ միայն «Չորրորդ հանրապետություն» ծրագրի շրջանակներում ու ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում աստիճանաբար հասունանում է վերոհիշյալ արժեքային համակարգն արմատապես փոխելու անհրաժեշտությունը: Առաջին հերթին դա վերաբերում է ազգային պետություններին, ինչպիսին կարող է և պետք է լինի Հայաստանը: ***Ազգ-պետություններում քաղաքացիների և պետական մարմինների փոխհարաբերությունները չեն կարող կառուցվել «իրավունքի պահանջատիրության» սկզբունքով: Ազգային կյանքի հիմքում բոլորովին այլ սկզբունքներ են գործում, ինչպիսին են «պարտականության գիտակցությունն» ու «պատասխանատվության ստանձնումը»:*** Հետևաբար՝ «հայկական չորրորդ հանրապետությունում» հենց այս սկզբունքները պետք է փոխարինեն «իրավունքներին և ազատություններին»:

Առաջարկվող փոփոխությունն իսկապես արմատական է, սակայն որոշակի դիտանկյունից նայելիս այն ոչ միայն արմատական չի թվում, այլև հանգում է պարզ՝ շեշտադրման փոփոխության: Ընդորում, այս փոփոխության անհրաժեշտությունը բխում է ներկայիս իրավագիտակցության և իրական կյանքի միջև առկա մի շարք հակասություններից: Այն ավելի շատ աստիճանական զարգացում է հիշեցնում, և քան կտրուկ շրջադարձ:

Ժամանակակից իրավական տեսության մեջ իրավունքը և պարտականությունը փոխկապակցված են հանդես գալիս: Ինչ-որ մեկի իրավունքը մեկ ուրիշի համար պարտականություն է: Օրինակ՝ ծերերի թոշակ ստանալու իրավունքը նույնն է, ինչ կենսաթոշակային հիմնադրամի՝ այդ թոշակը վճարելու պարտականությունը: Կամ, ընտրության իրավունքը ենթադրում է, որ պետական տարբեր մարմիններ պարտավոր են այն ապահովել: Իրավունք-պարտականությունների մեծ մասը վերաբերում է պետության և քաղաքացու հարաբերություններին: Այլ դեպքերում դա քաղաքացիների փոխհարաբերությունների խնդիր է: Կանաչ լույսի տակ անցնելու հետիոտնի իրավունքը, օրինակ, կապված է վարորդի՝ կարմիր լույսի տակ կանգնելու պարտականության հետ: Սակայն այս դեպքում էլ պետությունը ներկա է որպես երրորդ կողմ. եթե հանկարծ վրաերթ պատահի, նա կմիջամտի: Օրենսդրությունը կարծես բազմակողմանի մի պայմանագիր լինի, որին ակամա մասնակից են երկրի բոլոր քաղաքացիները, կազմակերպությունները և պետությունը՝ իր տարբեր օղակներով: Այստեղ մենք չենք խոսում այն մասին, թե որքանով է այդ պայմանագիրն իրագործվում, հաստատում ենք միայն դրա տեսական գոյության փաստը:

Թեև պետության շրջանակներում մարդկանց և պետական մարմինների փոխհարաբերությունները երկու կողմ ունեն, սակայն այսօր դրանցից մեկը՝ իրավունքները, ակնհայտորեն առաջին դիրք են մղված: Սահմանադրության առաջին բաժինը վերաբերում է քաղաքացիների իրավունքներին, այդ թվում՝ սեփական իրավունքները պաշտպանելուն վերաբերող իրավունքներին: Մասնավորապես՝ դրանց խախտման դեպքում քաղաքացիներն իրավունք ունեն դիմել դատարան: Իսկ նույն այդ քաղաքացիների պարտականությունների մասին ոչ մի խոսք չկա: Պետական մարմիններին վերաբերող օրենքներում նույնպես առաջ-

նային են այդ մարմինների լիազորությունները, այսինքն՝ սահմանելու, արտոնելու, հսկելու, տուգանելու, խուզարկելու, դատելու, հավաքագրելու, բաշխելու, վաճառելու, նշանակելու և այլ իրավունքները, ինչպես նաև նրանց վերապահված իրավունքների գործադրման միջոցները: Եթե նույնիսկ ինչ-որ տեղ խոսվում է այդ մարմինների պարտականությունների մասին, ապա դա ներկայացվում է որպես քաղաքացիների այս կամ այն իրավունքի բավարարման մեխանիզմ: ***Փաստորեն, օրենքով խրախուսվում է և արդեն սովորական է դարձել այն վիճակը, երբ բոլորն առաջ են քաշում իրենց շահերը, պահանջում են հարգել օրենսդրությամբ սահմանված իրենց այս կամ այն իրավունքը: Փոխարենը՝ գրեթե երբեք չի կարևորվում պարտականությունը: Օրենսդրությունը պայմաններ չի ստեղծում, որպեսզի մարդիկ իրենց առօրյա կյանքում մշտապես մտածեն սեփական՝ անհատական և հավաքական պարտականությունների մասին:***

Ահա այս համատեքստում է, որ մեր առաջարկը ձևակերպվում է որպես շեշտադրման փոփոխություն: Այսինքն՝ չասենք, որ երեխան կրթության իրավունք ունի, այլ ասենք, որ ընտանիքն իր զավակին, իսկ հանրությունը պետության միջոցով երիտասարդ սերնդին կրթելու պարտականություն ունի: Նմանապես, չասենք, որ քաղաքացին ընտրելու իրավունք ունի, այլ պարտավորեցնենք նրան մասնակցել երկրի կառավարմանը: ***Եվ ընդհանրապես, կարելի է հաստատել, որ իրականում մարդիկ ոչ անհատապես, ոչ էլ հավաքաբար ոչ մի իրավունք էլ չունեն, այլ միայն ունեն իրենց երկրում, համայնքում, ընտանիքում արդարություն, անվտանգություն, ներդաշնակ զարգացում ապահովելու պարտականություններ:***

Շեշտն իրավունքից պարտականության վրա փոխադրելն այնքան էլ աննշան և ձևական փոփոխություն չի լինի, այլ հանրային կյանքի փիլիսոփայությունը և մարդկանց հոգեբանությունը շրջող հանգամանք: Այն անխուսափելիորեն կհանգեցնի նաև օրենսդրության արմատական վերանայման, իսկ իրավագիտակցության փոխարեն կկարևորվի մեկ այլ բառեզր՝ պարտաճանաչությունը:

Այսօր մարդկանց տարբեր իրավունքների ապահովումն պետական առանձին մարմինների պարտականությունն է համարվում: Սակայն բնական է, որ դրանց հանձնարարված պարտականությունները կատարվում են ձևականորեն, երբեմն զրոյական արդյունքով կամ նույնիսկ վտանգավոր խեղաթյուրումներով: Օրինակ՝ անվճար կրթությունը չի լուծում, այսպես կոչված, ծույլիկների և միջակների կրթություն ստանալու խնդիրը, և նույնիսկ գերազանցիկները ստանում են շատ ավելի քիչ գիտելիք, քան կարող էին: Այսինքն՝ երեխաները դպրոց են գնում, բայց չեն կրթվում: Ստացվում է, որ այն ընտանիքները, որոնք օգտվում են երեխաներին անվճար կրթելու իրավունքից, չեն կատարում նրանց կրթելու իրենց պատասխանատվությունը: Իսկ եթե երեխաների կրթության իրավունքի փոխարեն այդ պարտականությունը դրվի ընտանիքների վրա, և դրան համապատասխան օրենսդրության մեջ ընդլայնվեն ընտանիքների կողմից դպրոցի, ուսուցչի, ուսուցման ձևի և բովանդակության ընտրության հնարավորությունները, ապա մենք կունենանք կրթության շատ ավելի պատասխանատու և շահագրգիռ պատվիրատուներ: Ավելին, եթե դրան զուգահեռ նաև հանրությունն իր պարտքը համարի ավելացնել կրթության ընդհանուր ծախսերը և այդ նպատակով բյուջեից միջոցներ տրամադրի հատկապես աղքատ ընտանիքներին, ապա մենք կունենանք շատ ավելի որակյալ կրթություն, քան եթե փորձենք այն որպես իրավունք պահանջել իրենց աշխատանքի պայմաններից բողոքող կին ուսուցիչներից:

Ի՞նչ է կատարվում, երբ ծնողների պարտականության փոխարեն խոսում ենք երեխայի իրավունքի մասին: Ստացվում է, որ երեխան, փոխանակ ծնողին ենթարկվելու, իր կարծ խելքով սկսում է օգտվել իր իրավունքներից՝ հաճախ դրանք յուրովի մեկնաբանելով, և բոլորովին մոռանում է իր պարտականությունների մասին: Այնինչ հենց պարտաճանաչությունն է ապահովում նրա զարգացումը: Ծնողը, դպրոցը և այլոք վերածվում են հակառակորդների, որոնք ուզում են սահմանափակել նրա ազատությունները: Այսպիսով, երիտասարդությունը հակադրվում է իբր ավանդապաշտ ավագ սերնդին, ընտանիքին, համայնքին:

Սովորելով պահանջել այս կամ այն իրավունքը՝ մարդիկ իրենց ազատում են բազմաթիվ պարտականություններից, ինչպես օրինակ, բժշկվելու իրավունքը կարծես թե ազատում է չհիվանդանալու պարտականությունից: Քանի որ գոյություն ունեն բժիշկներ և դեղեր, ուրեմն՝ կարող ենք չմտածել մեր առողջության մասին: Արդյունքում՝ տարիներ շարունակ քայքայում ենք սեփական առողջությունը, որպեսզի հետո շարունակենք այն քայքայել բժիշկների և դեղերի օգնությամբ: Ավելին, մեր իրավագիտակցությունից երբեմն բխում է, որ հիվանդ լինելը ձեռնտու է. կարող ենք մի քանի օր աշխատանքի չգնալ և վարձատրվել, ազատվել բանակից կամ հաշմանդամության թոշակ ստանալ: Հետևաբար՝ շատ կարևոր է, որպեսզի առողջությունն ամրագրվի որպես պարտականություն, այդ թվում՝ պաշտոնական բժշկության, պետական մյուս հաստատությունների և ամենակարևորը՝ ընտանիքների համար: Այսինքն՝ ընտանիքն ինքն է պարտավոր հետևել իր անդամների առողջությանը, իսկ բուժհիմնարկները պարտավոր են օգնել նրանց խորհուրդներով և հետազոտություններով: Իսկ եթե, այնուամենայնիվ, բանը հասնի բուժմանը, ապա բուժհիմնարկները պարտավոր են դա անել իրենց միջոցների հաշվին: Այս դեպքում առաջ կմղվի առողջ կենսակերպ ունենալու խնդիրը, և հասարակությունը որոշ չափով կազատվի բժշկական ծախսերից:

Քաղաքացիները որքան ընտրելու, նույնքան էլ ընտրությանը չմասնակցելու, այսինքն՝ երկրի կառավարման գործում անտարբեր լինելու իրավունք ունեն: Ստացվում է, որ մարդիկ համապետական որոշումներ կայացնելիս կարող են մատը մատին չխփել, բայց հետո նույն այդ պետությունից պահանջել ապահովել իրենց այս կամ այն իրավունքը: Ավելին՝ հաճախ է պատահում, որ մարդիկ, օգտվելով ընձեռված իրավունքներից, իրենց անպատասխանատու մասնակցությամբ ավելի շատ խանգարում են: Մասնավորապես՝ նրանք կարող են ձևականորեն մասնակցել ընտրություններին, բայց, փոխանակ ծանոթանալու թեկնածուների ծրագրերին, կարող են առաջնորդվել, օրինակ, տարատեսակ ընտրակաշառքներով կամ, որն ավելի վատ է, թեկնածուի արտաքին տեսքով կամ դերասանական շարժուձևով: Նման մարդկանց ձեռքին իրավունքը միայն վնասում է: Իսկ եթե մենք «Չորրորդ հանրապետության» սահմա-

նադրության մեջ ամրագրենք, որ քաղաքացիները ոչ թե ընտրելու իրավունք ունեն, այլ երկրի կառավարմանը մասնակցելու պարտականություն, ապա կարող ենք ունենալ ազգային որոշումների կայացման շատ ավելի արդյունավետ համակարգ: Բավական է՝ ընտրական օրենսգրքի մեջ հինգ տարին մեկ ընտրատեղամաս գնալու պարզեցված մեխանիզմը փոխենք այնպես, որ ընտրելու փաստացի հնարավորություն ունենան միայն նրանք, ովքեր պատրաստ են որոշ ճիգ թափել, հետևողականորեն և անշահախնդիր մասնակցել քաղաքական քննարկումներին: Այդպիսի համակարգում որոշիչ ձայնը կպատկանի անհամեմատ ավելի պատասխանատու քաղաքացիներին, այլ ոչ թե սերիալներ նայող տնային տնտեսուհիներին և կարոտախտով առաջնորդվող թոշակառուներին:

Երբ ընտրելու իրավունքը փոխարինվի երկրի կառավարմանը մասնակցելու պարտականությամբ, նույնաբովանդակ փոփոխություններ կկատարվեն բազմաթիվ այլ իրավունքների հետ: Օրինակ՝ դատարանով մեր շահերը պաշտպանելու իրավունքը կփոխակերպվի արդարություն հաստատելու անհատական և հավաքական պարտականությամբ: Սա ենթադրում է այնպիսի օրենսդրական փոփոխություններ, որոնք համայնքի յուրաքանչյուր անդամին հնարավորություն կտան մասնակցել իր համայնքի անդամների միջև ծագած վեճերի հարթմանը: Նույն՝ արդարություն հաստատելու պարտականությունը կենթադրի, որ ընտանիքը ոչ թե իրավունք կունենա պաշտպանել իր հարազատին՝ ազատելով նրան պատասխանատվությունից, այլ ընդհակառակը, ինքն էլ որոշակի պատասխանատվություն կկրի նրա արարքների համար: Ավելին՝ համայնքները նույնպես պատասխանատու կլինեն իրենց անդամների վարքագծի համար: Այդ դեպքում նրանց նաև առաջնային հնարավորություն պետք է տրվի իրենց անդամներին պատժելու հարցում, նույնիսկ եթե հանցանքն ուղղված է եղել այլոց դեմ:

«Իրավունքներով» մենք երբեմն քողարկում ենք մեր շահադիտականությունը: Դա օգտագործելով՝ դատական կողմը կարող է տարիներով ձգել դատավարությունը, եթե սպասվելիք արդյունքն իրեն ձեռնտու չէ: Քայքայվող ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը ձգտում է համատեղ գույքի ավելի մեծ բաժին ստանալ և դա փորձում է հիմնավորել իր ինչ-որ իրավունքներով: «Ազատությունները» նույնպես չարաշահվում են: Միավորումներ ստեղծելու, ինչպես նաև դավանանքի ազատությունների շնորհիվ երկիր են թափանցում տարբեր հատուկ ծառայություններ: Խոսքի ազատության շնորհիվ բարձրացված հանրային աղմուկի մեջ արժեզրկվում են իսկական գաղափարները, և մարդիկ զրկվում են արդյունավետ հանրային երկխոսություն ծավալելու հնարավորությունից: Այս ամենը հնարավոր չէ հաղթահարել, քանի դեռ չենք հրաժարվել «իրավունքները» և «ազատությունները» «սրբորեն» պահպանելուց:

Շատերին, սակայն, վախեցնում է այն, որ դրանցից հրաժարվելու դեպքում կարող ենք բախվել ավելի մեծ անարդարությունների: Բայց դա այդպես չէ, որովհետև իրավունքներից հրաժարումը զուգորդվում է պարտականությունների շեշտադրումով, ինչն ավելի է համապատասխանում իրականությանը: Օրինակ՝ դատական կողմերի նկատմամբ արդարության պահպանումը դատարանի պարտականությունը պետք է լինի, այլ ոչ թե կողմերի իրավունքը: Եվ այսօր էլ, եթե դատարանն այդ պարտականությունը չուզենա կատարել, որևէ իրավունքի ձևական առկայությունը կողմերին չի փրկի: Եթե ինչ-որ մարմին հատուկ ջանք չթափի և չկազմակերպի արդյունավետ հանրային երկխոսություն, դրանից զրկվածների խոսքի ազատությունը նրանց ոչնչով օգտակար չի լինի: Մենք այսօր հենց դրա ականատեսն ենք:

Առաջարկվող փոփոխությունից չի հետևում, որ «իրավունք» կամ «ազատություն» բառերն ամբողջությամբ պետք է դուրս գան շրջանառությունից: Բնական է, որ երբ հանրությունը ստանձնում է հավաքական պատասխանատվություն, ապա դա անում է պետության անունով, և գրավոր տեքստերում այն կարող է ձևակերպվել որպես պետության կողմից երաշխավորված իրավունքներ՝ երեխաների կամ ծերերի, աշխատողների կամ սեփականատերերի, բանտարկյալների կամ օտարերկրացիների: Սակայն այս իրավունքները բացարձակ և ի վերուստ տրված չեն, դրանք սահմանում է պետությունը՝ ելնելով իր խնդիրներից և հնարավորություններից, և ինքն էլ իրագործում է դրանք՝ չսպասելով, որ իրավունքի տերերը փորձեն դա իրենց ուժերով անել: Եթե պետությունն այդ չի անում կամ անում է ձևականորեն, ապա խիստ կասկածելի է, թե անհատները սեփական ուժերով կկարողանան ստանալ հռչակված իրավունքները:

Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում «իրավունք» և «ազատություն» բառերն աստիճանաբար կարող են դուրս գալ քաղաքական բառապաշարից: Օրինակ՝ ի՞նչ կարևոր է, թե մարդը սեփականության իրավունք ունի, եթե նա սեփականություն չունի: Իսկ եթե ունի, ապա բնական է, որ այն ունենալու իրավունք էլ ունի: Գողությունից և հրդեհից նրան պաշտպանում է ոչ թե սեփականության իրավունքը, այլ իր կողմից կիրառված անվտանգության և ապահովագրական միջոցառումները: Հետևաբար՝ առանց «իրավունքների» ապրելը շատ ավելի հեշտ է: Իսկ փոխարենը՝ մեր կյանքի իրական բարեփոխումներին կարող ենք ականատես լինել, եթե անհատապես և հավաքաբար մեր պարտավորությունների տերը լինենք:

Ինչպես բոլոր գրված իրավունքները չեն կատարվում, այնպես էլ չեն կատարվի բոլոր գրված պարտականությունները: Սակայն կարևոր է, որ պետական համակարգը և նրա հաստատությունները դրսևորվելու հնարավորություն տան ոչ թե հակամետ իրավունքների (հետևաբար նաև շահերի) մրցության մասնակիցներին, այլ իրենց պարտականությունը գիտակցող, հանրային կյանքի տարբեր բնագավառներում պատասխանատվություն ստանձնողներին:

Մարդ արարածն ի ծնե կանգնած է ընտրության առաջ: Նա կարող է որոշել, որ ինքն ունի միայն իրավունքներ, անգամ՝ սպանելու, գողանալու կամ շնանալու իրավունք, և ցանկության դեպքում կարող է գտնել դրանք արդարացնող ինչ-ինչ հանգամանքներ: Սակայն երբ սթափվի, կհասկանա, որ ոչ մի իրավունք էլ չունի, այլ ունի միայն պարտականություններ Արարչի և մարդկության, ազգի և համայնքի, ընտանիքի և նույնիսկ ինքն իր առջև, որոնք պետք է գիտակցի և իրականացնի ամենայն պատասխանատվությամբ: Այդ պարտականություններից գլխավորներն են սիրելն ու ծառայելը, հավատալն ու հնազանդվելը, ապրելն ու արարելը: Իսկ միակ իրավունքը սեփական պարտականությունները կատարելու իրավունքն է: Սա է «Չորրորդ հանրապետության» հիմնարար սկզբունքներից երկրորդը:

ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երբ մարդիկ համախմբվում են ազգային տարբեր նախաձեռնությունների շուրջ, նրանց մասնակցությունը համատեղ գործունեությանը, որպես կանոն, լինում է կամավորության հիմունքով:

Հետագայում գործունեությունն ընդարձակելու ցանկությունը հաճախ բախվում է կամավորական ռեսուրսի սահմանափակության խնդրին: Այսինքն՝ մարդիկ չեն կարող թողնել իրենց աշխատանքը, ընտանիքի հոգսը և ամբողջ ժամանակը հատկացնել ազգային այս կամ այն գործին: Առաջ է գալիս վճարովի աշխատանքի անհրաժեշտություն, ինչն իր հերթին սահմանափակված է լինում ֆինանսական փոքր հնարավորություններով:

Ահա այստեղ է, որ նախաձեռնողները և կազմակերպիչները հանգում են իրենց համար տխուր մի եզրակացության. հանրությունն ունակ չէ բավականաչափ ռեսուրս տրամադրել ազգային գործերին կամ ազգային կազմակերպություններին: Իսկ ահա օլիգարխները կամ արտաքին ուժերը դրանով սահմանափակված չեն: Նրանք շռայլորեն ծախսում են, ստեղծում են իրենց շահերին սպասարկող հնազանդ կազմակերպություններ, աշխատավարձով գայթակղում են նույնիսկ այնպիսի մարդկանց, որոնք այլ պայմաններում կարող էին շատ ավելի ազգանպաստ գործունեություն ծավալել:

Ինչպե՞ս վերաբերվենք, օրինակ, այն մարդուն, ով որպես կամավորական մասնակցել է Արցախյան պատերազմին, հիմա էլ ազգային մղումներ ունի, սակայն այսօր՝ տարիներ շարունակ աշխատանք չունենալուց հետո, նրան առաջարկվել է բարձր աշխատավարձով գլխավորել «Բարգավաճ Հայաստան»-ի նախընտրական շտաբերից մեկը, և նա առաջարկն ընդունել է: Ցավոք, այսպիսի օրինակները բազմաթիվ են:

Օգտվելով ժողովրդի ծանր կենսապայմաններից՝ իշխող վերնախավը քայքայում է հայության կամավորական ներուժը. պառակտում է ազատամարտիկներին, հեղինակազրկում է մտավորականներին, ապակողմնորոշում է երիտասարդներին: Այս չարիքի դեմ հնարավոր է պայքարել միայն այն գիտակցությամբ, որ ընդունելով այս կամ այն օլիգարխի, վարչակարգի կամ միջազգային կազմակերպության շահավետ առաջարկը՝ մենք զինվորագրվում ենք մեր հակառակորդների բանակներին, որպեսզի օգուտի դիմաց կորցնում ենք ավելին՝ մեր տեսակը, երկիրը, ժողովրդին: Ընտրությունները կեղծողները, իշխանությունների հանցանքներն արդարացնող «մտավորականները», կուսակցություններին հավաքաբար անդամագրվող մանկավարժական կոլեկտիվները, հանուն դրամաշնորհ ստանալու «ՁԻԱՀ–ի դեմ պայքարողները» և «մարդու իրավունքներ պաշտպանողները», ի վերջո, ճաշակելու են իրենց հարմարվողականության և անպատասխանատվության դառը պտուղները:

Փաստորեն, հայաստանյան հանրային գործունեության դաշտն այսօր կարելի է բաժանել ծառայողների երկու խմբի՝ վարձկանների և կամավորների: Յուրաքանչյուրն ինքն է ընտրում իր ծառայության տեսակը: Այդ ընտրությամբ էլ կամ ապրում և գործում է իբրև հայ, կամ իրեն դուրս է դնում հայության կազմակերպված շարքերից՝ ժամանակավոր կամ մշտապես:

Վարձկաններն իրենք նպատակներ չեն սահմանում, այլ ծառայում են համակարգի կողմից սահմանված նպատակներին, նպաստում են նրա վերարտադրությանը: Կամավորականները, ընդհակառակը, զինվորագրվում են միայն այն նպատակներին, որոնք համարում են ճշմարիտ և արդար: Իրական ազգային նպատակները հենց կամավորականներն են սահմանում՝ ծառայելու իրենց պատրաստակամությամբ, և իրենք էլ իրագործում են դրանք՝ անձնվեր մասնակցությամբ:

Վարձկաններն ավելի շատ են և ավելի կազմակերպված են թվում: Սակայն նրանց գործունեությունը, խոշոր հաշվով, անպտուղ է: Այն ազգային կյանքում որևէ էական փոփոխություն չի առաջացնում: Ապագան արարում են կամավորականները, իսկ վարձկանները միայն լրացնում են այն դատարկությունը, որը զբաղեցված չէ առաջինների կողմից: Վերնախավին կամ օտարներին ծառայելը չէ, որ վնասում է մեզ, այլ կամավորականների և նրանց համախմբող գաղափարների պակասը: Փոքր-ինչ ծայրահեղացնելով միտքը՝ կարող ենք ասել, որ եթե մարդիկ ազգային շարժման կամավորներ չեն, ուրեմն՝ նրանք իրենց անտարբերությամբ արդեն որոշ չափով ծառայում են համակարգին:

Շատ բնական պետք է համարել, որ մեր երկիրը և ժողովրդին կեղեքողները չեն ֆինանսավորում ազգային շարժումը: Նրանք քաջ գիտակցում են, որ այն, ի վերջո, արդարություն է հաստատելու, զրկելու է իրենց իշխանությունից: Նույնքան բնական է, որ օտար ուժերը, որոնք փորձում են նոր ձևերով գաղութացնել Հայաստանը, ոչ միայն չեն օժանդակի ազգային ուժի կայացմանը, այլև ամեն կերպ կխոչընդոտեն դրան՝ նախապատվությունը տալով նյութապաշտ վերնախավին, որն իրենց կողմից ավելի կառավարելի է: Հետևաբար՝ ազգային շարժումը երբեք փողով հարուստ չի լինելու: Նրա միակ հարստությունն ազգային գաղափարներին զինվորագրված կամավորականներն են՝ զոհողությունների գնալու իրենց պատրաստակամությամբ:

Յուրաքանչյուր հայ պետք է գիտակցի, որ ազգային ծառայությունն ազգային ծառայություն չէր լինի, եթե դրա համար շռայլ վարձատրություն նախատեսվեր: Գործիչները չպետք է դժգոհեն փողի պակասից, որովհետև փողով հնարավոր չէ փոխհատուցել այս կամ այն գործի համար անհրաժեշտ գաղափարական մարտիկների պակասը: Ընդհակառակը, փողի առատությունը մեծացնում է պատեհապաշտների թիվը, ինչպես նաև աննպատակ ծախսերը, ի վերջո, գործունեությունը շեղում է ճիշտ հունից: Վճարովի աշխատանքի ներգրավման դեպքում հայտնվում են ղեկավարներ ու ենթականեր, և սկսվում է նրանց ձևական գործունեությունը: Ղեկավարներն այլևս չեն համոզում, այլ հանձնարարում են, ենթականերն էլ ծուլորեն անում են այն, ինչով այդքան էլ ոգևորված չեն, և նրանց գործունեությունը հեռանում է ազգային անհրաժեշտությունից: Իսկ փողի

սակավության դեպքում և հենց դրա շնորհիվ իրագործվում են միայն այն նախաձեռնությունները, որոնք կարևորվում են բավարար թվով կամավորների կողմից: Այս կամ այն նախագծի իսկապես ազգային լինելու երաշխիքը նրա մասնակիցների անշահախնդրությունն է: Հետևաբար՝ որքան էլ բազմազան լինեն ազգային շարժումների կազմակերպչական ձևերը, դրանց ճշմարիտ ուղղվածությունը և արդյունավետությունը համեմատական է նրա շարքերում զոհողության պատրաստ կամավորականների թվին: Ազգային շարժումն անհնար է պատկերացնել առանց կամավորականության:

Կամավորականությունը նաև հոգեվիճակ է: Լինում են դեպքեր, երբ ազգային տարբեր խնդիրներ հետապնդող կազմակերպությունները չեն կարողանում խուսափել գործիչներից մի քանիսին վճարելու անհրաժեշտությունից: Նույնիսկ այս դեպքում կամավորականության սկզբունքը պետք է պահպանվի: Աշխատավարձը միշտ ավելի փոքր պետք է լինի, քան այն ստացողի ներդրումն է ընդհանուր գործում: Նախքան կազմակերպության կողմից վճարվելը մարդիկ պետք է ապացուցած լինեն իրենց նվիրվածությունը գործին, և աշխատավարձ ստանալուց հետո էլ առաջնայինը պետք է նվիրվածությունը լինի: Այսինքն՝ ձևական կողմը չէ կարևորը, այլ յուրաքանչյուրի ներքին համոզմունքը, որ ինքն աշխատավարձի համար չի աշխատում, այլ հանուն կազմակերպական և ազգային նպատակի: Նման համոզմունքի առկայության դեպքում աշխատավարձ ստացողն անգամ շարունակում է կամավորական մնալ:

Կամավորականության մյուս առանձնահատկությունն այն է, որ դրա դիմաց ոչ ոք և երբեք չի կարող և չպետք է փոխհատուցում պահանջի: Արցախյան ազատագրական շարժման ծանրությունն իրենց ուսերի վրա կրել են հազարավոր կամավորականներ: Նրանցից շատերն այսօր հիասթափված են և հուսահատ: Ոմանք էլ վիրավորված են, որովհետև համարում են, թե իրենց արժանին չի հատուցվել: Կան նույնիսկ այնպիսիները, որոնք վաճառքի են հանում իրենց նախկին վաստակը, որպեսզի հասնեն ինչ-որ պաշտոնի կամ շահավետ գործ ունենան: Սա պատիվ չի բերում կամավորականներին:

Վերջապես, կամավորականությունը մի որակ է, որը պարբերաբար վերահաստատման կարիք ունի: Ծառայությունը հայրենիքին չի կարող ժամանակավոր լինել: Պատերազմի կամավոր մասնակիցը չի կարող անտարբեր լինել երկրում տիրող անօրինությունների և անբարոյության նկատմամբ: Ընդհակառակը, նա մյուսներից ավելի է պարտավոր ավարտին հասցնել հայրենիքի ազատագրման գործը, որը ներքին ճակատում իրականացնելը շատ ավելի դժվար է, քան արտաքին ճակատում:

Գաղտնիք չէ, որ Արցախյան պայքարի կամավոր մասնակիցներից ոմանք հանգամանքների բերումով այսօր հայտնվել են մեր հիշատակած վարձկանների ճամբարում: Որքան էլ մեծ լինի առանձին անհատների նախկին վաստակը, դրանով հնարավոր չէ արդարացնել նրանց այսօրվա անտարբերությունը և նահանջը ազգային դիրքերից: Ընդհակառակը, այդ վաստակը ավելի է մեծացնում նրանց պատասխանատվությունը: Նման օրինակները ցավալի են, սակայն չպետք է հուսահատեցնեն նրանց, ովքեր շարունակում են մնալ կամավորական դիրքերում: Դրանք չեն կարող հուսահատեցնել նաև կամավորականների երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին, որոնք շտապում են համալրել ազգային շարժման շարքերը:

ՀՈՌԻ ԵՐԵՎՈՒՅԹ

ԵՎՐԱՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Այս բառեզրի առաջացման համար, թերևս, առիթ դարձավ «Եվրատեսիլ» մրցույթը, որին այս տարի մասնակցում էր նաև Հայաստանը: Մրցույթի ընթացքում եվրոպական երկրների հայկական համայնքները ոգևորված քվեարկեցին Հայաստանը ներկայացնող Անդրեի օգտին: Ակնհայտ երևում էր, որ այն երկրները, որտեղ հայեր չկան կամ շատ քիչ են, Անդրեի կատարած երգին ընդհանրապես չարձագանքեցին: Փաստորեն, հակառակ երգի անորակությանը՝ «Եվրատեսիլ»-ը հայրենիքից հեռացած և արտերկրում ապրող հայերի համար դարձավ իրենց հայրենասիրությունը ցուցադրելու մի հարմար առիթ:

Հայտնի է, որ հեռուստալսարանի քվեարկությամբ անցկացվող մրցույթներն օբյեկտիվ չեն կարող լինել: Իրենց հայրենակցի օգտին են քվեարկում ոչ միայն արտերկրի հայերը, այլև սփյուռք ունեցող մյուս ժողովուրդները, ինչպես նաև ազգակից երկրները՝ միմյանց օգտին: «Եվրատեսիլ»-ում, փաստորեն, մրցում են ոչ թե երգիչները, այլ քվեարկողները: Ահա այս մրցույթում է, որ հայերը հաջողության հասան, բայց ոչ այն պատճառով, որ գրավեցին 8-րդ տեղը, այլ որովհետև թուրքերին «հաղթեցին»: Փաստ է՝ Եվրոպայում թուրքերը հայերից շատ ավելի շատ են, սակայն Հայաստանի ներկայացուցիչը բազմաթիվ երկրներում թրքուհուց շատ ձայն ստացավ: Պատճառը նման միջոցառումների նկատմամբ թուրքերի համեմատաբար առողջ անտարբերությունն է: Միայն Ֆրանսիայում էին նրանք հայերից ակտիվ, այն էլ որովհետև տեղի թուրքական համայնքը դեռ ոգևորված էր նախօրեին Ցեղասպանության ճանաչման դեմ կազմակերպված ցույցերի պատճառով:

Հայրենասիրության նման դրսևորումներ առկա են նաև ներհայաստանյան կյանքում: Հեռու չգնանք: Նույն «Եվրատեսիլ»-ից դեռ շատ առաջ Հ1-ը և «Նոր ալիքը» մի ամբողջ քարոզարշավ էին սկսել, թե որքան կարևոր է մեզ համար այդ մրցույթը, որ պետք է միասին լինենք, հաղթենք և, ի վերջո, ցույց տանք աշխարհին, թե մենք ով ենք: Արդյունքում՝ կարճ ժամանակահատվածում «Եվրատեսիլ»-ի շուրջ ոգևորության մի ալիք բարձրացավ, և, քանի որ Հայաստանում ապրողները չէին կարող քվեարկել իրենց երկրի օգտին, իրենց «հայրենասիրական պարտքը» կատարելու միակ ձևը դարձավ ողջ գիշեր հեռուստացույցի առջև նստած մրցույթը դիտելը:

Մեզնից ոմանք նույնպիսի զգացումներ ապրեցին, երբ ավելի վաղ Շառլ Ազնավուրի քավորությամբ մի հայ օրիորդ Եվրոպայի փոխմիսս դարձավ: Իսկ երբ Լևոն Արոնյանը նվաճեց աշխարհի գավաթը, նա նույնիսկ չկարողացավ այն Երևան բերել, որովհետև ստիպված եղավ թողնել Խանտիմանսիյսկի հայ համայնքին՝ որպես շնորհակալություն բուռն երկրպագության համար: Կարևոր չէ՝ իրենք Խանտիմանսիյսկում են ապրում, կամ որ Լ. Արոնյանը վաղուց «գերմանացի» է դարձել, կարևորը եռագույն դրոշակն է, ազգանվան «յան» վերջավորությունը և գոռոզանալու առիթը:

Պայմանական հայրենասիրության նման դրսևորումները միայն մեզ չեն բնորոշ. դրանք բավական տարածված են աշխարհում: Օրինակ՝ ֆուտբոլային կամ որևէ այլ սպորտաձևի ֆանատների համար հայրենասիրությունը երեսներն իրենց երկրի դրոշի գույներով ներկելն է և մարզադաշտում հնարավորինս բարձր բղավելը: Նրանք խորապես հավատացած են, որ հավաքականի հաղթանակը մեծ պատիվ է իրենց հայրենիքին, հետևաբար՝ իրենք շատ կարևոր գործ են անում: Հենց այսպիսի գիտակցությունն է, որ կոչել ենք եվրոպական տեսակի հայրենասիրություն՝ եվրահայրենասիրություն:

Այս մեդալը հակառակ երեսն էլ ունի:

Յուրաքանչյուր մարդ էությամբ հայրենասեր է և այս կամ այն չափով հակված է մասնակցել ազգային տարբեր խնդիրների լուծմանը: Ժողովուրդների հայրենասիրական մղումները մեծ ներուժ ունեն: Առանձին երկրներում և ամբողջ աշխարհում իշխողների համար գործնական կիրառություն գտած հայրենասիրությունը չափազանց վտանգավոր մի բան է, որը կարող է կործանել ցանկացած հակաժողովրդական իշխանություն: Իշխող վերնախավերը ի վիճակի չեն վերացնել հայրենասիրական զգացումները, սակայն կարող են կառավարել դրանք, ուղղորդել մարդկանց ազնիվ մղումները և ծառայեցնել իրենց նպատակներին:

Որպեսզի մարդկանց՝ ազգային խնդիրների մասին մտածելու հակվածությունը չկուտակվի և «վտանգավոր» դրսևորումներ չունենա, որպեսզի մարդիկ չկազմակերպվեն իրական ազգային խնդիրների շուրջ, արհեստականորեն ստեղծվում է միջազգային մրցակցության մթնոլորտ՝ աշխարհի կամ Եվրոպայի առաջնություն, գեղեցկության մրցույթ, «Եվրատեսիլ» կամ այլ անուններով, և այդ կերպ փորձ արվում պարպել հայրենասիրության բնազդը, հեռացնել այն ներքին խնդիրներից և իրական արտաքին սպառնալիքներից: Հատկապես համաշխարհային պատերազմներից հետո եվրոպական ժողովուրդների էներգիան սկսեցին դուրս մղել հենց մարզական միջոցառումների վրա: Պատահական չէ, որ ֆանատների ակումբներն արագ տարածվեցին հիմնականում հետպատերազմյան Եվրոպայում: Փաստորեն, երբ ֆրանսիական կամ գերմանական հայրենասիրությունն այլևս չէր օգտագործվում պատերազմական տրամադրություններ հրահրելու համար, այն սկսեցին սպառել ֆուտբոլային և այլ կրքեր բորբոքելով:

«Եվրատեսիլ»-ի նման միջոցառումներն օգտագործվում են նաև մշակութային կամ, ավելի ճիշտ կլինի ասել, հակամշակութային համահարթեցման նպատակով, մասնավորապես՝ ամենատարբեր արատավոր երևույթներ սերմանելու, որոշակի տաբուներ վերացնելու համար: «Եվրատեսիլ»-ում հաղթանակած ֆիննական խմբի ելույթը դրա վառ օրինակն է: Չնայած այն որակվեց սատանիզմի դրսևորում՝ մարդկանց մեծամասնությունը ստիպված եղավ այն մի քանի անգամ դիտել: Մեկ-երկու նման ելույթ, և դա երիտասարդ սերնդի համար կդառնա սովորական երևույթ և այլևս խորթ չի լինի ավագների աչքին: Ընդ որում, ֆիննական սատանաները կեղծիքով չհաղթեցին: Ոչ: Պարզապես եվրոպական երիտասարդության հոգեբանությունը լավ իմացող մասնագետները ճշգրիտ հաշվարկում են, թե ինչ «նորություն» է պետք մատուցել ամեն տեսակ անբարոյությունից կշտացած և զզված ջահելներին, որպեսզի նրանք իրենց «բողոքն» արտահայտեն դրա օգտին քվեարկելով:

Եվրահայրենասիրությունը հաճախակի են սկսել օգտագործել Հայաստանի իշխանավորները: Մեր Օլիմպիական կոմիտեն, օրինակ, բավականին գումարներ է ներդնում, որպեսզի հայկական դրոշի ներքո ինչ-որ մեկը, կարևոր չէ՝ հայ թե չեչեն, մասնակցի որևէ մրցույթի և չեմպիոն դառնա, կամ Աֆրիկայից բերված մի նեգր, եռագույն համազգեստ հագած, ֆուտբոլ խաղա: Փաստորեն, խոշոր վարձատրություն՝ կաշառք են խոստանում մարզիկներին՝ այս կամ այն մրցաշարից մեդալով վերադառնալու համար: Մինչդեռ ոչ ոքի մտքով չի անցնում անգամ չնչին գումար ներդնել, որպեսզի հայ երեխաները հանրակրթական դպրոցներում իրենց առողջությունը կոփելու բավարար հնարավորություն ունենան: Բոլորի առողջությունը հետաքրքիր չէ, չեմպիոնացուի վրա ծախսելն ավելի արդյունավետ է: Եվ սա, իհարկե, ներկայացվում է որպես հայրենանվեր մեծ գործունեություն, որը դարձել է մեր տարբեր տրամաչափի օլիգարխների սիրելի զբաղմունքը: Սակայն հայրենի սպորտը զարգացնելու նրանց տիտանական ջանքերը գրեթե անարդյունք են անցնում, եթե չհաշվենք շախմատը:

Շախմատի Հայաստանի հավաքականը միշտ էլ օլիմպիադաներում լավ է հանդես եկել և վաղ թե ուշ պետք է չեմպիոն դառնար: Սակայն մեր շախմատիստները դժվար թե պատկերացնեին, որ իրենց հաղթանակը մի օր կդառնա Սերժ Սարգսյանի նախընտրական քարոզչության մի կարևոր բաղադրիչ, իսկ փայլուն խաղացված պարտիաների մասին կխոսեն, թե՝ «Սերժն առավ»: Ո՞րն է եղել պաշտպանության նախարարի ներդրումը շախմատիստների հաղթանակում՝ հայտնի չէ, բայց որ նա փորձելու է առավելագույնս օգտվել մեր շախմատային եվրահայրենասիրությունից, ոչ ոք չի կասկածում: Չեմպիոններին նա արդեն արժանացրել է մականունավոր պաշտոնյաների («Լիսկայի») կողքին նստելու պատվին:

Իրականում ամենևին էլ կարևոր չէ՝ միջազգային այս կամ այն առաջնությունում մենք կհաղթենք, թե ոչ. երկու դեպքում էլ հայ ժողովրդի կյանքում, ըստ էության, որևէ դրական փոփոխություն տեղի չի ունենում: Հաղթանակները միայն գոռոզանալու առիթ են, իսկ պարտությունները՝ հիասթափության: Արհեստավարժ դառնալով՝ ժամանակակից սպորտը կորցրել է իր վեհությունը, վերածվել է շոուի և վիճակախաղի: Այլ բան է մարմնակրթության համընդհանուր զարգացումը և դրան նպաստող սիրողական սպորտը, որը Հայաստանում շատ անմխիթար վիճակում է: Կան բազմաթիվ այլ խնդիրներ, որոնց վրա պետք է իր ուշադրությունը սևեռի իրական հայրենասերը, իսկ նրան խաբում են «հայրենիքի պատիվը բարձր պահող» մարզիկներով, երգիչներով ու գեղեցկուհիներով: Տարբեր մրցումներում տեղի կամ անտեղի եռագույն ծածանող երիտասարդությունը հաճախ չի էլ մտածում այն մասին, որ հենց այդ նույն եռագույնի ներքո կաշառակեր դատավորներն անարդար վճիռներ են կայացնում, անվտանգության աշխատակիցները քաղաքական հետապնդումներով և ընտրակեղծիքներով են զբաղվում, իսկ դիվանագետները բանակցում են նվաստացուցիչ զիջումների մասին:

ՄԱՄՈՒԼԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌՈՒՍԱԿԱՆ ՖԱՇԻԶՄ

Վերջին շրջանում սափրագլուխների դաժան հարձակումների զոհ դարձան Ռուսաստանում բնակվող մեր բազմաթիվ հայրենակիցները: Այս փաստերը չէին կարող իրենց անդրադարձը չունենալ նաև Հայաստանում: Մեր մամուլը երևույթն իրավացիորեն որակեց որպես «ռուսական ֆաշիզմ», սակայն թերթերի մի մասը հարցն ավելորդ քաղաքականացրեց և այն աստիճան, որ շարունակում է ռուս ազգայնամոլների գործողությունները մեկնաբանել որպես «ֆորպոստի» և «ռազմավարական ստրուկի» նկատմամբ հատուկ ծրագրավորված քաղաքականություն:

«Հայերի չափ չեն սպանում ոչ մի ազգի ներկայացուցիչների, իսկ մեր կողմից վախկոտ ու մազոխիստական լռություն է: Միգուցե Հայաստանը Ռուսաստանի ստրատեգիական ստրուկն է, դրա համար ստրուկներին չեն ափսոսում և վարվում են այնպես, ինչպես ուզում են», «Լռում են նաև հայաստանյան այն քաղաքական ու հասարակական կազմակերպությունները, որոնք շատ նախանձախնդրորեն ու օպերատիվ կերպով արձագանքում են աշխարհի որևէ այլ երկրում, այդ թվում՝ Վրաստանում հայազգիների դեմ կատարվող ոտնձգություններին: Հայտնի չէ՝ ռուսների նկատմամբ հայերի թերարժեքության բարդո՞ւյթն է սրա պատճառը, թէ՞ կան այլ շարժառիթներ ևս, ասենք՝ ստրկամտության զգացումը կամ ռազմավարական դաշնակցի թանին թթու չասելու մտայնությունը». նման հրապարակումները բազմաթիվ են:

Ինչ-ինչ, բայց ռուսների նկատմամբ թերարժեքության բարդույթ հայերը երբեք չեն ունեցել: Ստրկամտությունը նույնպես հատուկ չէ Ռուսաստանում բնակվող մեր հայրենակիցներին: Այդ բոլոր դատարկ խոսքերը մեր մամուլի էջերում ընդամենն իշխանությունների ռուսամետությանը հասցեագրված քննադատություններ են: Դրանք բոլորովին էլ չեն բխում մեր հայրենակիցների անվտանգության մտահոգությունից, այլ պարզապես ողբերգական փաստերի հասարակ շահարկումներ են: Մենք նպատակ չունենք արդարացնելու ոչ Հայաստանում իշխողների ստորացուցիչ քաղաքականությունը, որի արդյունքում Ռուսաստանն իրեն մեր երկրի տերն է համարում, ոչ էլ Ռուսաստանի իշխանությունների հանցավոր անտարբերությունը և լուռ օժանդակությունը երկրում ընթացող սարսափելի գործընթացներին: Սակայն երևույթը ճշմարիտ գնահատելու համար նախ այն պետք է խորությամբ հասկանալ:

Ռուսաստանն այսօր կանգնած է մի մեծ՝ ժողովրդագրական (դեմոգրաֆիական) խնդրի առջև, ավելի պարզ՝ ռուս ազգը մահանում է, երկրում ռուսների թիվը գնալով պակասում է, որի հետևանքով խնդիր է ծագում աշխատուժի լրացման: ՌԴ իշխանությունները խրախուսում են դրսից աշխատուժի, այդ թվում՝ հայերի, ադրբեջանցիների, տաջիկների, վրացիների, չինացիների, թուրքերի ներհոսքը Ռուսաստան, ինչի արդյունքում փոխվում է ռուս հասարակության դիմագիծը, առաջանում է մշակութային բախում: Ռուս մարդուն, հասկանալի է, հաճելի չէ, երբ ասիական ինչ-որ երկրից մարդիկ, իր կարծիքով՝ իրենից ցածր և վատը, գալիս, բնակվում են իր երկրում ու իր կողքին, հաջողության են հասնում բիզնեսում, ամուսնանում ռուս կանանց հետ, իրենց երաժշտությամբ հասարակական վայրերում իր համար տհաճ աղմուկ են ստեղծում և այլն, և այլն: Բնականաբար, նման ամենատարբեր կենցաղային պատճառներով այդ զայրույթը կուտակվում է և, ի վերջո, հանգեցնում ցավալի իրողությունների՝ սափրագլուխների ի հայտ գալուն, շովինիստական և ռասիստական դրսևորումների, այլազգիների վրա հարձակումների ու սպանությունների:

Կրակը որոշ դեպքերում բորբոքում են նաև հենց իրենք՝ Ռուսաստանում ապրող այլազգիները՝ իրենց փողոցային, անվայել վարքագծով, մեծ ու փոքր խուլիգանություններով և այլն: Այս ամենը, իհարկե, ոչ մի կերպ չի արդարացնում սքինհեդներին և նրանց գործողությունները. դա հասարակության տականքն է, որ կարող է լինել ցանկացած երկրում: Նույն ինքը Եվրոպան, որ Ռուսաստանի նման ժողովրդագրական խնդիրներ ունի, բավականին անհանդուրժող է ասիացիների, հատկապես՝ թուրքերի և արաբների նկատմամբ: Սակայն եվրոպական երկրներում բռնության դեպքերը համեմատաբար քիչ են և այսչափ ընդգծված ու բացահայտ չեն, ինչպես Ռուսաստանում: Պատճառը, թերևս, Ռուսաստանում ստեղծված անկառավարելի իրավիճակն է: Ի տարբերություն եվրոպական երկրների՝ Ռուսաստանում հասարակության վրա պետական հսկողությունը շատ ավելի թույլ է, եթե, իհարկե, կա ընդհանրապես, ոստիկանությունն ամենևին արդյունավետ չի գործում, որի հետևանքով էլ ռուս սափրագլուխներն ակնհայտ ազատ են գործում, ավելի լկտի և ավելի վայրագ:

Հարկ է նաև շեշտել, որ նրանց գործողությունները, վստահ, միայն հակահայկական բնույթ չունեն, այլ ուղղված են ինչպես հայերի, այնպես էլ Ռուսաստանում ապրող մյուս օտարազգիների դեմ: Երբեմն, իրոք, կարող ես համաձայնել, որ Ռուսաստանը թքած ունի ֆոր-պոստ Հայաստանի վրա և կարող է մեզ հետ վարվել, ինչպես կամենա, սակայն սափրագլուխների գործողությունները պատճառաբանել դրանով անհեթեթ է. Չինաստանը հաստատ ՌԴ-ի ֆոր-պոստը չէ, բայց չինացիներն էլ հայերի նման Ռուսաստանում այդ նույն խնդիրներն ունեն: Վրաստանն էլ ԱՄՆ-ի դաշնակիցն է, բայց վրացիները, ինչպես նաև ադրբեջանցիները ռուսների համար ընդամենը կովկասյան ազգության ներկայացուցիչներ են:

Վերջերս, ճիշտ է, Ռուսաստանը փորձեր է անում լուծել իր այս ներքին, ժողովրդագրական խնդիրը և դրանից բխող հետևանքները: Ընտանեկան զույգերին մեծ գումար են խոստանում՝ երկրորդ երեխան ունենալու համար, բավականին ակտիվ է դարձել ռուս եկեղեցին, որը փորձում է տարբեր ելույթներով, ինչ-ինչ փաստաթղթեր ընդունելով,

հասարակության մեջ բարոյական, ընտանեկան արժեքներ սերմանել և այլն: Գուցե այս կերպ ռուսներին, իրոք, հաջողվի լուծել իրենց խնդիրները, և արդյունքում դրանց հետ կապված մեր խնդիրներն էլ վերանան, սակայն բացառված չէ, որ դրանք պարզապես անհույս և անարդյունք փորձեր լինեն:

Այնպես որ, այս դաժան իրողության հետ պետք է հաշվի նստի ամեն ոք, ամեն ընտանիք, որ, սոցիալական պայմաններից ելնելով, մեկնում է Ռուսաստան՝ աշխատանք և ապրուստ գտնելու, քանի որ այնտեղ իր ստանալիք աշխատավարձի հետ փաթեթով նրան տրվելու է նաև սափրագլուխների կամ այլ հանցագործների զոհը դառնալու այս սպառնալիքը: Եվ գուցե ավելի ճիշտ կլինի ռուսների հասցեին լուտանքներ թափելուց առաջ և փոխարեն մեր զայրույթն ու բողոքն ուղղել մեր իսկ իշխանությունների դեմ, որոնք ոչինչ չեն անում՝ Հայաստանում կյանքի տարրական պայմանները բարելավելու և աշխատատեղեր ստեղծելու համար, որպեսզի հայ մարդը չբռնի արտագաղթի ճանապարհը և երբեք ու ոչ մի երկրում օբյեկտիվ թե ոչ օբյեկտիվ, արդարացի թե ոչ արդարացի պատճառներով չկանգնի նման վտանգի առջև:

ՀԱՅԵՐԸ՝ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱՐԱՍՅԱՆ ԴԵՐՈՒՄ

Իրաքի դեմ ԱՄՆ-ի մղած պատերազմը զուգորդվեց հզոր տեղեկատվական քարոզչությամբ: Պատերազմը ներկայացվեց իբրև պայքար ոչ միայն միջազգային ահաբեկչության դեմ, այլև հանուն իրաքյան ժողովրդի ազատության: Եթե նախքան պատերազմն ավելի շատ խոսվում էր զանգվածային ոչնչացման զենքեր հայտնաբերելու մասին, ապա պատերազմից հետո այդ մասին մոռացան, և գլխավոր շեշտը դրվեց Սադամ Հուսեյնի բռնատիրական վարչակարգը ժողովրդավարականով փոխելու անհրաժեշտության վրա:

Իրաք ներխուժելու հենց առաջին իսկ վայրկյանից Միացյալ Նահանգները խնդիր էին դրել այդ երկրում տարածել իրենց քաղաքական և մշակութային արժեքները: Այդ գործում նրանց հենարան էր անհրաժեշտ, որը կվկայեր, որ ամերիկացիների օգնությամբ ժողովուրդն արդեն սկսել է ճաշակել ազատությունը: Նման հենարանի դերը, սովորաբար, կատարում է երիտասարդությունը, որին համեմատաբար հեշտ է գայթակղել նորություններով և արգելված պտուղներով: Սակայն Իրաքում շիա-արաբները, քրդերը բավական ավանդապաշտ դուրս եկան, սյունի-արաբներն էլ հալածված վիճակում էին, և այնպես ստացվեց, որ ամերիկացիների բերած ազատությունների քարոզիչների թվում անհամեմատ մեծ եղավ հայ երիտասարդների թիվը:

Օկուպացիայի առաջին օրերին արևմտյան հեռուստաալիքները պատմում էին ինչ-որ ազատությունների երևան գալու մասին, և առաջին օրինակներից մեկը, որ բերվում էր, Բաղդադում մի ռոք խմբի հայտնվելն էր, ռոք խումբ, որն այդ ժամանակ բաղկացած էր... հայերից: Ավելի ուշ անցկացված գեղեցկության մրցույթում «միսս Իրաք» տիտղոսին է արժանանում 23-ամյա հայուհի Թամարա Գորեգյանը: Թամարան, ում իրաքցիներն անմիջապես հռչակել էին անհավատների թագուհի, մրցույթից չորս օր անց, չդիմանալով շրջապատի ճնշումներին, թագից հրաժարվում է: Սակայն երբ թագից հրաժարվում են նաև երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցրած արաբ «գեղեցկուհիները», այն բաժին է հասնում չորրորդ տեղը գրաված մասնակցին՝ Սիլվա Սահակյանին: Ճիշտ է, վերջինս իր նախորդների նման չի հրաժարվում թագից, սակայն ստիպված է լինում թաքնվել: Նման օրինակները շատ են: Բոլոր դեպքերում էլ, փաստորեն, հայ երիտասարդները, որ իրենց եվրոպացի են համարում, ավելի մեծ հակում են ցուցաբերում արևմտյան նորաձևության և գայթակղությունների նկատմամբ: Նրանք կամա թե ակամա գործիք են դառնում ամերիկացիների ձեռքին՝ իրենց քարոզչական նպատակներն իրականացնելու ճանապարհին:

Վտանգ կա, որ հայերը կրկին կարող են գործիք դառնալ ամերիկացիների ձեռքին, եթե վերջիններս մի օր պատերազմ սանձազերծեն նաև Իրանի դեմ և հաջողության հասնեն: Եվ դա չնայած այն բանի, որ այսօր Իրանի հայությունը՝ որպես մահմեդական պետությունում ապրող քրիստոնյա համայնք, իրեն շատ էլ լավ է զգում և իր ներհամայնքային կյանքում կարող է չհետևել այն սահմանափակումներին, որոնք պարտադիր են մահմեդականների համար: Սակայն եթե մի օր արտաքին ուժի կողմից մահմեդական վարչակարգը տապալվի և աշխարհիկ ազատություններ սահմանվեն, արդյո՞ք Թեհրանում բնակվող հայերը չեն ուրախանա, որ այլևս ստիպված չեն գլխաշոր կրել, ազատ կարող են ոգելից խմիչք օգտագործել և MTV-ի տեսահոլովակները դիտել:

Բոլորովին բացառված չէ, որ Իրանին պատերազմով սպառնացող Միացյալ Նահանգներն այսօրվանից փորձեն ներքին շարժում ձևավորել մահմեդական վարչակարգի դեմ, և շատ հավանական է, որ նրանք առաջին հերթին այդ գործում փորձեն ներգրավել Իրանում բնակվող տարատեսակ փոքրամասնությունների, մասնավորապես՝ քրիստոնյա հայերի ներկայացուցիչներին: Ուստի՝ շատ կարևոր է, որ հայերն Իրաքում, Իրանում կամ որևէ այլ երկրում խորապես գիտակցեն «արևմտյան ազատության» իրական նշանակությունը և ԱՄՆ-ի համար «հինգերորդ շարասյան» դեր չստանձնեն:

Կիսամերկ աղջիկների մրցույթը եվրոպացիների և ամերիկացիների համար սովորական երևույթ է դարձել, ցանկասեր երաժշտությունը նրանք արվեստ են համարում, հանդուրժում են բազմաթիվ արատներ՝ դրանք վերապահելով մարդու անձնական իրավունքին: Իսկ մահմեդականի, և ինչո՞ւ միայն մահմեդականի, յուրաքանչյուր հավատացյալի համար այդ ամենն անբարոյություն և սրբապղծություն է: Պարզապես Արևմուտքում ավելի շատ են հեռացել հավատքից, մոռացել և կենցաղից դուրս են մղել քրիստոնեական ավանդույթները: Մահմեդական ժողովուրդները թշնամաբար են ընկալում ոչ թե եվրոպացիներին կամ ամերիկացիներին, ոչ թե քրիստոնյաներին, այլ անհավատներին, որոնք իրենց հետ անբարոյություն են բերում: Որքան էլ ամերիկյան գովերգվող արդարադատությունը խստորեն պատժի Աբու Գրեյթի բանտապահներին, միևնույն է, իրաքցիների համար այդ ստահակներն ամերիկյան հասարակության և այնտեղ իշխող ստոր բարքերի ծնունդ են: Ահա թե ինչու մահմեդական երկրներում բնակվող մեր հայրենակիցները մի քիչ ավելի շատ պետք է մտածեն այդ երկրներում արևմտյան արժեքները քարոզելուց առաջ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԱՎԱՌԱՄՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐՕՐԻՆԱԿ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ

«Առավոտ» թերթի մայիսի 26-ի համարում տպագրվել է մի տարօրինակ խմբագրական՝ «Այաթոլլաներին սպասելիս» վերտառությամբ: Դրանում հեղինակը՝ խմբագիր Արամ Աբրահամյանը, իրավացիորեն գանգատվում է, որ Հայաստանի ապագա խորհրդարանում ևս մեծամասնություն են կազմելու իշխանության կամակատար գործարարները: Նրա կարծիքով, ևս մի հլու-հնազանդ և բացարձակապես ապաքաղաքական խորհրդարանի կերտումը հղի է մեծ վտանգով թե ժողովրդի և թե իշխանության համար: Ո՞րն է այդ վտանգը, որ միաժամանակ սպառնում է և իշխանությանը, և ժողովրդին: Խմբագիրը պարզաբանում է.

«Երբ հասարակությունը մարգինալացվում է և ամբողջությամբ դուրս մղվում երկրի վերաբերյալ որոշումներ ընդունելու (իշխանություն ձևավորելու) դաշտից, երբ համընդհանուր ծախվածությունը, սուտը, կեղծիքը, ցինիզմը դառնում են կյանքի նորմ, երբ «պատասխանատու» եթերը լցված է պաշտոնական «փչոցներով», վաղ թե ուշ, գուցե 1 տարուց, իսկ գուցե՝ 10, դա բերում է պայթյունի: Ի հայտ են գալիս մարդիկ, որոնք այդ ամենից հեռու են, չեն կեղտոտվել, վարում են ասքետիկ կյանք (կամ ձևացնում են, որ այդպիսիք են), և հուսալքված, ոչ մեկին չհավատացող ժողովուրդը նետվում է նրանց գիրկը: Տեղի է ունենում մոտավորապես այն, ինչ կատարվեց հարևան Իրանում 1978-ին:

Այդ սցենարի դեպքում մեր, պայմանականորեն ասած, «այաթոլլաները» (մոտավորապես պատկերացրեք Ժիրայր Սեֆիլյանի կերպարը, չեմ պնդում, որ հենց ինքն է լինելու) հաստատում են կարծր համակարգ և շատացնում են արգելքները՝ հասարակությունը մաքրելու և առողջացնելու ձգտումով (ազնիվ կամ անազնիվ՝ այլ հարց է): Արդյունքում՝ հասարակությունը չի մաքրվում, այսօրվա բացահայտ ախտերը դառնում են թաքուն և ավելի վտանգավոր, իշխանական համակարգն ավելի շատ է թաղվում կոռուպցիայի մեջ, և, գումարած դրան, բացի պաշտոնական «փչոցներից», եթերում ոչ մի բան չի հնչում և թերթերում չի տպագրվում: Այսօրվա իշխանավորները գուցե գնդակահարվեն, բայց դա փոքր սփոփանք է:

Ահա այդ ժամանակ երանի կտանք այսօրվա ռեժիմին»:

Ահա այսպիսի «մարգարեություն» և մեծ բոբ, որից պետք է վախենան թե ժողովուրդը, թե իշխանությունը: Միաժամանակ ինչպիսի ատելություն և վախ «չկեղտոտված», «ասքետիկ կայնք վարող» և «առողջացման ձգտող» մարդկանց նկատմամբ: Հարց է ծագում, թե ինչո՞ւ է հեղինակը համոզված, որ հասարակությունը երբեք չի մաքրվելու, որ աղտերն անպայման թաքուն և ավելի վտանգավոր են դառնալու: Սովորաբար, այդպես են մտածում նրանք, ովքեր աշխարհը և մարդկանց իրենցով են չափում և, որպեսզի չամաչեն սեփական աղտոտվածությունից, ենթադրում են, թե բոլոր մյուսներն էլ առնվազն նույնքան կեղծավոր և անմաքուր են: Իրականում նման մարդիկ չեն էլ ուզում, որ հասարակությունը մաքրվի և առողջանա: Միգուցե դա է պատճառը, որ Ա. Աբրահամյանը համոզված է, որ ներկա, թեկուզ կոռումպացված համակարգն ավելի նախընտրելի է, քան այն ենթադրյալ «կարծր համակարգը», որը կարող է ազատել հայ ժողովրդին այսօր իրեն պարտադրված բազմաթիվ անբարո երևույթներից:

Այո, Հայաստանում ձևավորված հակաժողովրդական վարչակարգը վաղ թե ուշ պետք է իր տեղը զիջի ազգային իշխանությանը: Բնական է, որ դա չի կարող տեղի ունենալ առանց ժողովրդի գործուն մասնակցության: Այս մասով «մարգարեությունը» միանգամայն իրատեսական է, սակայն Արամ Աբրահամյանը չի հավատում, որ ժողովուրդը երբևէ կարող է գիտակցական և կազմակերպված պայքար մղել հանուն մաքուր և առողջ հասարակության: Նրա կարծիքով, միայն հուսահատության պատճառով մարդիկ կարող են «նետվել ասքետ այաթոլլաների գիրկը»: Իսկ մենք համոզված ենք, որ հայերը, ի տարբերություն շատ ուրիշ ժողովուրդների, այնքան էլ կառավարելի չեն, մասնավորապես արևմտյան արժեքների գաղափարախոսների կողմից: Փոխարենը՝ մեր ժողովուրդն օժտված է ազգային բարձր ինքնագիտակցությամբ և կազմակերպական հզոր ներուժով, որի ականատեսն ենք եղել նույնիսկ այնպիսի ժամանակներում, երբ զուրկ ենք եղել պետականությունից: Արամ Աբրահամյանի դժգոհությունը գալիս է այն գիտակցությունից, որ հայ ժողովուրդը երբեք չի վազելու իր (Արամ Աբրահամյանի) դավանած արևմտյան արժեքների հետևից, իսկ ազգային գաղափարները նրան միշտ ոգևորելու են:

Բնական է, որ հանրային կյանքի ինքնամաքրումը չի կարող տեղի ունենալ առանց որոշ սահմանափակումների: Արգելքները վերաբերելու են ոչ միայն «Առավոտ»-ի խմբագրականում հիշատակված ախտերին, այլև դրանք ծնող բարոյական արժեքների և քաղաքական սկզբունքների ներկա համակարգին ամբողջությամբ: Հայտնի է, որ այդ ամենը սնուցվում է օտար աղբյուրներից և մեր հասարակություն է թափանցում գավառամիտ և օտարամոլ մտավորականության միջոցով: Սա է Արամ Աբրահամյանի ու մյուս արևմտամետ լրագրողների, քաղաքական գործիչների և այլոց վախի իրական պատճառը:

Նրանք վախենում են իրական փոփոխություններից: Գիտեն, որ իրենք այս իշխանությունների հետ նույն արժեքների կրողն են և չեն ուզում, որ վերջիններիս տապալումը նաև այդ արժեքների վերացում նշանակի: Նրանք տրտնջում են ոչ թե «հասարակության», այլ սեփական «մարգինալացումից»: Իրենց թվում է, որ եթե այսօր ավելի մեծ դերակատարություն ունենային պետության կյանքում, կկարողանային կանխել ազգային ուժերի հաղթանակը: Այդ պատճառով էլ «չկեղտոտված, ասքետիկ մարդկանցով» վախեցնում են իշխանություններին, որպեսզի վերջիններս զիջեն իշխանության մի մասը, և իրենք համատեղ պայքարեն հայ ժողովրդի և նրա իրական առաջնորդների դեմ, որոնց անունները դեռ չգիտեն, միայն կռահում են, բայց որոնց շվաքսից արդեն դողում են:

«ԱԶԱՏԱԳՐՈՒՄ»
ազգային - քաղաքական
պարբերական

Լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձիք՝ Արմեն Եղյան, Մանվել Կարապետյան, Արմեն Աղայան. Հասցեն՝ Երևան, Հանրապետության նրբ. 31 թողարկման պատասխանատու՝ Արմեն Աղայան: Տպաքանակ՝ 500 օրինակ: Տարածվում է անվճար՝ «Ազատագրումի» ընթերցողների ակումբի մշտական և նոր անդամներին: